ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևան

Սեպտեմբեր 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....1

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ....2
1.1 Նախաբան....2
1.2 Մակրոտնտեսական զարգացումները վերջին տաս տարիների ընթացքում....3
1.3 Ֆինանսական հատված....8
1.4 Արժեթղթերի շուկա....12
1.5 Վճարահաշվարկային համակարգի զարգացման հիմնական միտումները....14

ԳԼՈՒԽ 2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՍՊԵԿՏՆԵՐ....20
2.1 Ընդհանուր իրավական դաշտը....20
2.2 Ֆինանսական հաստատությունների դերը վճարումների բնագավառում....27
2.3 Ֆինանսական հաստատությունների դերը արժեթղթերի բնագավառում....32
2.5 Բանկային համակարգի կարգավորում....37
2.6 Այլ մասնավոր և հասարակական ոլորտի մասնակիցների դերը....42

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՎՃԱՐԱՄԻՋՈՑՆԵՐ....44
3.1 Կանխիկ վճարումներ....44
3.2 Անկանխիկ վճարային գործիքներ....45
3.3 Պետական անկանխիկ վճարումներ....51

ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾՈՂ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ....54
4.1 ՀՀ ԿԲ վճարային համակարգեր....54
4.2 Փոքրածավալ վճարումների համակարգեր....65
4.3 Համակարգեր միջազգային փոխանցումներ իրականացնելու համար....68
4.4 Արտարժույթի առուվաճառքի վճարահաշվարկային համակարգեր....70
4.5 Հիմնական նոր նախագծեր....72

ԳԼՈՒԽ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐԸ, ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ....73

Գործիքները....73
5.1 Արժեթղթերի ձևերը....73
5.2 Արժեթղթերի տիպերը....73
5.3 Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը....74
5.4 Սեփականության իրավունքի փոխանցումը....74
5.5 Արժեթղթերի գրավադրումը որպես ապահովության միջոց (երաշխիք)....74
5.6 Կորած, գողացված կամ վերացված արժեթղթերի մշակումը....74
5.7 Պահառուների նորմատիվ իրավական դաշտը....75

Շուկայական կառուցվածքը և համակարգերը....75
5.8 ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկա....75
5.9 ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկա....76
5.10 Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող գործարքներ....77
5.11 ՀՀ պետական պարտատոմսերի շուկային զարգացման միտումները....77

ԳԼՈՒԽ 6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ....78
6.1 Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ (ՊԱՀՀՀ)....78
6.2 Կորպորատիվ արժեթղթերի հաշվարկա-քլիրինգային համակարգեր....83

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Նախաբան

Խորհրդային միության փլուզումից հետո փլուզվեց նաև նախկինում գործող միասնական ֆինանսական համակարգը, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առջև ծառացրեց մի շարք պրոբլեմներ, մասնավորապես՝ հանրապետությունում ձեռնարկությունների և կազմակերպությունների փոխադարձ հաշվարկների գծով մեծ չափերի հասնող չվճարումները, միջբանկային հաշվարկները կանոնակարգող իրավական դաշտի բացակայությունը, բանկային համակարգի տեխնիկական թերի հագեցվածությունը, էներգետիկ ճգնաժամը, փոստային առաքումների համակարգի կաթվածահար վիճակը և այլն:

1993թ.-ից սկսած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տարվել են զգալի աշխատանքներ՝ ուղղված վերոհիշյալ պրոբլեմների լուծմանը և նորաստեղծ անկախ հանրապետությունում նոր պայմաններից ելնելով՝ նոր վճարահաշվարկային հարաբերությունների կերտմանը, միջբանկային հաշվարկների կատարելագործմանը:

1993-1996թթ. մշակվել է ֆինանսական համակարգը կարգավորող հիմնական իրավական դաշտը: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքների ընդունումը նպաստեց ՀՀ բանկային համակարգի ձևավորմանը և զարգացմանը:

1997թ. որոշակի փոփոխություններ իրականացվեցին բանկային վերհսկողության բնագավառում. CAMELS համակարգում նոր՝ «S» տարրի ներմուծումը (չուկայական փոփոխությունների նկատմամբ բանկի զգայունության աստիճանը), ինչպես նաև UBPR-ի կատարելագործումը, իրացվելիության կառավարման նոր գործիքի՝ GAP-ի ներմուծումը: Նույն թվականին Կենտրոնական բանկը միացել է S.W.I.F.T. համակարգին:

1998թ. ՀՀ ԿԲ կողմից շարունակվեցին «Չեկերի մասին» օրենքի լրամշակման աշխատանքները, որի նպատակն էր կարգավորել չեկերով իրականացվող գործարքները: ՀՀ դրամի կայունացման նպատակով ամրագրվել է ներգրաված միջոցների դիմաց պահուստավորումը միայն ՀՀ դրամով իրականացնելու պահանջը: Գերմանիայի Դաշնային հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված «ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի հիման վրա ԳԴՀ-ի Վերականգնման վարկերի բանկի (KfW) և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքվել է վարկային պայմանագիր:

1999թ. բանկային համակարգի համար կայունության ու հուսալիության փորձության տարի էր, քանի որ հաջողվեց կանխել ՌԴ ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի բանկային համակարգի վրա: Ներդրվեցին հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներ, որոնք համապատասխանում էին միջազգայնորեն ընդունված ստանդարտներին: Փոփոխություններ իրականացվեցին նորմատիվային ստանդարտներում:

2000թ. հիմնադրվել է «Արմենիան Քարդ» ՓԲԸ Միասնական պրոցեսիգային կենտրոնը: Վարկային ռիսկի կառավարման նպատակով ԿԲ-ի կողմից մշակվել է «Բանկերի վարկային քաղաքականություն մեթոդական ուղեցույցը»: Խստացվել և վերանայվել են բանկերի ռեյտինգավորման CAMELS համակարգի որոշ ցուցանիշների սահմանաչափերը:

2000թ. սկսած ընդունվեցին նաև «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Բանկերի և վարկային

կազմակերպությունների սնանկության մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին», «Վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցման մասին» ՀՀ օրենքները, որն էլ ավելի նպաստեց ֆինանսական համակարգի ձևավորմանը:

2001թ. Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Բանկերի սնանկության մասին» ՀՀ նոր օրենքը, որի արդյունքում ներմուծվել են բանկի անվճարունակության օբյեկտիվ չափանիշներ, հստակեցվել է «բանկի սնանկություն» հասկացությունը: Կենտրոնական բանկի և KfW-ի միչև ստորագրվել է լրացուցիչ միջոցներ ներգրավելու պայմանագիր, որն ուղղվելու էր փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը:

2003թ. հուլիսի 1-ից օրենսդրական փոփոխությունների արդյունքում բանկերը սկսել են իրականացնել ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի երաշխիքային վճարումները: Շարունակվել են աշխատանքներ իրականացվել ՀՀ հաշվապահական հաշվառումը, Միջազգային հաշվապահական ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով: 2003թ.-ից ՀՀ ԿԲ-ում գործում է վարկային ռեգիստրը:

Բանկային համակարգի նկատմամբ վստահության բարձրացման նպատակով 2004թ. ընդունվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը: Նույն թվականին ՀՀ ԿԲ-ն դիրքորոշում է ընդունել ՀՀ բանկային համակարգը Բազելյան 2-րդ համաձայնագրի պայմաններին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Բանկային վերահսկողության Բազելյան հիմնարար սկզբունքների ներդրման, բանկերում կորպորոտիվ կառավարման, համախմբված (կոնսոլիդացված) վերահսկողության իրականացման սկզբունքների ներդրման նպատակով 2005թ. որոշակի փոփոխություններ են իրականացվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում: Նույն թվականին ընդունվեց «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միասնական համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը, որի արդյունքում ֆինանսական համակարգի վերահսկողության գործառույթը ամբողջությամբ վերապահվեց ՀՀ ԿԲ-ին: Կենտրոնական բանկում ստեղծվեց Ֆինանսական դիտարկումների կենտրոն, որի հիմնական գործառույթը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարն է:

1.2 Մակրոտնտեսական զարգացումները վերջին տաս տարիների ընթացքում

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական համակարգը, ինչպես նախկին ԽՍՀՄ-ի բոլոր երկրները, խորը ճգնաժամ ապրեցին: Ընդ որում, ՀՀ տնտեսության շրջափակումը և տրանսպորտային ճանապարհներից մեկուսացումը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության խորհրդային տարիներից որդեգրած անարդյունավետ արտահանման ուղղվածությունը (առկա էին հսկայական արդյունաբերական համալիրներ, որոնք աշխատում էին ներմուծվող հումքի վրա և իրենց արտադրանքն ամբողջովին արտահանվում էր) իրավիճակն ավելի վատթարացրեց: Այնուհանդերձ, շնորհիվ ժամանակին սկսված բարեփոխումների հաջող ընթացքի, 1994թ. Հայաստանը մտավ տնտեսական վերելքի փուլ:

1.2.1 Իրական հատված

Վերջին տաս տարվա զարգացումների արդյունքում Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակը զգալիորեն բարելավվեց, գրանցվեց տնտեսության հիմնական ճյուղերի ակտիվացում, ինչպես նաև բնակչության եկամուտների զգալի աճ: Ձեռքբերված մակրոտնտեսական կայունության մասին է վկայում առաջին հերթին այն փաստը, որ վերջին

ինը տարիներին արձանագրվող գնաճը չի գերազանցել տարեկան 3%: Բացառություն են կազմում 2003 և 2006թթ. բարձր գնաճը[1], երբ առկա էր առաջարկի գնաճ, որի զսպումը ընդհանուր մակրոտնտեսական կայունության տեսանկյունից չէր խրախուսվում:

Տնտեսական աճի միջին ցուցանիշը 1996-2006թթ. կազմել է 9.1%՝ զգալիորեն արագանալով վերջին 5 տարիներին (2002-2006թթ. միջին տնտեսական աճը 13% էր): Ընդ որում, տնտեսության ճյուղային կառուցվածքում վերջին տաս տարվա մեջ աչքի է ընկնում շինարարության ճյուղի տեսակարար կշռի ավելացումը՝ պայմանավորված հիմնականում արտաքին ֆինանսական ներհոսքով՝ ի դեմս օտարերկրյա ներդրումների և մասնավոր տրանսֆերտների, ինչպես նաև բնակչության եկամուտների շարունակական ավելացման:

Որոշակի դրական տեղաշարժեր են արձանագրվել գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում:

Արդյունաբերության ճյուղում վերջին տաս տարիների ընթացքում նկատվել է զգալի կառուցվածքային տեղաշարժեր: Այսպես, սկզբնական շրջանում արդյունաբերության աճը ապահովվել է հիմնականում ներմուծման փոխարինիչների[2] արտադրության աճով: 2000-2003թթ. արդյունաբերության աճի բարձր տեմպը պայմանավորված էր ոսկերչական իրերի արտադրության (մասնավորապես՝ ադամանդագործության) ճյուղի բուռն զարգացմամբ, որը 2004-2006թթ. անկում է ապրել ադամանդի համաշխարհային շուկայի կոնյուկտուրայի փոփոխման արդյունքում: Մյուս կողմից, սկսած 2000թ. ակտիվորեն զարգացել են հանքագործական և մետաղագործական արդյունաբերության ճյուղերը՝ պայմանավորված համաշխարհային շուկայում գունավոր մետաղների գների աճի պարագայում այս ենթաճյուղերում իրականացվող մեծածավալ ներդրումներով: Կայուն բարձր աճ է գրանցվում նաև սննդի արդյունաբերության և շինանյութերի արտադրության գծով: Էներգետիկայի ոլորտում վերջին չորս տարիներին արագ ընթացող գազաֆիկացման գործընթացի շնորհիվ գազի բաշխման ծավալները ավելանում են տարեկան շուրջ 30%-ով:

2006թ. ՀՆԱ-ի կառուցվածքում առավել բարձր կշիռ են ունեցել ծառայությունները (31.2%) և շինարարությունը (24.5%), մինչդեռ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար շուրջ 18%:

Ծառայությունների ճյուղը նույնպես կայուն բարձր աճի շնորհիվ զգալի նպաստել է ՀՆԱ-ի ավելացմանը: Ընդ որում, առավել արագ այստեղ զարգանում են կապի և տրանսպորտի ծառայությունները՝ պայմանավորված կապի ոլորտում երկու խոշոր ձեռնարկությունների կողմից իրականացվող մեծածավալ ներդրումների և հետևապես՝ ծառայությունների տեսականու և ծավալների ավելացմամբ, իսկ տրանսպորտի ոլորտում՝ վերջին չորս տարիներին ակտիվորեն իրականացվող ճանապարհաշինարարության և գազաֆիկացման գործընթացներով:

Զգալիորեն ավելացել է նաև զբոսաշրջության ոլորտը, որի համար խթան հանդիսացավ 2001թ., երբ նշվում էր Հայաստանում Քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման 1700-ամյակը: Այս ոլորտում նկատվում է շարունակական աճ, որի հետևանքով արագացված տեմպերով զարգացել են նաև դրա հետ կապված ենթակառուցվածքները՝ հյուրանոցային համալիրը, հասարակական սննդի ոլորտը, ինչպես նաև առողջարանային և հանգստյան տների ոլորտները:

[1] 2003թ. արձանագրված 8.6% գնաճի 5.6 տոկոսային կետը պայմանավորված էր սպառողական զամբյուղի հացամթերքների գների աճով, իսկ վերջինս ամբողջությամբ կրել է համաշխարհային շուկայում գրանցված հացահատիկի գների աճի ազդեցությունը: 2006թ. գրանցված 5.2% գնաճը՝ հիմնականում արդյունք է եղել անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով մրգի և բանջարեղենի սակավ բերքի արդյունքում վերջիններիս գների աճի:

[2] Հիմնականում զգալի աճ է արձանագրվել պատրաստի սննդի թողարկման ծավալներում

Տնտեսական զարգացմանը զուգընթաց էական փոփոխություններ են արձանագրվել համախառն պահանջարկի կառուցվածքում, ուր մասնավոր սպառման նվազմանը զուգընթաց ավելացել է մասնավոր ներդրումների տեսակարար կշիռը: Ընդ որում, վերջին հինգ տարիների ընթացքում արձանագրվել է մասնավոր ներդրումների աճի տեմպի արագացում: Հայաստանի տնտեսության մեջ ընդհանուր խնայողությունները տարիներ շարունակ բացասական մեծություն են կազմել: Իրավիճակը շրջադարձային եղավ սկսած 2002թ-ից, երբ առաջին անգամ տնտեսությունում գրանցվեց խնայողությունների դրական մեծություն:

1.2.2 Դրամավարկային հատված

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանը զգալի ձեռքբերումներ է ունեցել ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ դրամավարկային բնագավառներում: Այդ ժամանակահատվածում իրականացրած տնտեսական բարեփոխումների միջոցով հաջողվել է արդյունավետ կերպով կառավարել համախառն պահանջարկը, որի արդյունքում 1998-2006թթ-ին իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը հասցվել է՝ շուրջ 11%-ի, իսկ գնաճը՝ միջին հաշվով 3%-ի:

Որպես անցումային երկիր, սկզբնական շրջանում ՀՀ կենտրոնական բանկը որդեգրեց դրամավարկային քաղաքականության ծավալային կարգավորման ռազմավարությունը՝ գլխավոր նպատակ ունենալով գների կայունության ապահովումը: Դրամավարկային հիմնական ցուցանիշներից փողի զանգվածն անցած 10 տարիների ընթացքում միջին հաշվով աճել է շուրջ 25%-ով, որն ապահովվել է հիմնականում զուտ արտաքին պահուստների ավելացման հաշվին:

Նշված տարիներին ՀՀ ԿԲ-ն, ծավալային կարգավորման քաղաքականությանը զուգընթաց, մեծ ուշադրություն է դարձրել նաև տոկոսադրույքին: Դրան նպաստել է նաև ՀՀ ԿԲ անուղղակի գործիքների մշտական զարգացումն ու կատարելագործումը, ինչպես նաև նոր դրամավարկային գործիքների ներդրումը: Մասնավորապես, ներառված հիմնական գործիքներից բացի (ռեպո համաձայնագրեր, բաց շուկայական գործառնություններ, ճշգրտող գործիքներ) 2003թ.-ի վերջից կիրառվել է արժութային սվոպ գործիքը, իսկ 2005թ-ից ՀՀ ԿԲ-ն, ունենալով իրացվելիության ավելցուկի ներքաշման խնդիր և ներքաշող գործիքների սահմանափակ հնարավորություն, թողարկել է սեփական արժեթղթերը: Ընդ որում, սեփական արժեթղթերի տեղաբաշխումը մինչ օրս ՀՀ ԿԲ գործիքակազմում բավականին ակտիվ ներքաշող գործիք է, քանի որ վերջին տարիներին արագացող տեմպերով աճող արտաքին ֆինանսական ներհոսքի, ինչպես նաև նկատվող ապաղոլարացման երևույթների ազդեցությունը արտարժույթի շուկայում մեղմելու նպատակով ԿԲ-ն շուկայից գնել է մեծածավալ արտարժույթ, որի գնաճային ազդեցությունն էլ չեզոքացնելու հիմնական գործիքը եղել է ՀՀ ԿԲ արժեթղթերի տեղաբաշխումը:

Մասամբ արտաքին ֆինանսական ներհոսքի չեզոքացմանն է ուղղվել նաև 2005թ-ին ՀՀ ԿԲ կողմից պարտադիր պահուստավորման մեխանիզմում արված փոփոխությունը, որի համաձայն տարանջատվեց ազգային արժույթով և արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը՝ այն իրականացնելով համապատասխան արժույթով: Ներկայումս գործում է պարտադիր պահուստավորման միասնական նորմ՝ երկու արժույթների գծով էլ 8%:

Չնայած վերջին տարիներին ՀՀ ԿԲ կողմից իրականացրած առավել ընդլայնողական քաղաքականությանը, այսօր, զարգացող շատ երկրների համեմատ, Հայաստանում դեռևս ցածր է ֆինանսական միջնորդության աստիճանը՝ պայմանավորված հիմնականում

եկամուտների և խնայողությունների ցածր մակարդակով: Այնուհանդերձ, վերջին տարիներին այն ցուցաբերել է աստիճանական աճի միտումներ:

Վերջին տարիներին դրամավարկային քաղաքականության բնագավառի զարգացումները հանգեցրել էին նրան, որ անկայունացել էր փողի զանգված-գնաճ կապը: Դրա հիմնական պատճառներն էին տնտեսությունում փողի պահանջարկի տատանողական վարքագիծը, բարձր դոլարիզացիայի պայմաններում փողի զանգվածում կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների՝ արտաքին շոկերի, զգալի ազդեցությունը: Այս պայմաններում ՀՀ ԿԲ-ն շատ հաճախ, նախապատվությունը տալով գնաճի նպատակին, քաղաքականության իրականացման ժամանակ վերանայել է իր կողմից ծրագրված փողի զանգվածի նպատակային ցուցանիշը:

Այդ իսկ պատճառով, 2006թ. հունվարին ՀՀ կենտրոնական բանկը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի 2006 թվականի հունվարի 1-ից, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի սահմաններում, անցում է կատարվել փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունից գնաճի նպատակադրման ռազմավարությանը:

Դրամավարկային քաղաքականության բնագավառում վերջին 3 տարիների առանձնահատկությունը տնտեսությունում ընթացող դրամայնացման ակտիվ գործընթացն է, որն հիմնականում պայմանավորված է միջազգային շուկաներում դոլարի արժեզրկմամբ և արտաքին ֆինանսական ներհոսքի աճի բարձր տեմպերով: Դա արտահայտվել է ինչպես դրամայնացման գործակցի 2 անգամյա աճով, այնպես էլ շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների աճի բարձր տեմպերով: Ի տարբերություն դրամայինի, արտարժութային ավանդների աճի տեմպերը զգալի դանդաղել են: Արդյունքում՝ զգալի՝ 13 տոկոսային կետով նվազել է դոլարացմանան աստիճանը՝ 2006թ-ին կազմելով 30%: Դոլարացման նվազումը պայմանավորված է եղել ինչպես փոխարժեքի արժեքավորմամբ, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից ձեռնարկած մի շարք միջոցառումներով, այդ թվում՝ PR-ների կազմակերպմամբ[3]:

Եվս մեկ առանձնահատկություն է դիտվել վերջին տարիներին տնտեսության վարկավորման առումով, որի աճի տեմպերը կտրուկ աճել են 2004թ-ից՝ 2003թ-ի 11%-ից 2004-2006թթ. կազմելով միջին տարեկան 33%: Ընդ որում, տնտեսության դրամայնացումը դրսևորվել է նաև այս ցուցանիշում՝ արձանագրելով դրամային վարկավորման առավել արագ աճի տեմպեր:

1.2.3 Հարկաբյուջետային հատված

Վերջին 10 տարիների ընթացում ՀՀ տնտեսության պետական հատվածում ևս իրականացվել են զգալի բարեփոխումներ: Մասնավորապես, հարկաբյուջետային կարգավորումների արդյունքում հաջողվել է սահմանափակել ընդհանուր տարեկան պետական բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի 3 տոկոսից ցածր սահմաններում: Այսպես պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը 1996 թվականի 5.8 տոկոսի դիմաց 2006 թ. կազմել է 1.5 տոկոս:

Եկամտային քաղաքականության ոլորտում հաջողվում է ապահովել հավաքագրման ենթակա հարկային եկամուտների պլանային ցուցանիշները, որոնց աճը ավելի առաջանցիկ է, քան տնտեսական աճը և կազմում է տարեկան շուրջ 20 տոկոս: Այնուհանդերձ տնտեսական աճի համեմատ հարկային եկամուտների առաջանցիկ աճի մակարդակը դեռ

[3] Տնտեսության դոլարացվածության կրճատմանն ուղղված միջոցառումներից էր նաև «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը մեծապես նպաստել է դոլարով գործարքների ծավալների կրճատմանը:

գոհացուցիչ չէ, և հարկեր/ՀՆԱ ցուցանիշը ցածր է մի շարք ԱՊՀ երկրների մակարդակից: Վերջինիս հետևանքով դեռևս ցածր մակարդակի վրա է պետության եկամուտների վերաբաշխման ֆունկցիան:

Ծախսային քաղաքականության իրականացումը հիմնականում բխում է ՀՀ կառավարության «Աղքատության Կրճատման Ռազմավարական և Միջին Ժամկետ Ծախսերի ծրագրերից»: Նշենք որ, զգալի բարելավվել է իրավիճակը սոցիալական ճյուղերի բյուջետային ծախսերի ֆինանսավորման բնագավառում, ինչպես նաև բարեփոխումներ են իրականացվում պետական կառավարման, առողջապահության, կրթության համակարգերում:

Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է նաև պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ պետական պարտքի մակարդակի կրճատումը: Բացի դրանից զգալի բարելավվել է Հայաստանի արտաքին պարտքի բնութագիրը, ոչ արտոնյալ պայմաններով արտաքին պարտքի մասնաբաժինը նվազել է՝ դրանով իսկ էապես ուժեղացնելով վարկունակության հեռանկարները:

1.2.4 Արտաքին հատված

1998թ-ից սկսած համաշխարհային տնտեսության և ՀՀ ներքին տնտեսության զարգացումների ներքո ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունում դրական տեղաշարժեր արձանագրվեցին: Ռուսաստանի ճգնաժամից հետո Հայաստանի տնտեսությունը շարժվել է դեպի նոր հավասարակշռության, ինչն արտահայտվել է արտաքին առևտրի հաշվեկշռի բարելավմամբ մինչև 2002թ: Այսպես 1999-2002թթ. արտահանման միջին աճի տեմպն էապես գերազանցել է ներմուծման աճի տեմպերին և կազմել է 27.4%, ներմուծման 6.1%-ի համեմատ: Նշված ժամանակահատվածում արտաքին հատվածի բարելավմանը նպաստել է նաև ներմուծման փոխարինիչների արտադրության ծավալների զգալի աճի գործընթացը:

2003թ-ից սկսած գրանցվել է արտաքին առևտրի անվանական արտահայտությամբ բացասական հաշվեկշռի խորացում, թեև արտահանման աճի տեմպերը փոքր-ինչ գերազանցել են ներմուծման աճի տեմպերը: Բացառություն է կազմում 2006թ-ը, երբ արտահանման մասով գրանցվել է բավականին ցածր՝ 2% աճ, ինչը հիմնականում պայմանավորվել է արտահանման հետ կապված տեխնիկական խնդիրներով[4]: Իսկ ներմուծման բարձր աճի տեմպերի պահպանումը (2006թ. վերջինիս աճը կազմել է 20.6%) հիմնականում պայմանավորվել է աճող ներքին պահանջարկով, ինչպես նաև ներդրումների հետ կապված ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի աճով:

2003թ-ից սկսած արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի խորացումը փոխհատուցվել է մասնավոր տրանսֆերտների շարունակական բարձր աճով (2003-2006թթ. մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատուժից եկամուտների աճի միջին տեմպը կազմել է 58%): Վերջինիս բարձր աճին նպաստել է վերջին տարիներին Ռուսաստանի տնտեսության բարենպաստ զարգացումները[5]:

Չնայած 2003թ-ից հետո արտաքին առևտրի հաշվեկշռի անվանական արտահայտությամբ բացասական մնացորդի խորացմանը, վերջինիս կշիռը ՀՆԱ-ում սկսած 1998թ-ից մինչև 2006թ. կայուն նվազել է՝ 30.5%-ից մինչև 14%: Ինչ վերաբերում է ընթացիկ

[4] 2006թ. արտահանման ցածր աճը պայմանավորվել է նաև ադամանդի համաշխարհային շուկաներում կառուցվածքային փոփոխություններով, ինչպես նաև «ԱԼՐՈՍԱ» ընկերության կողմից անմշակ ադամանդի գների աճով: Վերջինս հանգեցրել է անմշակ ադամանդի ներմուծման կրճատմանը և հետևաբար նաև վերամշակված ադամանդի արտահանման ծավալների նվազմանը:

[5] ՀՀ ներհոսող մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների 70-80%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին:

հաշիվ/ՀՆԱ ցուցանիշին, որն ամբողջական է դարձնում պատկերն արտաքին հատվածի հետ ՀՀ տնտեսության իրական գործարքների տեսանկյունից, ապա 1998թ-ի 21.3%-ից այն նշանակալիորեն կրճատվել է մինչև 2006թ. 1.8%-ը:

Կապիտալի և ֆինանսական հաշվի գծով զուտ ներհոսքը 1997թ-ից սկսած գրեթե միշտ (բացառություն են կազմել 1998թ. և 1999թ.) գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչն էլ հանգեցրել է վճարային հաշվեկշռի հավելուրդի ձևավորմանը և համախառն արտաքին պահուստների կուտակմանը: Նշված կապիտալ և ֆինանսական ներհոսքի մեծ ծավալները, ինչպես նաև համաշխարհային շուկաներում վերջին տարիներին ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը հանգեցրել են ՀՀ դրամի 2003թ. վերջերից սկսած արժևորմանը:

Կապիտալի ազատ հոսքերի պարագայում որդեգրած ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությունն օգնել է նշված ֆինանսական հոսքերի արդյունքում պահանջարկի լրացուցիչ աճի արդյունքում գնաճային ճնշումների մասնակի չեզոքացմանը: ՀՀ մակրոմիջավայրը վերջին տարիների կապիտալի հսկայածավալ հոսքերի պայմաններում բնութագրվել է ցածր գնաճային գոտով՝ ի տարբերություն մի շարք ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների, որտեղ արագացող գնաճը լուրջ խնդիրներ է առաջացրել մակրոտնտեսական կայունության տեսանկյունից:

Բացի այդ, Կենտրոնական բանկը վերջին տարիներին կապիտալի ներհոսքի բացասական ազդեցությունները չեզոքացնելու նպատակով հանդես է եկել ակտիվ ստերիլիզացիոն քաղաքականությամբ: Արտարժութային միջոցների շուկայից գնման արդյունքում լրացուցիչ դրամային լիկվիդայնության ներքաշման նպատակով կենտրոնական բանկը 2005թ-ից ակտիվորեն սկսել է թողարկել արժեթղթեր:

1.3 Ֆինանսական հատված

Ներկայումս ՀՀ ֆինանսական համակարգն ընդգրկում է 21 առևտրային բանկեր, 19 վարկային կազմակերպություններ, 11 ապահովագրական ընկերություններ, 6 ապահովագրական բրոքերային ընկերություններ, 4 դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ, 2 վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ, 246 արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետեր, 5 արժութային դիլերներ, 60 գրավատներ: ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված բրոքերային գործունեություն են իրականացնում 15 ընկերություններ, որոնցից 6-ը բացի բրոքերային գործունեության լիցենզիայից ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 2-ը ունի նաև պահառուի լիցենզիա: ՀՀ արժեթղթերի շուկայում գործում են նաև երկու ինքնակարգավորվող կազմակերպություն. «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը» և արտարժույթի և արժեթղթերի առք/վաճառքի սակարկություններ կազմակերպող «Հայաստանի Ֆոնդային Բորսա ինքնակարգավորվող կազմակերպությունը»:

1.3.1 ՀՀ բանկային համակարգը

ՀՀ ֆինանսական հատվածի նշանակալից մասնակիցներն են հանդիսանում առևտրային բանկերը, քանի որ ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 93%-ը բաժին է ընկնում բանկային համակարգին:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է ՀՀ կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, նրանց մասնաճյուղերը,

ներկայացուցչությունները, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեությունը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով: ՀՀ տարածքում բանկային գործունեությունը կարող է իրականացվել միայն ՀՀ ԿԲ-ի կողմից տրվող բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:

Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ ԿԲ-ին:

2006թ. վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում էին 21 առևտրային բանկեր (այդ թվում՝ 100% արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ 4 բանկ) և նրանց 299 մասնաճյուղեր: Օտարերկրյա կապիտալով բանկերի մասնաբաժինը 57% է:

2006թ. վերջի դրությամբ բանկային համակարգի կապիտալի մեծությունը կազմել է 120.2 մլրդ դրամ, պարտավորությունների մեծությունը՝ 404.3 մլրդ դրամ, ակտիվների մեծությունը՝ 524.5 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը (նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերություն ռիսկով կշռված ակտիվների մեծությանը) կազմել է 34.9%: Բանկային համակարգի պարտավորությունների 74%-ը բաժին է ընկել ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված համընդհանուր ավանդներին: Ակտիվների կազմում տնտեսությանը տրամադրված վարկերին բաժին է ընկնում ընդհանուր ակտիվների 43.7%: Ատիվների որակի առումով հատկանշական է, որ բանկային համակարգի ակտիվների 97.8%-ը բաժին է ընկնում «ստանդարտ դասի» ակտիվներին:

2006թ. վերջի դրությամբ վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 20.6մ լրդ դրամ, ապահովագրական ընկերությունների ակտիվների մեծությունը՝ 8.6 մլրդ դրամ:

1.3.2 ՀՀ ապահովագրական շուկան 1991-2005 թթ.

1991թ. հետո ՀՀ-ում սկսված քաղաքական և ֆինանսաբանկային փոփոխությունների ներքո վերափոխումների ենթարկվեց նաև ապահովագրական շուկան: Եթե մինչև 1991թ. երկրում գործում էր ապահովագրական մեկ կենտրոնացված համակարգ, ապա 1991թ.-ից հետո ապահովագրական ոլորտը նույնպես դուրս եկավ պետության հովանավորչությունից: Բնական է, որ այսպես արագ տեղի ունեցած անցումը չէր կարող լավ նախապատրաստված լինել և նոր ոլորտի համար ապահովել կայուն և գործուն օրենսդրական և վերահսկողական դաշտ: Ավելին, մինչև 1993թ. այս դաշտը բացարձակապես կանոնակարգված չէր. 1993թ. առաջին անգամ ընդունվեց «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեությամբ զբաղվելու ժամանակավոր կարգը»: Արդյունքում մինչև 1996թ. երկրում գործում էր շուրջ 82 ապահովագրական ընկերություն:

1996թ. նոյեմբեր ամսին ընդունվեցին «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և «ՀՀ տարածքում գործող ապահովագրական կազմակերպությունների գործունեությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության թիվ 368 որոշումը: Սրանով ՀՀ-ում արվեցին ապահովագրական ընկերությունների նկատմամբ վերահսկողության առաջին քայլերը, խստացվեցին ապահովագրական ընկերությունների համար սահմանվող պահանջները:

Վերոնշվածների ընդունման արդյունքում երկրում կտրուկ նվազեց ապահովագրական ընկերությունների քանակը. այսպես 1997թ. լիցենզավորված ապահովագրական ընկերությունների քանակը 10 էր: Սակայն 1998թ. ապահովագրական ընկերությունների թիվը կրկին ավելացավ և կազմեց 20: Հետագա տարիներին ապահովագրական ընկերությունների թիվը այդքան կտրուկ տատանումներ չի ունեցել:

1997թ.-ից սկսվեց ձևավորվել ենթաօրենսդրական դաշտը: Ընդունվեցին մի շարք ենթաօրենսդրական ակտեր. մասնավորապես՝ 1997թ. ՀՀ կառավարությունն ընդունեց թիվ 174 որոշումը «Ապահովագրողների ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության նորմատիվային չափի հաշվարկման մասին», 1999թ.՝ Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և տարեկան հաշվետվությունների ձևերը և մի շարք այլ նորմատիվ ակտեր:

2000թ. ՀՀ կառավարությունն ընդունեց «ՀՀ ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացման, ապահովագրության ոլորտի մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգի ձևավորման հայեցակարգ», իսկ 2001թ. հաստատեց ՀՀ ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիրը: Վերջիններիս նպատակն էր Ապահովագրական տեսչությունում ապահովել որակյալ մասնագիտական կադրերի առկայությունը և ակտուարական համակարգի ձևավորումը: Ըստ էության այս խնդիրները չեն լուծվել:

2003թ. Համաշխարհային բանկի մասնագետների օժանդակությամբ ՀՀ կառավարությունը վերանայել է «Ապահովագրության մասին» 1996թ. օրենքը: Արդյունքում 2004թ. հունիսին ընդունվեց ապահովագրության մասին նոր օրենքը: Վերջինումս ապահովագրության համակարգի շատ պարզ մոդել էր ընտրվել՝ ելնելով ապահովագրական շուկայի պարզությունից և փոքրությունից: Օրինակ, ապահովագրական գործակալ կարող էին լինել միայն ապհովագրական ընկերության աշխատակիցները: Տարանջատված չէին կյանքի, ոչ կյանքի և վերաապահովագրության կարգավորման ռեժիմները: Առանձնահատուկ չէր կարգավորվում ապահովագրական ընկերության շուկայից ելքը:

2003թ. օրենքում ընտրված մոդելը օրենքի ընդունման պահին արտացոլում էր շուկայի վիճակը: Շուկան ավելի արագ տեմպերով զարգացավ, և 2006թ. արդեն իսկ այդ օրենքի ներքո ապահովագրական գործունեությունը շատ ծախսատար և սահմանափակող էր: Ուստի ընտրվեց ապահովագրական համակարգի նոր՝ եվրոպական, մոդելը, և 2006թ. նախաձեռնվեցին ապահովագրական ոլորտի ռեֆորմներ, որի հետևանքով 2007թ. կլրամշակվի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքը:

1.3.3 Կենսաթոշակային համակարգը և այդ ոլորտում իրականացվող բարեփոխումները

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը (ՍԱՊՀ), որը կազմավորվել է 15 տարի առաջ՝ 1991թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ, հանդիսանում է կենսաթոշակների նշանակման և վճարման, ինչպես նաև պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման աշխատանքներն իրականացնող մարմին:

Հիմնադրամը կենսաթոշակների նշանակումը, վերահաշվարկումը և վճարումը՝ իրականացնում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 19.11.2002թ.), «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական

ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության որոշումներով և օրենսդրական այլ ակտերով:

Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան: Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունք ունեցող քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կենսաթոշակի նշանակման պայմանների բավարարման և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունի ՀՀ քաղաքացուն հավասար:

ՀՀ-ում գործող կենսաթոշակային համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի, ինչը պայմանավորված է ժողովրդագրական խնդիրներով, կենսաթոշակի չափի բարձրացման, կենսաթոշակի չափի և աշխատավարձի ու կատարված սոցիալական վճարների միջև անմիջական կապ ստեղծելու անհրաժեշտությամբ, համակարգի ֆինանսական կայունության ապահովման և մի շարք այլ խնդիրներով:

Կենսաթոշակային բարեփոխումների խնդիրը բազմիցս քննարկվել է, և Կառավարության կողմից ընդունվել են համապատասխան որոշումներ: Մասնավորապես 1999թ. դեկտեմբերի 2-ին Կառավարությունը ընդունեց «ՀՀ-ում կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները հաստատելու մասին» որոշումը: 2005թ. ապրիլի 28-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «ՀՀ կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները հաստատելու մասին» որոշումը:

Այս որոշումներին հաջորդեց նաև 2006թ. մայիսի 26-ին Կառավարության կողմից հաստատված «ՀՀ կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգը», որը սահմանում է կենսաթոշակային համակարգի բարեփոխման շրջանակը, նոր կենսաթոշակային համակարգի նկարագիրը և այլն: Նույն որոշմամբ հաստատվեց նաև կենսաթոշակային բարեփոխումների միջոցառումների ժամանակացույցը:

Այսպես, ՀՀ կառավարության 2006թ. որոշմամբ հիմք դրվեց կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին և բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրմանը: Կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման զանազանման անհրաժեշտությունը խիստ կարևոր էր՝ կապված ոչ ֆորմալ զբաղվածության մեծ կշռով և բնակչության ծերացման բարձր տեմպերով:

Համաձայն միջոցառումների ժամանակացույցի՝ ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի որոշմամբ բարեփոխումների իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվել է կենսաթոշակային համակարգի բարեփոխումները ղեկավարող խորհուրդ, որը ղեկավարում է հանրապետության վարչապետը: Խորհրդի կազմում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարները, ՀՀ կենտրոնական բանկի նախագահը, ՀՀ Ազգային ժողովի սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահը:

Հիմք ընդունելով հայեցակարգի միջոցառումների ժամանակացույցը՝ ՀՀ վարչապետի 2006թ. օգոստոսի 4-ի որոշմամբ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվել է կենսաթոշակային համակարգի բարեփոխումների աշխատանքային խումբ:

Ֆինանսական համակարգի դերը կենսաթոշակային բարեփոխումներում մեծ է, և ՀՀ կենտրոնական բանկը ամբողջությամբ ընդգրկված է դրա նախապատրաստական աշխատանքներում:

Բարեփոխված կենսաթոշակային համակարգից բոլոր վճարումները նախատեսվում է իրականացնել անկանխիկ վճարումների միջոցով: Համապատասխան միջոցառումներ են իրականացվում նաև կապիտալի շուկայի, ապահովագրական շուկայի, ինչպես նաև վճարային համակարգերի զարգացման ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի բավարարել բարեփոխումների արդյունքում ստեղծվող ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկը:

1.4 Արժեթղթերի շուկա

Հայաստանում արժեթղթերի շուկան սկսել է ձևավորվել շուկայական տնտեսության անցումից հետո: Դրան նպաստում էր ինչպես պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը, ֆինանսա-վարկային և այլ կազմակերպությունների կողմից ակտիվության մեծացումը, այնպես էլ պետության կողմից տարվող ակտիվ քաղաքականությունն այդ բնագավառում:

Մասնավորեցման արդյունքում ձևավորվեցին բազմաթիվ բաց բաժնետիրական ընկերություններ, որոնց մի մասի բաժնետոմսերը սկսեցին շրջանառվել ֆոնդային բորսաներում: Մինչև 2000թ. Հայաստանում գործել են 4 ֆոնդային բորսաներ: 2000թ. ընդունվեց «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որը նոր ուղու վրա դրեց շուկայի զարգացումը: Այս օրենքի հիմքում ընկած էին Միացյալ Նահանգների արժեթղթերի շուկան կարգավորող իրավական ակտերը: Օրենքի հիմնական առանձնահատկությունն այն էր, որ հստակ սահման դրվեց բանկային գործունեության և արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության միջև. այսինքն՝ օրենքը չէր ճանաչում եվրոպայում գործող ունիվերսալ բանկային համակարգի կոնցեպցիան: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ շուկան սպասարկող ենթակառուցվածքը (ֆոնդային բորսա և Կենտրոնական դեպոզիտարիա) ոչ առևտրային՝ ինքնակարգավորվող կազմակերպություններ էին: Այնուհանդերձ, մինչև 2006թ. շուկայում որևէ էական առաջընթաց չարձանագրվեց:

2006թ., երբ արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության գործառույթներն անցան ՀՀ կենտրոնական բանկի ենթակայության ներքո, էական փոփոխություններ կատարվեցին շակայի կարգավորման դաշտում, և ձևավորվեց շուկայի զարգացման տեսլականը: Մասնավորապես, բանկերին և վարկային կազմակերպություններին հնարավորություն ընձեռվեց իրականացնել արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն, որի արդյունքում ներկայումս նման իրավունք են ստացել 2 բանկ: 2007թ. ընթացքում նախատեսվում է ՀՀ կառավարության, ՀՀ կետրոնական բանկի և շվեդական բորսային օպերատոր OMX ընկերության միջև հուշագրի ստորագրել, համաձայն որի OMX-ը նախատեսում է ձեռք բերել Հայաստանի ֆոդնային բորսան և կենտրոնական դեպոզիտարիան՝ դրանց առևտրայնացումից հետո:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայում շրջանառվում են Գանձապետական պարտատոմսեր, ՀՀ ԿԲ-ի պարտատոմսեր և առևտրային արժեթղթեր:

Հայաստանի Հանրապետությունում Գանձապետական պարտատոմսեր թողարկում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում, ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից, թողարկել կարճաժամկետ արժեթղթեր:

Գանձապետական և ՀՀ ԿԲ պարտատոմսերը (այսուհետ՝ պետական պարտատոմսերը) թողարկվում են ոչ փաստաթղթային եղանակով, և ՀՀ ԿԲ-ն հանդիսանում է այդ արժեթղթերի կենտրոնական պահառու:

Պետական պարտատոմսերով կնքված գործարքների վերջնահաշվարկներն իրականացվում են Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի միջոցով (տես 6.1կետը):

2006թ. վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող Գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 7699.6 մլն դրամ, Գանձապետական միջին ժամկետայնության պարտատոմսերի ծավալը՝ 38087.8 մլն դրամ, Գանձապետական երկարաժամկետ պարտատոմսերի ծավալը՝ 12175.4 մլն դրամ, ՀՀ ԿԲ կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը՝ 39600 մլն ՀՀ դրամ:

ՀՀ-ում կորպորատիվ արժեթղթերի գերակշռող մասը կազմում են բաժնետոմսերը: Բաժնետոմսերի շուկայի կապիտալիզացիայի մոտավոր գնահատականը 2006թ. վերջի դրությամբ կազմել է 22.38 մլրդ դրամ:

2006 թվականի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 710 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 130.9 հազար մարդ:

2006թ. վերջի դրությամբ ֆոնդային բորսայում ցուցակված են եղել թվով 36 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հավետու թողարկող ընկերություններից 2-ը հանդիսանում են բանկ, իսկ 1-ը՝ վարկային կազմակերպություն: Ընկերություններից 4-ը վարկանշվում են ՀՀ ԿԲ կողմից:

2006թ. ընթացքում Հայաստանի Ֆոնդային Բորսայում կնքվել է 2.6 մլրդ դրամի ընդհանուր ծավալով 1181 գործարք: Տարվա ընթացում բորսայական առևտրին մասնակցել են 9 մասնագիտացված ընկերություն:

Մասնագիտացված ընկերությունների կողմից 2006թ. ընթացքում կնքվել է 191.4 մլրդ դրամի գործարք, որից 7.2 մլրդ ՀՀ դրամի գործարքները կնքվել են բրոքերային գործունեության շրջանակներում (3.8%), իսկ 184.2 մլն դրամի գործարքները՝ դիլերային գործունեության շրջանակներում (96.2%):

2006թ. բաժնետոմսերով կնքված գործարքների 98%-ը, կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների 55%-ը և պետական պարտատոմսերով կնքված գործարքների 1%-ն իրականացվել են բրոքերային գործունեության շրջանակներում: Դիլերային գործունեության շրջանակներում կնքվել են պետական պարտատոմսերով գործարքների 99%-ը:

Մասնագիտացված ընկերությունների կողմից իրականացված բրոքերային և դիլերային շրջանառության 97%-ը կատարվել է բորսայից դուրս: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով կնքված գործարքների համապատասխանաբար 84%-ը և 95%-ը կնքվել են Հայաստանի Ֆոնդային Բորսայում:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում 2006թ. ընթացքում կնքվել են 7.8 մլրդ ՀՀ դրամի գործարքներ, որից 124 մլն դրամ ծավալով գործարքները (2%) կնքվել են ոչ ռեզիդենտ թողարկողների արժեթղթերով՝ հանձնակատարների միջոցով:

2006 թ. ընթացքում ընկերությունների կողմից՝ ազդագրի կիրառմամբ, իրականացվել է արժեթղթերի տեղաբաշխման 3 դեպք, որից 1-ի ընթացքում իրականացվել է բաժնետոմսերի փակ տեղաբաշխում, իսկ 2-ի ընթացքում հրապարակայնորեն տեղաբաշխվել են կորպորատիվ պարտատոմսեր: Կորպորատիվ պարտատոմսերը տեղաբաշխվել են 1

վարկային կազմակերպություն և 1 շինարարական կազմակերպություն՝ համապատասխանաբար 7.25 և 9.0 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, ընդ որում կազմակերպության պարտատոմսերը երաշխավորված են USAID-ի կողմից:

1.5 Վճարահաշվարկային համակարգի զարգացման հիմնական միտումները

ԽՍՀՄ փլուզումից հետո արմատապես փոխվեց նաև նախկինում գործող միասնական վճարահաշվարկային համակարգը, որը ՀՀ կենտրոնական բանկի առջև ծառացրեց մի շարք պրոբլեմներ՝ նոր վճարահաշվարկային հարաբերությունների կերտման և միջբանկային հաշվարկների կատարելագործման ուղղությամբ: 1993թ.-ից սկսած ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարվել են զգալի աշխատանքներ՝ ուղղված վերոհիշյալ պրոբլեմների լուծմանը, որի իրականաման ժամանակ ՀՀ կենտրոնական բանկը համագործակցել է ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի, այլ շահագրգիռ կազմակերպությունների և պետական մարմինների հետ:

1.5.1 ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման միտումները

Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը կարելի բաժանել հետևյալ փուլերի՝

- I փուլ- 1993-1995թթ.՝ Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի և վճարահաշվարկային հարաբերությունների ձևավորման շրջան

Այս տարիներին ձևավորվել է հիերարխիկ 3-աստիճան (ՀՀ կենտրոնական բանկ- ՀՀ առևտրային բանկեր-մասնաճյուղեր) բանկային համակարգը, մշակվել է հիմնական բանկային օրենսդրությունը:

1993թ. նոյեմբերին շրջանառության մեջ է դրվել ՀՀ ազգային արժույթը՝ դրամը:

1994թ. մարտին ներդրվել է «միջբանկային փոստի» ծառայությունը, որը ապահովել է Երևան քաղաքում մեկ բանկից/մասնաճյուղից մյուսը վճարային փաստաթղթերի առաքումը մեկ օրվա ընթացքում:

1994թ. մայիսին ներդրվել է միջբանկային զուտ հաշվարկների (քլիրինգային) համակարգը (տես 4.1.3 կետը), ինչը նպաստել է բանկերի իրացվելիության արդյունավետ օգտագործմանը և նվազեցրել է թղթային հանձնարարականների մշակման ծավալները հաշվարկային բանկում:

1993թ. FVG կազմակերպության կողմից ստեղծված միջբանկային հեռագրային էլեկտրոնային փոստի (FVG EMAIL) միջոցով բանկերը ստացել են հնարավորություն կապվել միմյանց հետ և հաղորդագրություններ փոխանակել, իսկ խոշոր բանկերը հնարավորություն են ստացել նաև օրական 2-3 անգամ տեղեկանալ կենտրոնական բանկում իրենց թղթակցային հաշիվների մնացորդների վերաբերյալ: 1995թ. սկսած այդ համակարգի միջոցով կիրառելով համապատասխան պաշտպանական մեխանիզմները՝ Երևանից դուրս գտնվող երկու առևտրային բանկերի և կենտրոնական բանկի միջև փորձնական էլեկտրոնային վճարումների համակարգով սկսվեցին իրականացվել էլեկտրոնային փոխանցումներ:

1995թ. ներդրվել է «նույնաքաղաքային» վճարումների համակարգը, որը թույլ տվեց նույն քաղաքում (շրջանում) մեկ բանկի մասնաճյուղից մյուս բանկի մասնաճյուղ կատարվող վճարումներն իրականացնել առավելագույնը 5 բանկային օրվա ընթացքում (նախկին 10 օրվա փոխարեն)՝ օգտագործելով FVG EMAIL կապը:

1995թ. ստեղծվել է Հայաստանի բանկերի միությունը (տես 2.6.1 ենթակետը):

- II փուլ- 1996-1999թթ.՝ Էլեկտրոնային միջբանկային վճարումների համակարգի ներդրման և ՀՀ-ում վճարահաշվարկային հարաբերությունների զարգացման շրջան

1996թ. ներդրվել է CBANet միջբանկային համակարգչային ցանցը, որի հիման վրա 1997թ. ներդրվել է «Էլեկտրոնային վճարումների համակարգը» (տես 4.1.1 կետը):

1996թ. հոկտեմբերի 1-ից ներդրվեց հաշվեհամարների կոդավորման նոր համակարգ:

1996թ. ստեղծվել է Հայաստանում S.W.I.F.T.-ի անդամների և օգտագործողների խումբը, իսկ 1997թ. ընթացքում միջբանկային վճարումների ժամկետները կրճատելու, բանկերի ծախսերը նվազացնելու և վճարումների կատարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով 12 բանկ (այդ թվում՝ Կենտրոնական բանկը) միացել են S.W.I.F.T. համակարգին:

1996թ. վերջում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Գանձապետարանը:

1997թ.-ից ՀՀ ԿԲ-ի կողմից, հիմք ընդունելով 1996թ. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «ԱՊՀ պետությունների կողմից վճարահաշվարկային միության ստեղծման մասին» միջպետական համաձայնագիրը, Միջպետբանկի վճարային համակարգի ստեղծման և ներդրման հետ կապված աշխատանքներ իրականացվեցին:

Մաքսային վճարումներն առավել արդյունավետ կերպով իրականացնելու և դրանց ժամկետների կրճատման նպատակով 1998թ. մշակվել և ներդրվել է մաքսատներում/մաքսակետերում ՀՀ բանկերի միջոցով մաքսատուրքերի, մաքսավճարների, հաստատագրված վճարների, ակցիզային և ավելացված արժեքի հարկերի վճարման տեխնոլոգիան:

1997թ.-ից ՀՀ ԿԲ կողմից սկսեցին աշխատանքներ տարվել ՀՀ էներգետիկայի և ՀՀ ֆինանսների և էկենոմիկայի նախարարությունների հետ՝ ՀՀ-ում սպառված էլեկտրաէներգիայի դիմաց բնակչությունից գանձվող վճարները բանկային համակարգի միջոցով իրականացնելու ուղղությամբ:

1998թ.-ից ՀՀ ԿԲ-ի կողմից սկսվել են «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման» ավտոմատացված համակարգի մշակման աշխատանքները:

Պետական արժեթղթերի շուկայի զարգացման, ինչպես նաև բնակչությանը նոր ծառայությունների մատուցման և դրանք արժեթղթերի շուկա ընդգրկելու նպատակով 1999թ. ներդրվել է «Գանձապետական պահառու» համակարգը:

- III փուլ- 2000-2005թթ.՝ «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի» ներդրման, «Էլեկտրոնային վճարումների համակարգի» կատարելագործման և Հայաստանի Հանրապետությունում նոր վճարային գործիքների և վճարահաշվարկային ծառայությունների զարգացման շրջան

2000թ. ՀՀ կենտրոնական բանկի և մի շարք առևտրային բանկերի համատեղ ջանքերով հիմնադրվել է «Արմենիան Քարդ» ՓԲԸ և ներդրվել է «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգը (տես 2.2.3.1 ենթակետը և 4.2.1 կետը):

2000թ. ներդրվեց «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման» ավտոմատացված համակարգը, իսկ 2004թ. ներդրվեց երկրորդային շուկայի մոդուլը, որն ապահովեց պետական արժեթղթերով գործարքների վերջնահաշվարկների իրականացումը «առաքում վճարման դիմաց» սկզբունքով (տես 6.1 կետը):

2003թ. ներդրվել է «Արաքս-ԿԲ» ապարատա-ծրագրային սարքը, որը բարձրացրել է Էլեկտրոնային վճարումների համակարգում վճարային հաղորդագրությունների փոխանցման անվտանգությունը:

2004թ. կատարելագործվել է Էլեկտրոնային վճարումների համակարգի տեխնիկական և ծրագրային ապահովումը, որի արդյունքում զգալիորեն բարձրացել է ԷՎՀ-ի թողունակությունը:

Համաձայն ՀՀ նախագահի կարգադրության՝ ՀՀ տարածքում դրամանենգության, պլաստիկ քարտերի, չեկերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարությունների և կեղծիքների կանխարգելման նպատակով 2002թ. ստեղծվել է «Դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը», որի կողմից 2004թ.-ից սկսվել են տարվել աշխատանքներ նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում:

2000-2003թթ. ՀՀ ԿԲ-ի և ՀՀ առևտրային բանկերի կողմից շարունակվել են աշխատանքները կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ մատուցված կոմունալ ծառայությունների դիմաց բնակչությունից գանձվող վճարները բանկային համակարգի միջոցով իրականացնելու ուղղությամբ: 2003թ.-ից սկսվել է կոմունալ ծառայությունների դիմաց ԱԳՄ-ների միջոցով «ԱրՔա» քարտերով վճարումների իրականացումը:

2005թ. ՀՀ ԿԲ-ի և Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից մշակվել և ներդրվել է Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող արտարժույթի առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկների իրականացման համակարգը:

1.5.2 ՀՀ վճարահաշվարկային համակարգի նկարագիրը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերից և հանդիսանում է միակ պաշտոնական վճարամիջոցը: ՀՀ տարածքում գնանշումը և վճարումներն իրականացվում են ազգային արժույթով, բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են ՀՀ իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության տարածքում վճարումների գերակշիռ մասն իրականացվում է կանխիկ եղանակով: Այնուամենայնիվ, վերջին տարիներին արձանագրվում է անկանխիկ վճարումների ծավալի փոքր, բայց կայուն աճ: Այսպես, 2006թ. ընթացքում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 5494 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 2627716), որը նախորդ տարվա համեմատ աճել է 1.1 անգամ (615 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.2 անգամ (488789-ով):

Հայաստանի Հանրապետության վճարահաշվարկային համակարգին բնորոշ են հիմնականում կրեդիտային խոշորածավալ վճարումները, իսկ մանրածավալ վճարումներն իրականացվում են հիմնականում կանխիկով կամ կրեդիտային գործիքներով: ՀՀ-ում անկանխիկ վճարումների խթանման և վճարումների ծավալի ավելացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը մշակել է «Անկանխիկ վճարումների զարգացման միջոցառումների ծրագիր», որի շրջանակներում նախատեսվում է, համագործակցելով ՀՀ կառավարության և այլ շահագրգիր մարմինների հետ, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ վճարահաշվարկային և այլ հարակից բնագավառներում, որոնց համալիր և ամբողջական կիրառումը թույլ կտա խրախուսել անկանխիկ վճարային գործիքների կիրառումը և անկանխիկ վճարումների զարգացումը:

Հայաստանի Հանրապետությունում վճարումներն հիմնականում իրականացվում են երկու խոշոր վճարային համակարգերով.

- ՀՀ ԿԲ «Էլեկտրոնային վճարումների համակարգով» (այսուհետ՝ ԷՎՀ), որն ապահովում է ինչպես խոշորածավալ, այնպես նաև փոքրածավալ կրեդիտային վճարումների իրականացումը,
- «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգ (այսուհետ՝ ԱրՔա համակարգ), որն ապահովում է վճարային քարտերով գործառնությունների իրականացումը:

ԷՎՀ-ն հանդիսանում է միջբանկային վճարային կարևորագույն համակարգերից մեկը, որն աշխատում է ռեալ ժամանակում համախառն հաշվարկների (RTGS) իրականացման ռեժիմով. վերջնահաշվարկն իրականացվում է ՀՀ դրամով, Կենտրոնական բանկում վարվող մասնակիցների թղթակցային (հաշվարկային) հաշիվների միջոցով՝ հաշիվների մնացորդների սահմաններում: Համակարգի կողմից կատարված հաշվարկները վերջնական են և անվերադարձելի ՀՀ ԿԲ հաշիվներով կատարելու պահից: Համակարգով իրականացվում են միայն կրեդիտային փոխանցումներ, այդ թվում՝ առևտրային բանկերի սեփական փոխանցումները տարբեր ֆինանսական պարտավորությունների գծով, բյուջեին ուղղված վճարումները, տնտեսվարող սուբյեկտների՝ միմյանց ուղղված վճարումները, քաղաքացիների մասնավոր տրանսֆերտները և այլն: Համակարգը չունի փոխանցումների իրականացման գումարային սահմանափակումներ. համակարգով կարող են իրականացվել ինչպես մեծածավալ, այնպես էլ մանրածախ վճարումներ: Համակարգը չի նախատեսում ՀՀ ԿԲ-ի կողմից վարկավորում, և միջոցների անբավարար լինելու դեպքում գործարքը մերժվում է. անբավարար իրացվելիության համալրումը մասնակիցներն ապահովում են փողի միջբանկային շուկայից: Այնուամենայնիվ, մասնակիցներին թույլատրվում է օգտագործել պարտադիր պահուստավորմամբ նախատեսված իրենց պահուստային միջոցները: Նախատեսված չեն նաև վճարային կարգադրությունների հերթերի վարման և կառավարման մեխանիզմներ. կարգադրությունը կատարելու համար համապատասխան հաշվում բավարար գումարի բացակայության դեպքում կարգադրությունը առանց կատարման մերժվում է, և մերժված կարգադրությունը կատարելու համար նախաձեռնողի կողմից այն նորից պետք է մուտքագրվի ԷՎՀ որպես նոր կարգադրություն:

ԱրՔա համակարգը հանդիսանում է ԱրՔա քարտերով վճարումների իրականացման միասնական համակարգ, որն ապահովում է համակարգի անդամ-բանկերի կողմից թողարկված ԱրՔա քարտերով գործառնությունների պրոցեսինգն ու քլիրինգը: Համակարգում քարտային գործառնությունների հաշվարկային փուլ է համարվում տվյալ բանկային օրվա ժամը 9:00-ից մինչև հաջորդ բանկային օրվա ժամը 9:00-ը ընկած ժամանակահատվածը: Յուրաքանչյուր հաշվարկային փուլի համար համակարգի յուրաքանչյուր թողարկող անդամի համար սահմանված է հաշվարկային լիմիտ, որի սահմաններում կարող են կատարվել տվյալ թողարկող անդամի կողմից թողարկված քարտերով գործառնություններ: Հաշվարկային փուլի ավարտից հետո «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կազմակերպությունը, որը հանդիսանում է «ԱրՔա» համակարգի օպերատորը, տվյալ հաշվարկային փուլի հավաստագրված քարտային գործարքների վերաբերյալ իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա հաշվարկում է յուրաքանչյուր անդամի հավաստագրված քարտային գործարքներից առաջացած իրավասությունների և պարտավորությունների զուտ դիրքերը, կազմում է համապատասխան վճարահաշվարկային կարգադրություններ և CBANet միջբանկային ցանցով ներկայացնում է դրանք ՀՀ ԿԲ-ին, որը հանդիսանում է ԱրՔա համակարգի հաշվարկային բանկը: Ստացված կարգադրությունների

հիման վրա ՀՀ ԿԲ-ն իրականացնում է վերջնահաշվարկը: Բացի ԱրՔա քարտերից, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն ստացել է նաև Մաստերքարդ համակարգի պրինցիպալ անդամի, և Վիզա համակարգի երրորդ կողմի համար պրոցեսինգ իրականացնող անդամի կարգավիճակ:

Չնայած նրան, որ ԱրՔա վճարային համակարգը նորաստեղծ համակարգ է և ունի ընդհամենը մի քանի տարվա պատմություն, այն արագորեն ներդնում է այն բոլոր նոր ծառայությունները, որոնք առաջարկվում են քարտային բիզնեսի բազմամյա պատմություն ունեցող երկրներում: Այսպես, ԱրՔա համակարգի ԱԳՄ-ների միջոցով քարտապանները բացի կանխիկ գումարի ստացումից, կարող են նաև կատարել կոմունալ վճարումներ, դիտարկել քարտային հաշվի մնացորդը, իրականացնել բջջային հեռախոսների լիցքավորման վճարումներ: «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի կողմից 2003թ.-ից սկսվել են մատուցվել Ինտերնետի միջոցով կոմունալ վճարումների կատարման, իսկ 2004թ.-ից՝ նաև որոշ ինտերնետ-խանութներում վճարումների կատարման, հեռախոսային քարտերի դիմաց վճարումների կատարման ծառայություններ: 2005թ. սեպտեմբերին ներդրվել է Ինտերնետի միջոցով «ԱրՔա» քարտային հաշվից մեկ այլ քարտային հաշվի վրա փոխանցումների կատարման մեխանիզմը: «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից աշխատանքներ են տարվում չիպային քարտերի թողարկման և սպասարկման ուղղությամբ:

2006թ. վերջի դրությամբ ՀՀ-ում թողարկված քարտերի քանակը կազմել է 209 113, իսկ վճարային քարտեր սպասարկող սարքավորումների քանակը՝ 1589, որից ԱԳՄ՝ 180, ՊՈՍ տերմինալ՝ 1326, իմպրինտեր՝ 83:

Բացի վերոնշյալ վճարային համակարգերից, ՀՀ-ում գործում են նաև ՀՀ ԿԲ Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգը և Հաշվարկների քլիրինգային (զուտ) համակարգը: Վերջինս հիմնականում կիրառվում է որպես պահուստային համակարգ:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2006թ. ընթացքում նախորդ տարվա համեմատ ավելացել է 1.6 անգամ (1818 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.2 անգամ, որը կազմել է 194861:

Միջազգային փոխանցումները ՀՀ բանկերի կողմից իրականացվում են արտասահմանյան բանկերում ունեցած թղթակցային հաշիվների միջոցով՝ հիմնականում S.W.I.F.T հեռահաղորդակցման համակարգով, որի անդամ են հիմնականում ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը: ՀՀ այն բանկերը, որոնք չունեն թղթակցային հարաբերություններ արտասահմանյան բանկերի հետ, իրենց արտասահմանյան վճարումներն իրականացնում են վերոհիշյալ բանկերի միջոցով՝ օգտագործելով վերջիններիս արտարժութային հաշիվները արտասահմանյան բանկերում: Տնտեսվարող սուբյեկտների միջազգային փոխանցումները հիմնականում կատարվում են ավանդական բանկային փոխանցումների միջոցով, մինչդեռ անհատների արտարժույթով փոխանցումների իրականացումը արտասահման և արտասահմանից ստացումները հիմնականում կատարվում են ՀՀ-ում ներկայումս լայն տարածում գտած առանց հաշվի բացման դրամական (փողային) փոխանցումների մի շարք միջազգային համակարգերի միջոցով, որոնց հետ ակտիվորեն մրցակցում և աստիճանաբար ավելի մեծ կշիռ են ստանում ԱՊՀ երկրներում ստեղծված և արդեն իսկ լայն ճանաչում գտած նմանատիպ համակարգերը: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը տրանսֆերտներից մեծ կախում ունեցող երկիր է, 2004թ. նոյեմբերի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2005թ. հունիսի 28-ից և կարևոր տեղ է գրավում վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային

ծառայություններ մատուցող բանկ չհանդիսացող կազմակերպությունների (վճարահաշվարկային կազմակերպությունների) գործունեությունը կարգավորելու գործում: Սույն օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով սահմանվել է ՀՀ վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգորում մասնակցության ՀՀ ԿԲ կողմից թույլտվության տրամադրման մեխանիզմները և գործընթացը, ինչը հնարավորություն է տալիս հնարավորինս զսպել և կառավարել նման համակարգերում առկա ռիսկերը:

ՀՀ տարածքում փոստային փոխանցումները մատուցվում են «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից, որը հանդիսանում է փոստային համակարգի ազգային օպերատոր, և ՀՀ ԿԲ կողմից ստացել է դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա՝ առանց հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման համար: Դրամական փոխանցումները փոստային կապի ավանդական ծառայություններից են, որոնք իրականացվում են ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս: «Հայփոստ» ընկերությունը մատուցում է ինչպես ավանդական փոստային (թղթային) դրամական փոխադրությունների, այնպես էլ էլեկտրոնային դրամական փոխադրությունների ծառայություններ: Այն ՀՀ ԿԲ կողմից ստացել է նաև նման համակարգերում մասնակցության թույլտվություն և հանդիսանում է արտասահմանյան մի շարք հայտնի դրամական փոխանցումների համակարգերի մասնակից: Օգտագործելով փոստային կապի մեծ ցանցը՝ ՀՀ գրեթե բոլոր մարզերը հնարավորություն են ստացել վճարումներ իրականացնել և դրամական փոխնցումներ կատարել այս համակարգերի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում սկսել է նկատվել էլեկտրոնային փողերի (e-money) նկատմամբ որոշակի հետաքրքրվածություն՝ ինչպես բանկերի, այնպես նաև առևտրային կազմակերպությունների կողմից:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ակտիվ ուսումնասիրություններ են տարվում վճարահաշվարկային ծառայությունների վերոնշյալ նոր ոլորտները կանոնակարգելու և վերահսկելու ուղղությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի կարևորագույն խնդիրներից և գործառույթներից է նաև Վճարահաշվարկային համակարգի հսկողությունը (այսուհետ՝ ՎՀՀ): 2004թ. նոյեմբերին ՀՀ ԿԲ կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային համակարգի հսկողության իրականացման հայեցակարգը», որը ևս մեկ անգամ վերանայվել և հաստատվել է ՀՀ ԿԲ նախագահի համապատասխան որոշմամբ՝ 2006թ. դեկտեմբերին: Այս հայեցակարգի նպատակն է հստակեցնել և հրապարակային դարձնել ՀՀ ԿԲ՝ վճարահաշվարկային համակարգի հսկողության քաղաքականությունը: Հայեցակարգը սահմանում է ՎՀՀ-ի նպատակները, շրջանակները, ՎՀՀ շրջանակներում ներառված համակարգերին ներկայացվող պահանջները, ՎՀՀ իրականացման գործընթացը, համագործակցությունը այլ իրավասու մարմինների հետ և ՎՀՀ արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և տեղեկատվության տրամադրման գործընթացը: Այս հայեցակարգի հիման վրա հաստատվել է ՀՀ-ում գործող և ՎՀՀ շրջանակներում ներառված վճարային համակարգերի գնահատման ժամանակացույց, համաձայն որի 2007թ. ընթացքում նախատեսվում է սկսել գործող և ՎՀՀ շրջանակներում ներառված վճարահաշվարկային համակարգերի գնահատման աշխատանքները:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՍՊԵԿՏՆԵՐ

2.1 Ընդհանուր իրավական դաշտը

2.1.1 Վճարումներին առնչվող իրավական դաշտը

ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունները և պարտավորությունները վճարահաշվարկային բնագավառում սահմանված են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, համաձայն որոնց ՀՀ Կենտրոնական բանկը օժտված է ՀՀ վճարային համակարգի կարգավորման, վերահսկողության և հսկողության լայն իրավասություններով: Այսպես, Կենտրոնական բանկը.

- վերահսկում և կարգավորում է վճարահաշվարկային համակարգի գործունեությունը. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ՀՀ ԿԲ խնդիրներից է հանդիսանում գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը: Այդ խնդիրն իրականացնելու նպատակով ՀՀ ԿԲ կողմից իրականացվում է՝
  - վճարահաշվարկային բնագավառի կարգավորում և վերահսկողություն,
  - վճարահաշվարկային բնագավառի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում և ՀՀ վճարահաշվարկային բնագավառում տեղի ունեցող զարգացումների վերլուծություն,
  - վճարահաշվարկային ծառայությունների ուղղակի մատուցում, որի շրջանակներում ՀՀ ԿԲ-ն ստեղծել և շահագործում է CBANet միջբանկային էլեկտրոնային հեռահաղորդակցման ցանցը և դրա հիման վրա գործող «Էլեկտրոնային վճարումների համակարգը» (տես 4.1.1 կետը) և «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգը» (տես 6.1 կետը), ինչպես նաև մատուցում է վերջնահաշվարկի իրականացման ծառայություններ այլ համակարգերին (տես 2.4.2.1, 4.4 և 6.2 կետերը):
- լիցենզավորում է վճարահաշվարկային կազմակերպություններին, և կարգավորում ու կանոնակարգում է վերջիններիս գործունեությունը,
- տալիս է հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն,
- վճարահաշվարկային համակարգերի համար կարող է սահմանել տեխնիկական, անվտանգության, ծրագրային, ինչպես նաև համակարգի գործունեության կանոնների բովանդակությանը ներկայացվող պահանջներ,
- կարող է հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորից և այլ մասնակիցներից, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի ՀՀ մասնակիցներից պահանջել վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ կապված հաշվետվություններ և այլ տեղեկատվություն,
- կարող է սահմանել վճարահաշվարկային ծառայությունների իրականացման կանոններ և (կամ) վճարային գործիքների շրջանառության կանոններ և (կամ) հաշվարկների իրականացման ձևեր:

2004թ. նոյեմբերին ՀՀ ԿԲ-ն մշակել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային համակարգի հսկողության իրականացման հայեցակարգը», որի նպատակն է հստակեցնել և հրապարակայնորեն բացահայտել ՀՀ ԿԲ՝ վճարահաշվարկային համակարգի հսկողության քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային հարաբերությունները կարգավորվում են.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (01.01.1999թ.),
- «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով (30.06.1996թ.),
- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (30.06.1996թ.),
- «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (24.11.2004թ.),
- «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով (09.01.1997թ.),
- ՀՀ այլ օրենքներով,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով:

2004թ. նոյեմբերի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որն ուժի մեջ է 2005թ. հունիսի 28-ից, կարևոր տեղ է գրավում վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային ծառայություններ մատուցող բանկ չհանդիսացող կազմակերպությունների (վճարահաշվարկային կազմակերպությունների) գործունեությունը կարգավորելու գործում: Մասնավորապես, վերոնշյալ օրենքում տրված են վճարահաշվարկային բնագավառի հիմնական հասկացությունները, սահմանված են ՀՀ ԿԲ կողմից վճարահաշվարկային համակարգի գործունեության կարգավորման շրջանակները և վերահսկողության մեխանիզմները, սահմանված են վճարահաշվարկային համակարգերում հաշվարկների վերջնականության հետ կապված դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս բացառելու համակարգային ռիսկերի առաջացումը՝ կապված վճարահաշվարկային համակարգի մասնակցի լուծարման կամ սնանկության վարույթների հետ, սահմանված են վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման կարգը, վերջիններիս վերահսկողության մեխանիզմները և կիրառվող պատասխանատվության միջոցները:

2005թ.-ից մշակվել են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված մի շարք ՀՀ ԿԲ նորմատիվ ակտեր:

Ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեն ՀՀ կենտրոնական բանկը («Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան), բանկերը, վճարահաշվարկային և վարկային կազմակերպությունները (ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված համապատասխան լիցենզիայի հիման վրա), ինչպես նաև այլ անձինք, որոնք վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության օրենքների կամ միջազգային պայմանագրերի համաձայն:

ՀՀ տարածքում վճարահաշվարկային ծառայությունների մատուցման առանցքային դրույթները կանոնակարգված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով (01.01.1999թ.), որում մասնավորապես սահմանված են Հայաստանի Հանրապետությունում կիրառվող անկանխիկ հաշվարկների ձևերը և դրանց իրականացման ընդհանուր դրույթները, բանկային հաշվի և ավանդի պայմանագրերի պայմանները, բանկային հաշվում միջոցների անբավարարության դեպքում հաշվից դրամական միջոցները դուրս գրելու հերթականությունը, բանկային հաշվի վրա միջոցների մուտքագրման և դուրսգրման ժամկետները:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող վճարային գործիքները ունեն տարբեր աստիճանի կանոնակարգվածություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում իրականացված անկանխիկ վճարումների մոտ 99%-ը կազմում են վճարման հանձնարարականներով կրեդիտային փոխանցումները՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հատկապես այս գործիքի կանոնակարգմանը. ՀՀ տարածքում վճարման հանձնարարականներով իրականացվող փոխանցումների մասնակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը սահմանված են «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով (09.01.1997թ.), իսկ այդ գործիքով ՀՀ տարածքում փոխանցումների իրականացման առավելագույն ժամկետները սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան նորմատիվ ակտով, ըստ որի ներբանկային փոխանցումների դեպքում վճարումը շահառուին պետք է կատարվի ոչ ուշ քան հանձնարարականի ստացմանը հաջորդ բանկային օրը, լորո-նոստրո հաշիվների միջոցով փոխանցումների դեպքում՝ 1-2, իսկ միջբանկային այլ փոխանցումների դեպքում՝ 2-3 բանկային օրվա ընթացքումը՝ կախված այն բանից, թե շահառուն սպասարկվում է բանկի գլխամասում, թե մասնաճյուղում:

ՀՀ տարածքում չեկերով, պարբերաբար վճարումների հանձնարարականներով, ուղղակի դեբետագրման հանձնարարականներով, փաստաթղթային փոխանցումներով վճարումների իրականացման կանոնները սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան կարգերով («ՀՀ տարածքում փաստաթղթային փոխանցումների իրականացման մասին կարգ»՝ 03.16.1999թ., «ՀՀ պարբերաբար վճարումների հանձնարա-րականով փոխանցումների իրականացման մասին կարգ»՝ 02.01.2000թ., «ՀՀ միջոցների փոխանցումն ուղղակի դեբետագրման եղանակով իրականացնելու կարգ»՝ 04.25.2000թ., «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները»՝ նոր խմբագրությամբ՝ 20.05.2004թ., «Հայաստանի Հանրապետությունում չեկերի թողարկման, սպասարկման և շրջանառության մասին կարգ»՝ 24.05.2005թ.):

Վճարային քարտերով հաշվարկների իրականացումը հիմնականում կարգավորված է համապատասխան քարտային համակարգերի (ՄԱՍՏԵՐՔԱՐԴ, ՎԻԶԱ, ԱրՔա) կանոններով:

Էլեկտրոնային բանկային ծառայությունների և էլեկտրոնային վճարային համակարգերի անվտանգության տեսանկյունից կարևոր են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված «ՀՀ բանկային համակարգում գործառնական ռիսկերի կառավարման նվազագույն պահանջները» (26.01.1999թ.), որոնցում սահմանված են այն նվազագույն պահանջները, որոնք պետք է պարտադիր ձևով պահպանեն ՀՀ տարածքում գործող

բանկերը՝ ՀՀ բանկային համակարգում գործառնական ռիսկերի կանխման, հնարավորին չափով դրանց նվազեցման նպատակով:

Վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ կապված բանկ-հաճախորդ հարաբերությունները կարգավորվում են նաև բանկի և հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրերով:

Հայաստանի Հանրապետությունում գործող միջբանկային վճարահաշվարկային տարբեր համակարգերի գործունեությունը կանոնակարգված է այդ համակարգերի կանոններով, աշխատանքային արարողակարգերով, ձեռնարկներով, իսկ մասնակիցների անդամակցությունը համակարգերին ամրագրված է փոխադարձ պայմանագրերով:

2.1.2 Արժեթղթերին առնչվող իրավական դաշտը

Արժեթղթերի շուկան կարգավորող հիմնական իրավական ակտը 2000թ. ընդունված «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքն է: Օրենքը կարգավորում է արժեթղթերի շուկայում գործունեության կարգավորման կապակցությամբ ծագող հարաբերությունները և սահմանում է՝

ա) ՀՀ տարածքում արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և հրապարակային առուվաճառքի կարգը, ինչպես նաև օտարերկրյա արժեթղթերի՝ ՀՀ տարածքում տեղաբաշխման և հրապարակային առուվաճառքի կարգը.

բ) հաշվետու թողարկողի գործունեության, հաշվետվությունների հրապարակման, հաշվետու թողարկողի ղեկավարների և բաժնային արժեթղթերի խոշոր սեփականատերերի հաշվետվությունների ներկայացման կարգը.

գ) արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության իրականացման կարգը.

դ) ինքնակարգավորվող կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը.

ե) Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայի կարգավորման բնագավառում ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունները և պարտականությունները.

զ) արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվությունը՝ օրենքի և այլ իրավական ակտերի խախտման համար:

Բացի այդ, արժեթղթերի ոլորտը կարգավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

«Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ընդունվել են նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնցից է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» (05.12.2006թ.): Այս կանոնագրքում ներառված են՝

- մասնագիտական որակավորման և լիցենզավորման կարգերը.
- մասնագիտացված անձանց ներքին վերահսկողության կարգը.
- մասնագիտացված անձանց հաշվետվությունները.
- բրոքերային գործարքները կարգավորող կանոնները.
- ինքնակարգավորվող կազմակերպությունների գրանցման կարգը և հաշվետվությունները.
- Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ռեեստրի վարման կարգը:

Ենթաօրենսդրական դաշտի մշակման ուղղությամբ աշխատանքներ կծավալվեն նաև 2007թ. ընթացքում:

Գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումը, շրջանառությունը և մարումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Գանձապետական պարտատոմսերի գործակալ կամ դիլեր հանդիսացող անձանց հետ կնքված համապատասխան պայմանագրերով: ՀՀ ԿԲ պարտատոմսերի տեղաբաշխումը, շրջանառությունը և մարումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի պարտատոմսերի դիլեր հանդիսացող անձանց հետ կնքված համապատասխան պայմանագրերով:

Ներկայումս ՀՀ-ում առևտրային արժեթղթերի շրջանառությունը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի արժեթղթերի հանձնաժողովի (իսկ 2006թ-ից՝ ՀՀ ԿԲ-ի) իրավական ակտերով, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից սահմանված կանոններով:

Առևտրային արժեթղթերի հաշվետու թողարկողները, որոնց արժեթղթերը «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն ենթակա են գրանցման ֆոնդային բորսայի կամ Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի կողմից, պարտավոր են տվյալ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային, որն իրականացնում է այդ արժեթղթերով գործարքների վերջնահաշվարկները՝ իր մոտ վարվող արժեթղթերի հաշիվներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերով գործարքները կարող են կնքվել Հայաստանի ֆոնդային բորսայի միջոցով՝ վերջինիս կողմից սահմանված կանոնների համաձայն, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում արտաբորսայական առևտրի միջոցով: Պետական պարտատոմսերով գործարքները հիմնականում կնքվում են արտաբորսայական առևտրի միջոցով: Հայաստանի ֆոնդային բորսայում Գանձապետական պարտատոմսերով և առևտրային արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկներն իրականացվում են ՀՀ ԿԲ-ի և Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված ընթացակարգերի համաձայն:

2.1.3 Ածանցյալ գործիքներին առնչվող իրավական դաշտը

Ածանցյալների ոլորտը կարգավորող առանձին իրավական ակտեր չկան սահմանված:

2.1.4 Քլիրինգին և վերջնահաշվարկին առնչվող իրավական դաշտը

2.1.4.1 Ջուտացում, պրոցեսինգ, քլիրինգ և վերջնահաշվարկ

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունումից հետո վճարահաշվարկային բնագավառի մի շարք հասկացություններ իրավական սահմանում ստացան: Մասնավորապես, Օրենքով հստակ սահմանվեցին վճարահաշվարկային փաստաթուղթ, զուտացում, պրոցեսինգ, քլիրինգ, վերջնահաշվարկ, անվերադարձելիության պահ, վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահ, վճարում, միջոցների փոխանցում, ինչպես նաև մի շարք այլ հասկացությունները:

2.1.4.2 Պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի (այսուհետ՝ պրոցեսինգ և քլիրինգ) իրականացման համար ոչ-բանկ կազմակերպություններին անհրաժեշտ է ստանալ վճարահաշվարկային կազմակերպության համապատասխան

լիցենզիա, որը տրամադրվում է ՀՀ ԿԲ կողմից՝ Օրենքով և ՀՀ ԿԲ կանոնակարգ 17-ով սահմանված կարգով:

Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները ՀՀ ԿԲ կողմից տրված լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել պրոցեսինգ և (կամ) քլիրինգ երրորդ անձանց համար, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի թույլատրած այլ վճարահաշվարկային ծառայություններ, որոնք կապված են տվյալ տեսակի վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ: Այդ կազմակերպությունները կարող են իրականացնել նաև պրոցեսինգի, քլիրինգի հետ կապված ապարատային, ծրագրային համակարգերի, սարքերի, ծրագրերի ստեղծման, շահագործման, սպասարկման հետ կապված գործունեություն:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պետք է ունենան իրավաբանական անձի կարգավիճակ և չեն կարող իրականացնել առևտրային, արտադրական և այլ տիպի գործունեություն, բացառությամբ ՀՀ օրենքներով սահմանված գործունեության:

Պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է ունենա սահմանված մեծության կանոնադրական կապիտալ, որը չպետք է նվազեցվի իր գործունեության ընթացքում: Սահմանված են նաև տեխնիկական հագեցվածության, ծրագրային և անվտանգության պահանջներ: Կազմակերպության ղեկավարները կամ հավակնորդները պետք է համապատասխանեն համապատասխան կանոնակարգով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Վճարահաշվարկային կազմակերպությունն իր գործունեության կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու դեպքում պարտավոր է դրա վերաբերյալ որոշումը ներկայացնել Կենտրոնական բանկ՝ համաձայնեցման, որի արդյունքում ԿԲ-ն կարող է տալ կամ մերժել համաձայնության տրամադրումը՝ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան 2005թ. տարեվերջին սկսվել է վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը, համաձայն որի «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն ստացել է քարտային վճարումների պրոցեսինգի իրականացման լիցենզիա (տես 2.2.2.2 ենթակետը):

2.1.4.3 Վճարահաշվարկային փաստաթղթերի անվերադարձելիությունը, զուտացման անվերադարձելիությունը, վերջնահաշվարկի իրականացումը

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվել են վճարահաշվարկային փաստաթղթերի, զուտացման անվերադարձելիությունը և վերջնահաշվարկի իրականացումը:

<u>Վճարահաշվարկային փաստաթղթերի անվերադարձելիությունը</u>

Եթե վճարահաշվարկային փաստաթուղթը մուտքագրվել է վճարահաշվարկային համակարգ և համարվում է անվերադարձելի մինչև վճարահաշվարկային համակարգի մասնակցի վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահը, ապա վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն՝ վճարահաշվարկային փաստաթղթով սահմանված պարտավորություններն ուժի մեջ են մնում և ենթակա են անվերապահ կատարման ժամանակավոր կառավարչի կողմից:

Եթե վճարահաշվարկային փաստաթուղթը մուտքագրվել է վճարահաշվարկային համակարգ և համարվում է անվերադարձելի վճարահաշվարկային համակարգի մասնակցի

վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահից հետո, սակայն վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահը վրա հասնելու օրվա ընթացքում, ապա վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն վճարահաշվարկային փաստաթղթով սահմանված պարտավորություններն ուժի մեջ են մտնում և ժամանակավոր կառավարչի կողմից ենթակա են անվերապահ կատարման, եթե համակարգի օպերատորն ապացուցում է, որ տեղյակ չէր և (կամ) չէր կարող տեղյակ լինել մասնակցի վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահի մասին:

Վճարահաշվարկային համակարգի մասնակցի վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահի մասին իրավասու մարմնի որոշումը հետադարձ ուժ չունի մասնակցի այն իրավունքների կամ պարտավորությունների վրա, որոնք կապված են վճարահաշվարկային համակարգում հաշվարկների իրականացման հետ և ծագել են մինչև վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահը:

Վճարահաշվարկային համակարգ վճարահաշվարկային փաստաթղթի մուտքագրման, ինչպես նաև վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահը սահմանվում է վճարահաշվարկային համակարգի՝ Կենտրոնական բանկի հետ համաձայնեցված կանոններով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

<u>Զուտացման անվերադարձելիությունը</u>

Եթե վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն՝ համակարգում իրականացվում է զուտացում, ապա զուտացման արդյունքում վճարահաշվարկային համակարգի մասնակցի մոտ այլ մասնակցի (մասնակիցների) հանդեպ կարող է առաջանալ վճարում կատարելու միայն մեկ զուտ պարտավորություն կամ վճարում ստանալու միայն մեկ զուտ պահանջ:

Եթե վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն՝ վճարահաշվարկային համակարգում իրականացվում է զուտացում, և վճարահաշվարկային փաստաթուղթը մուտքագրվել է վճարահաշվարկային համակարգ և համարվում է անվերադարձելի մինչև վճարահաշվարկային համակարգի մասնակցի վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահը, ապա այդ վճարահաշվարկային փաստաթղթերի զուտացումը չի կարող անվավեր ճանաչվել և հետ հաշվարկվել:

Զուտացման հիման վրա հաշվարկներ իրականացնող համակարգերում գործում են վճարահաշվարկային փաստաթղթերի անվերադարձելիության վերոնշյալ կանոնները:

<u>Ֆինանսական ակտիվների օգտագործումը Կենտրոնական բանկի, քլիրինգ կամ վերջնահաշվարկ իրականացնող մասնակցի կողմից</u>

Վճարահաշվարկային համակարգի մասնակցի վճարահաշվարկային գործունեության ընդհատման պահն սկսելու օրվա դրությամբ նրա՝ Կենտրոնական բանկում, քլիրինգ կամ վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպությունում վճարահաշվարկային փաստաթղթերի կատարման հետ կապված պարտավորությունների կատարման ապահովման նպատակով դեպոնացված միջոցները (փող կամ արժեթղթեր) կարող են առանց որևէ սահմանափակման (արգելանքի) տնօրինվել, տիրապետվել և օգտագործվել Կենտրոնական բանկի, քլիրինգ կամ վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպության կողմից անվերադարձելի համարվող վճարումների վերջնահաշվարկն իրականացնելու նպատակով՝ այն չափով, որն անհրաժեշտ է վերջնահաշվարկի իրականացման համար:

2.1.4.4 Էլեկտրոնային փաստաթղթեր և էլեկտրոնային թվային ստորագրություն

2004թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթի ներկայացման ձևերը, դրանց պահպանումը, էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործման կարգը, դրանց կիրառումը, հավաստագրման կենտրոններին ներկայացվող պահանջները և հավաստագրման գործընթացը, հավաստագրում ներկայացվող անհրաժեշտ տեղեկատվությունը, հավաստագրի գործողության ժամկետը, և այլն:

Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության կիրառումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, վերոնշյալ օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են վերոնշյալ օրենքով նախատեսվածից տարբերվող նորմեր, ապա կիրառվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նորմերը:

Պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գանձապետարանը իր տեղեկատվական համակարգերում կիրառում է էլեկտրոնային փաստաթղթերը և էլեկտրոնային թվային ստորագրությունները «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորումն իրականացնող պետական մարմնի սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և նրա լիցենզավորած անձինք կիրառում են էլեկտրոնային փաստաթղթերը և էլեկտրոնային թվային ստորագրությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: ՀՀ կենտրոնական բանկի և նրա լիցենզավորած անձանց կողմից կիրառվող էլեկտրոնային թվային ստորագրությունների հավաստագրեր տրամադրող հավաստագրման կենտրոնների հավատարմագրումն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը՝ իր նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.2 Ֆինանսական հաստատությունների դերը վճարումների բնագավառում

2.2.1 Բանկային հատված

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է ՀՀ կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

ՀՀ կենտրոնական բանկ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) նպատակները, գործառույթները, իրավական կարգավիճակն ու իրավասությունները սահմանված են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ

օրենքով, համաձայն որի ՀՀ ԿԲ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները վճարահաշվարկային բնագավառում.

- թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը, կազմակերպում և կարգավորում է դրամաշրջանառությունը,
- իրականացնում է ֆինանսական համակարգի վերահսկողությունն ու կարգավորումը,
- կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեությունը,
- անհրաժեշտ պայմաններ է ապահովում ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար, այդ թվում՝ իրականացնում է վճարահաշվարկային համակարգերի հսկողություն,
- վճարահաշվարկային ծառայությունների ուղղակի մատուցում. ՀՀ ԿԲ-ն վճարահաշվարկային ծառայություններ է մատուցում միայն Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերին, ՀՀ կառավարությանը, որոշ հասարարական հիմնադրամներին: Այն կարող է դրամով կամ արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային ավանդներ ընդունել միայն ՀՀ պետական մարմիններից և բանկերից, միջազգային ֆինանսական և վարկային կազմակերպություններից, իսկ բացառիկ դեպքերում՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նաև այլ անձանցից:
- հանդիսանում է Կենտրոնական բանկի RTGS և DNS վճարահաշվարկային համակարգերի («Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգի», «Էլեկտրոնային վճարումների համակարգի», «Հաշվարկների քլիրինգային (զուտ) համակարգի») սեփականատեր, օպերատոր և հաշվարկային բանկ, վարում է առևտրային բանկերի թղթակցային, ինչպես նաև այլ մասնակիցների հաշվարկային հաշիվները: ՀՀ ԿԲ-ն հանդիսանում է նաև ««ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի» միջոցով իրականացված քարտային գործառնությունների և Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող արտարժույթի առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկների գործակալ, ինչպես նաև ապահովում է Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող առևտրային և պետական արժեթղթերով առուվաճառքի գործարքների դրամական (փողային) վերջնահաշվարկը: «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում», ինչպես նաև Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող արտարժույթի առուվաճառքի գործարքների դրամական վերջնահաշվարկները ապահովելու համար ՀՀ ԿԲ-ն վարում է նաև պետական պարտատոմսերի գործակալ կամ դիլեր հանդիսացող, ինչպես նաև արժութային դիլեր հանդիսացող ոչ բանկ կազմակերպությունների հաշվարկային հաշիվները:
- հանդիսանալով ՀՀ կառավարության ֆինանսական գործակալ՝ կազմակերպում է պետական պարտատոմսերի առաջնային տեղաբախշումը և մարումը, տոկոսների վճարումը, հանդիսանում է թողարկված պետական պարտատոմսերի կենտրոնական պահառու, իրականացնում է պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում կատարված գործարքների վերջնահաշվարկները: ՀՀ

ԿԲ-ն հանդիսանում է «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի» սեփականատեր և օպերատոր:

Բանկեր

Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեությունը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով: ՀՀ տարածքում բանկային գործունեությունը կարող է իրականացվել միայն ՀՀ ԿԲ կողմից տրվող բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը բանկային լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել բանկային գործունեությանը բնորոշ ֆինանսական գործառնություններ, այդ թվում՝ մատուցել վճարահաշվարկային ծառայություններ:

Բանկերը չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն:

Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ ԿԲ-ին:

2006թ. վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում էին 21 առևտրային բանկեր (այդ թվում՝ 100% արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ 4 բանկ) և նրանց 299 մասնաճյուղեր:

2.2.2 Ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններ

2.2.2.1 Վարկային կազմակերպություններ

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է «Վարկային կազմակերպությունների մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» և ՀՀ այլ օրենքներով, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով: ՀՀ տարածքում վարկային կազմակերպության գործունեությունը կարող է իրականացվել միայն ՀՀ ԿԲ կողմից տրվող վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի հիման վրա:

Վարկային կազմակերպությունները կարող են իրականացնել ՀՀ ԿԲ կողմից սահմանված այլ ֆինանսական գործառնություններ:

Վարկային կազմակերպություններին արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:

Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային հաշիվներ: Վարկային կազմակերպություններն անկանխիկ դրամական հաշվարկները կատարում են վարկային կազմակերպությանը սպասարկող բանկի միջոցով: Միայն ունիվերսալ վարկային կազմակերպությունները կարող են մատուցել սահմանափակ վճարահաշվարկային ծառայություններ, այն է՝ թողարկել վարկային քարտեր և իրականացնել այդ քարտերի սպասարկումը:

Վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ ԿԲ-ին:

2006թ. վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործում էին 17 վարկային կազմակերպություն (իրենց 12 մասնաճյուղերով):

2.2.2.2 Վճարահաշվարկային կազմակերպություններ (վճարահաշվարկային ծառայություններ մատուցող ոչ բանկ կազմակերպություններ)

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված են ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրվող 2 տեսակի լիցենզիաներ, այն է՝

1. դրամական (փողային) փոխանցումների իրականացման,
2. վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման:

Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիայի հիման վրա բանկ չհանդիսացող վճարահաշվարկային կազմակերպությունները կարող են մատուցել ստորև նշված սահմանափակ վճարահաշվարկային ծառայություններ:

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները, ՀՀ ԿԲ կողմից տրված լիցենզիայի հիման վրա, կարող են որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել վճարումների ընդունումը և կատարումը՝ առանց բանկային հաշիվների բացման, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի թույլատրած այլ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, որոնք կապված են տվյալ տեսակի վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ: Այդ կազմակերպությունները կարող են օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնել նաև արտարժույթի դիլերային առուվաճառք և արտարժույթի առուվաճառք, ինչպես նաև մատուցել փոստային ծառայություններ:

Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները ՀՀ ԿԲ-ի կողմից տրված լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել պրոցեսինգ և (կամ) քլիրինգ երրորդ անձանց համար, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի թույլատրած այլ վճարահաշվարկային ծառայություններ, որոնք կապված են տվյալ տեսակի վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ: Այդ կազմակերպությունները կարող են իրականացնել նաև պրոցեսինգի, քլիրինգի հետ կապված ապարատային, ծրագրային համակարգերի, սարքերի, ծրագրերի ստեղծման, շահագործման, սպասարկման հետ կապված գործունեություն:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պետք է ունենան իրավաբանական անձի կարգավիճակ և չեն կարող իրականացնել առևտրային, արտադրական և այլ տիպի գործունեություն, բացառությամբ ՀՀ օրենքներով սահմանված գործունեության:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան 2005թ. տարեվերջին սկսվել է վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը, համաձայն որի մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ «ՀայՓոստ» ՓԲԸ-ն, ստացել են դրամական փոխանցումների, իսկ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն՝ քարտային վճարումների պրոցեսինգի իրականացման լիցենզիաներ:

2.2.3 Վճարային ծառայություններ մատուցող այլ հաստատություններ

2.2.3.1 Քարտային ընկերություններ

ՀՀ-ում գործում է 1 քարտային ընկերություն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն: Այն առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ ԿԲ և 10 առևտրային բանկերի կողմից 2000թ. մարտին՝ ՀՀ-ում վճարային քարտերով հաշվարկների միասնական համակարգի ստեղծման և անկանխիկ մանրածախ վճարումների զարգացման նպատակով: «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հանդիսանում է «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի օպերատոր, որի խնդիրներն հետևյալն են՝

- ՀՀ-ում «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի ընդհանուր ղեկավարումը,
- համակարգի գործունեության ընդհանուր կանոնների և ստանդարտների մշակումը,
- քարտերի սպասարկման ենթակառուցվածքի ստեղծումն ու ընդլայնումը,
- համակարգի շրջանակներում թողարկված քարտերով կատարված գործառնությունների պրոցեսինգը,
- համակարգում կիրառվող տեխնիկական սարքավորումների անխափան աշխատանքի ապահովումը,
- «ԱրՔա» քարտերով գործառնությունների արդյունքում մասնակիցների «դիրքերի» հաշվարկումը և դրանց փոխանցումը հաշվարկային բանկ և համակարգի մասնակիցներին,
- համակարգի մասնակիցների միջև կոմիսիոն վճարների գծով «դիրքերի» հաշվարկումը և դրանց փոխանցումը հաշվարկային բանկ և համակարգի մասնակիցներին,
- միջազգային քարտային վճարային համակարգերի հետ համագործակցությունը և հնարավորության դեպքում միջազգային վճարային համակարգերի քարտերի սպասարկումը,
- «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի անդամներին միջազգային վճարային համակարգերի քարտերի թողարկման և/կամ սպասարկման համար հովանավորության տրամադրումը:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի բաժնետերեր կարող են լինել ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերը ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, ինչպես նաև քարտային բնագավառում մասնագիտացված կազմակերպությունները:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հանդիսանում է MasterCard Europe միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ (Principal Member) և պրոցեսինգային ծառայություններ մատուցող կենտրոն (Member Service Provider), ինչպես նաև VISA համակարգի համար պրոցեսինգային ծառայություններ մատուցող կենտրոն (Third Party Processor):

2006թ. վերջի դրությամբ ՀՀ-ում ԱրՔա քարտերով վճարումների միասնական համակարգի անդամ բանկերի թիվը կազմել է 19, ՄաստերՔարդ համակարգինը՝ 10, իսկ Վիզա համակարգինը՝ 7:

2006թ. վերջի դրությամբ ՀՀ-ում թողարկված քարտերի քանակը կազմել է 209 113, որից 92 283-ը՝ ԱրՔա, 11 817-ը՝ ՄաստերՔարդ, 90 733-ը՝ Վիզա:

2.2.3.2 Փոստային հիմնարկներ

Ինչպես և մի շարք այլ երկրներում, ՀՀ-ում ևս փոստը մեծ դեր է խաղում վճարահաշվարկային ծառայությունների մատուցման բնագավառում, ինչը պայմանավորված է բանկային համակարգի անհավասարաչափ զարգացվածությամբ ողջ ՀՀ տարածքում և բնակչության մեծամասնության մոտ բանկային հաշիվների բացակայությամբ:

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի (14.12.2004թ.) համաձայն դրամական միջոցների փոստային փոխադրությունները, այն է՝ դրամական միջոցների, ինչպես նաև գանձված կոմունալ վճարների և այլ տեսակի գումարների ընդունման, մշակման, փոխադրության գործառնությունները հավասարեցված են դրամական (փողային) փոխանցումներին և ենթակա են լիցենզավորման ՀՀ ԿԲ կողմից, բացառությամբ փոստային կապի ազգային օպերատորի՝ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով մատուցած դրամական միջոցների փոստային փոխադրությունների:

Դրամական միջոցների փոստային փոխադրությունները մատուցվում են փոստային կապի ազգային օպերատոր «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից՝ ՀՀ ԿԲ-ից ստացված դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիայի հիման վրա: «Հայփոստը», ունենալով մասնաճյուղային լայն ցանց հանրապետության հեռավոր և դժվար հասանելի շրջաններում և փոքր բնակավայրերում (ավելի քան 900 մասնաճյուղեր և 100 հեռակետեր), ավանդական փոստային ծառայություններին զուգահեռ մատուցում է մի շարք վճարահաշվարկային ծառայություններ, այն է՝

- իրականացնում է դրամական միջոցների փոստային փոխադրություններ ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ ԱՊՀ և այլ երկրներ,
- իրականացնում է դրամական միջոցների փոխանցումներ միջազգային դրամական (փողային) փոխանցումների «Կոնտակտ», «Թրավելեքս» և «Սթեֆի/. համակարգերով,
- ընդունում է կոմունալ վճարումներ, իրականացնում է կենսաթոշակների և նպաստների վճարումներ բնակչությանը:

2.3 Ֆինանսական հաստատությունների դերը արժեթղթերի բնագավառում

2.3.1 Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք

Համաձայն «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի (06.07.2000թ.) Հայաստանի հանրապետությունում արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք են բրոքերային և դիլերային ընկերությունները, արժեթղթերի հավատարմագրային կառավարիչները, արժեթղթերի պահառուները և օրենքով սահմանված այլ անձինք: Մասնագիտացված անձ կարող է լինել միայն իրավաբանական անձը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեությունը լիցենզավորվում է ՀՀ ԿԲ կողմից, որն ունի մասնագիտացված անձանց գործունեությունը վերահսկելու իրավունք:

2.3.2 Բրոքերային և դիլերային ընկերություններ

Բրոքերային գործունեություն է համարվում հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա այլ անձի կամ անձանց հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու գործունեությունը: Դիլերային գործունեություն է համարվում տվյալ անձի հաշվին արժեթղթերի առք ու վաճառքի գործունեությունը, եթե այն տվյալ անձի գործունեության հիմնական մասն է կազմում:

2.3.3 Արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ

Արժեթղթերի հավատարմագրային կառավարումը անձի կողմից պարգևավճարի դիմաց իր տիրապետմանը հանձնված այլ անձին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային

կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումն է: Կառավարչին արգելվում է իրականացնել հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման հետ չառնչվող գործունեություն, բացառությամբ բրոքերային ընկերություններին և պահառուներին թույլատրված գործունեությունների:

2.3.4 Արժեթղթերի պահառուները

Արժեթղթերի պահառության գործունեությունը արժեթղթերի պահպանության, պահառության և արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման ու փոխանցման գործունեությունն է: Արժեթղթերի պահառու է համարվում պահառության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձը, ինչպես նաև Կենտրանական դեպոզիտարիան: Յուրաքանչյուր պահառու համարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի ենթապահառու:

2006թ. վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց թիվը 20 էր:

2.3.5 Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը

2000 թվականի օգոստոս ամսին ուժի մեջ մտավ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որն էլ պահառության, ռեեստրավարման և հաշվարկաքլիրինգային գործառույթների իրականացման մենաշնորհը Հայաստանի Հանրապետության տարածքում վերապահեց Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությանը, որը պետք է հիմնադրվեր արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց՝ բրոքեր/դիլերների և բանկերի կողմից ոչ առևտրային հիմունքներով: Այսպիսով 2001թ. ստեղծվեց Հայաստանի կենտրոնական դեպոզիատարիա ԻԿԿ-ն, որը հանդիսանում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ի իրավահաջորդը: Հայաստանի կենտրոնական դեպոզիատարիա ԻԿԿ-ն իրականացնում է կենտրոնացված պահառուի, արժեթղթերի ռեեստրի, ինչպես նաև հաշվանցման (քլիրինգի) և վերջնահաշվարկի գործառույթները: Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ն անդամ են հանդիսանում Հայաստանի ֆոնդային բորսան, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք, բանկերը (այդ թվում՝ նաև ՀՀ ԿԲ-ն):

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) որպես կենտրոնացված պահառու՝
   - մատուցում է հաճախորդներին պահառության ծառայություններ,
   - ապանյութականացնում է արժեթղթերը և վարում դրանց հաշիվները,
2) որպես արժեթղթերի կենտրոնացված ռեեստր՝ թողարկողի հետ կնքած պայմանագրի հիման վրա իրականացնում է արժեթղթերի սեփականատերերի, արժեթղթերի քանակի, տեսակի և դասի վերաբերյալ տվյալների միասնական համակարգի (ռեեստրի) վարումը,
3) որպես արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգ և վերջնահաշվարկ իրականացնող գործակալ՝
   - որոշում և հաշվանցում է փոխադարձ պարտավորությունները (տեղեկատվության հավաքում, ճշտում և հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պատրաստում),
   - արժեթղթերով գործարքների արդյունքում փոխանցում է արժեթղթերը հաշիվներում և կատարում վերջնահաշվարկ,
   - ստեղծում է երաշխիքային հիմնադրամներ՝ իր գործառույթների իրականացման ռիսկերը նվազեցնելու համար,

- վճարման և վերջնահաշվարկի հարցերում կարող է հանդես գալ որպես կողմերի գործակալ:

2.3.6 Ֆոնդային բորսաներ

Ֆոնդային բորսան ինքնակարգավորվող կազմակերպություն է, որի գործունեությունը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոններով:

Ֆոնդային բորսան կազմակերպում է արժեթղթերի հրապարակային առևտուր՝ արժեթղթերի գնանշում, դրանց հիման վրա գործարքների կնքում, կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշում և հաշվանցում (քլիրինգ): Ֆոնդային բորսան իրավունք ունի կազմակերպելու արտարժույթի հրապարակային առևտուր միայն արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիայի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած կարգով: Ֆոնդային բորսան իրավունք ունի կազմակերպելու ֆոնդային այլ ապրանքների հրապարակային առևտուր՝ օրենքով, դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով և իր կանոններով սահմանված պահանջներին համապատասխան: Ֆոնդային բորսան ֆոնդային ապրանքներով առևտրի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման հարցում կարող է հանդես գալ որպես կողմերի գործակալ:

Ֆոնդային բորսան իրավունք չունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացնել որևէ այլ ձեռնարկատիրական գործունեություն:

Ֆոնդային բորսայի անդամ կարող են դառնալ միայն բրոքերային (դիլերային) ընկերությունները:

Ֆոնդային բորսայի միջոցների օգտագործմամբ արժեթղթերի և ֆոնդային այլ ապրանքների առևտրին ուղղակիորեն մասնակցելու իրավունք ունեն միայն նրա անդամները, պետական պարտատոմսերով հրապարակային առևտրին՝ նաև ՀՀ կենտրոնական բանկը, առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները, արտարժույթով հրապարակային առևտրին՝ նաև ՀՀ կենտրոնական բանկը, առևտրային բանկերը, վարկային կազմակերպությունները և արտարժույթի դիլերային առքուվաճառք իրականացնող անձինք: Այլ անձինք բորսայական առևտրին կարող են մասնակցել միայն Բորսայի անդամների և ուղղակիորեն մասնակցելու իրավասություն ունեցող այլ անձանց միջոցով:

Ներկայումս Հայաստանում գրանցված է 1 ֆոնդային բորսա՝ Հայաստանի ֆոնդային բորսան:

2006թ. վերջի դրությամբ Հայաստանի ֆոնդային բորսայում գրանցված է եղել 35 հաշվետու թողարկողի 37 դասի բաժնետոմս, որոնցից գործարքների առարկա են հանդիսացել 18-ը: 2006թ. ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվել է 2,149,700.9 հազ. ՀՀ դրամի 1181 գործարք: Գործարքների առարկա են հանդիսացել 56 թողարկողների արժեթղթեր:

2.4 Կենտրոնական բանկի դերը: Շուկայի կառուցվածքը և կարգավորումը:

2.4.1 ՀՀ կենտրոնական բանկի հիմնական և իրավական ակտերով սահմանված այլ խնդիրները

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով

Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

Կենտրոնական բանկի այլ խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.

բ) գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը.

գ) Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.

դ) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.

ե) արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝

ա) իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը.

բ) հանդիսանում է կառավարության ֆինանսական համակարգի գործակալն ու խորհրդատուն.

գ) լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը.

դ) որպես վերջին ատյանի վարկատու վարկեր է տրամադրում բանկերին.

ե) կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն գործունեությունը.

զ) տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները.

է) իրականացնում է դրամավարկային և ֆինանսական վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.

ը) իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:

2.4.2 ՀՀ կենտրոնական բանկի դերը վճարահաշվարկային բնագավառում

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն ունի լայն իրավասություններ վճարահաշվարկային բնագավառում.

2.4.2.1 Գործառնական դերը

ՀՀ Կենտրոնական բանկը վճարահաշվարկային ծառայություններ է մատուցում միայն Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերին, ՀՀ կառավարությանը, որոշ հասարարական հիմնադրամներին: «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների

իրականացման համակարգում», ինչպես նաև Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող արտարժույթի առուվաճառքի գործարքների դրամական վերջնահաշվարկները ապահովելու համար ՀՀ կենտրոնական բանկը վարում է նաև պետական պարտատոմսերի գործակալ կամ դիլեր հանդիսացող, ինչպես նաև արժութային դիլեր հանդիսացող ոչ բանկ կազմակերպությունների հաշվարկային հաշիվները: Ոչ բանկային կազմակերպությունները, իրավաբանական և ֆիզիկական անձիք սպասարկվում են Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերում:

Կենտրոնական բանկը առանցքային դեր է զբաղեցնում Հայաստանի Հանրապետությունում գործող վճարահաշվարկային համակարգերում: Այն հանդիսանում է Կենտրոնական բանկի «Էլեկտրոնային վճարումների համակարգի» և «Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգի» սեփականատեր և օպերատոր (տես 4.1.1 և 4.1.2 կետերը): Այդ համակարգերում վերջնահաշվարկներն իրականացվում են առևտրային բանկերի թղթակցային հաշիվների և այլ մասնակիցների հաշվարկային հաշիվների միջոցով, որոնք վարվում են ՀՀ ԿԲ-ում: Կենտրոնական բանկը հանդիսանում է ««ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի» միջոցով իրականացված քարտային գործառնությունների (տես 4.2.1 կետը) և Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող արտարժույթի առուվաճառքի գործարքների (տես 4.4 կետը) վերջնահաշվարկների գործակալ, ինչպես նաև ապահովում է Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող առևտրային և պետական արժեթղթերով առուվաճառքի գործարքների դրամական (փողային) վերջնահաշվարկը (տես 6.2 կետը):

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն, հանդիսանալով ՀՀ կառավարության ֆինանսական գործակալ՝ ՀՀ ԿԲ-ն կազմակերպում է պետական պարտատոմսերի առաջնային տեղաբախշումը և մարումը, տոկոսների վճարումը, հանդիսանում է թողարկված պետական պարտատոմսերի կենտրոնական պահառու, իրականացնում է պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում կատարված գործարքների վերջնահաշվարկները: ՀՀ ԿԲ-ը «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի» սեփականատերն է և օպերատորը (տես 6.1 կետը):

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է դրամով կամ արտարժույթով ցպահանջ կամ ժամկետային ավանդներ ընդունել միայն Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից և բանկերից, միջազգային ֆինանսական և վարկային կազմակերպություններից, իսկ բացառիկ դեպքերում՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նաև այլ անձանցից:

2.4.2.2 Դրամաշրջանառության կազմակերպման դերը

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամի և մետաղադրամի թողարկման և շրջանառությունից դուրս բերման մենաշնորհը տրված է ՀՀ ԿԲ-ին:

Թողարկված և շրջանառությունից չհանված թղթադրամն ու մետաղադրամը հանդիսանում են ՀՀ ԿԲ-ի անվերապահ պարտավորությունը և ապահովված են նրա բոլոր միջոցներով: ՀՀ ԿԲ-ն կառավարում է Հայաստանի Հանրապետության արժույթի պահուստները, կազմում է Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկման ծրագիրը և ապահովում թղթադրամի և մետաղադրամի կանոնավոր մատակարարումը:

ՀՀ ԿԲ-ը կազմակերպում և ապահովում է թղթադրամի տպագրումը և մետաղադրամի հատումը, ՀՀ ԿԲ-ում առկա թղթադրամի և մետաղադրամի անվտանգ պահպանումը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքում՝ դրանց ոչնչացումը:

ՀՀ ԿԲ-ը սահմանում է թղթադրամի և մետաղադրամի անվանական արժեքը, չափը, կշիռը, պատկերներով ու մակագրություններով էսքիզը, պաշտպանական և վճարունակության հատկանիշները:

ԿԲ-ն անվճար փոխանակում է հնամաշ ու վնասված, սակայն վճարունակության հատկանիշներին համապատասխանող թղթադրամներն ու մետաղադրամները:

ՀՀ ԿԲ-ն ընդունում է դրամաշրջանառությունը կանոնակարգող իրավական ակտեր:

ՀՀ ԿԲ-ն թողարկում է նաև հուշադրամներ:

Հայաստանի Հանրապետության մարզերում դրամարկղային սպասարկումը ապահովվում է ՀՀ ԿԲ-ի 3 դրամարկղային տարածքային կենտրոնների միջոցով:

2.4.2.3 Վճարահաշվարկային համակարգերի հսկողություն (Oversight)

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ՀՀ ԿԲ խնդիրներից է հանդիսանում գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը:

ՀՀ ԿԲ-ն մշտապես աշխատանքներ է տանում իր կողմից շահագործվող վճարահաշվարկային համակարգերը ավելի արդյունավետ և անվտանգ դարձնելու ուղղությամբ:

2004թ. նոյեմբերին ՀՀ ԿԲ-ի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային համակարգի հսկողության իրականացման հայեցակարգը», որը ևս մեկ անգամ վերանայվել և հաստատվել է նախագահի համապատասխան որոշմամբ 2006թ. դեկտեմբերին: Այս հայեցակարգի նպատակն է հստակեցնել և հրապարակային դարձնել ՀՀ ԿԲ՝ վճարահաշվարկային համակարգի հսկողության քաղաքականությունը: Հայեցակարգը սահմանում է ՎՀՀ-ի նպատակները, շրջանակները, ՎՀՀ շրջանակներում ներառված համակարգերին ներկայացվող պահանջները, ՎՀՀ իրականացման գործընթացը, համագործակցությունը այլ իրավասու մարմինների հետ և ՎՀՀ արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և տեղեկատվության տրամադրման գործընթացը: Այս հայեցակարգի հիման վրա հաստատվել է ՀՀ-ում գործող և ՎՀՀ շրջանակներում ներառված վճարային համակարգերի գնահատման ժամանակացույց, համաձայն որի 2007թ. ընթացքում նախատեսվում է սկսել գործող և ՎՀՀ շրջանակներում ներառված վճարահաշվարկային համակարգերի գնահատման աշխատանքները:

2.5 Բանկային համակարգի կարգավորում

2.5.1 Ֆինանսական համակարգի միասնական կարգավորում և վերահսկողություն

Հայաստանի Հանրապետությունում ամբողջ ֆինանսական հատվածի կարգավորումն իրականացվում է 1 մարմնի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի և այլ ՀՀ օրենքների համաձայն ՀՀ կենտրոնական բանկը լիցենզավորում է բանկերը, վարկային և վճարահաշվարկային կազմակերպությունները, արժութային գործարքներ իրականացնող մասնագիտացված անձանց, իրականացնում է իր կողմից լիցենզավորվող անձանց կարգավորումը և վերահսկողությունը:

2005թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի միավորված կարգավորման և վերահսկողության ներդրման» հայեցակարգը, որը արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը: Ըստ հայեցակարգի՝ միավորված կարգավորման և վերահսկողության ստեղծումը թույլ կտա էականորեն բարձրացնել ֆինանսական շուկայի ռիսկերի բացահայտման արդյունավետությունը, այն դյուրին կդարձնի ֆինանսական շուկայի զարգացմանն ուղղված միասնական միջոցառումների մշակման և իրականացման գործընթացը, կբարձրացնի ֆինանսական շուկայում ճգնաժամային իրավիճակների կանխարգելմանը միտված միջոցառումների արդյունավետությունը՝ էականորեն բարձրացնելով որոշումներ ընդունելու օպերատիվությունը, կնվազեցնի վերահսկողության և կարգավորման հետ կապված ծախսերը:

2005թ. դեկտեմբերի 22-ին ընդունվել է «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին փոխանցելու հետ կապված միջոցառումները, ՀՀ կենտրոնական բանկի որպես ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող մարմնի լիազորությունները:

Ըստ «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքի՝ արժեթղթերի շուկայի մասնակիցների, ինվեստիցիոն ընկերությունների, ինվեստիցիոն հիմնադրամների, կուտակային կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունների, ապահովագրական գործունեություն իրականացնողների, գրավատների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին: 2006թ. հունվարի 1-ից դադարում են վերը նշված անձանց լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը իրականացնող համապատասխան պետական իրավասու մարմինների, այն է Հայաստաի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան լիազորությունները:

ՀՀ Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների, կենսաթոշակային գործունեություն իրականացնող ոչ պետական կազմակերպությունների, ապահովագրական գործունեություն իրականացնողների, գրավատների և իրենից լիցենզիա ստացած այլ անձանց (այսուհետ՝ վերստուգվող անձինք) վերահսկողությունն իրականացնում է.

- *տեղում ստուգումների (on-site supervision) միջոցով* «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Տեղում ստուգումները կարող են լինել՝ հերթական, արտահերթ և նպատակային
- *ամենօրյա հեռակա վերահսկողության միջոցով (off-site supervision)* վերստուգվող անձանց կողմից օրենքով, Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի խորհրդի, նախագահի կամ վերստուգող ստորաբաժանման կողմից պահանջվող՝ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների,

ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման միջոցով:

2.5.2 Դեպոզիտների ապահովագրության սխեմաները

2004 թվականի նոյեմբերի 24-ին ընդունվեց «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ ավանդատու) պատկանող բանկային ավանդների՝ օրենքով սահմանված չափով հատուցումը երաշխավորելու հետ կապված հարաբերությունները:

Վերոնշյալ օրենքի իմաստով բանկային ավանդ է համարվում՝

ա) ավանդատուի կամ երրորդ անձի կողմից հօգուտ ավանդատուի բանկին տրամադրված կամ բանկում առկա դրամական գումարը, որը ենթակա է վերադարձման և (կամ) վճարման ավանդատուին.

բ) ավանդատուի բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները.

գ) բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները.

դ) սույն մասի «ա», «բ» և «գ» կետերով նախատեսված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները:

Վերոնշյալ օրենքի իմաստով բանկային ավանդ չեն համարվում այն դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ կամ որպես գույք կամ գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու կամ աշխատանք կամ ծառայություն մատուցելու հատուցում կամ որպես պարտավորության ապահովման միջոց:

Վերոնշյալ օրենքի հիման վրա 2005 թվականի մարտ ամսին ստեղծվել է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ), որի հիմնադիրը ՀՀ կենտրոնական բանկն է:

Հիմնադրամի միջոցները ձևավորվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի (բացառությամբ ՀՀ տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և անվճարունակ բանկերի) կողմից կատարվող պարբերական, միանվագ և լրացուցիչ երաշխիքային վճարների հաշվին:

Պարբերական (եռամսյակային) երաշխիքային վճարների գումարի չափը կազմում է հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան 1 միլիոն դրամը:

Միանվագ երաշխիքային վճարները վճարվում են նոր ստեղծվող բանկերի կողմից՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից 10-օրյա ժամկետում՝ 15 միլիոն դրամի չափով: Լրացուցիչ երաշխիքային վճարը կատարվում են այն դեպքում, երբ Հիմնադրամի միջոցները բավարար չեն օրենքով սահմանված կարգով և չափով երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնելու համար:

Լրացուցիչ երաշխիքային վճարների չափը հաշվարկում է Հիմնադրամը:

Օրենքի համաձայն երաշխավորված բանկային ավանդ է համարվում ավանդատուի բանկում ներդրած դրամային և արտարժութային բանկային ավանդը՝ հետևյալ չափերով.

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային ավանդ՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային ավանդ՝ մինչև 1 միլիոն ՀՀ դրամ,
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 1 միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամով,
- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային ավանդներ, և նրա դրամային ավանդի գումարը պակաս է 1 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 1 միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Ընդ որում՝ ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք է համարվում «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ կամ սնանկ ճանաչելը, և եթե բանկը ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ ի վիճակի չէ օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում վերադարձնել ավանդները:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը սահմանվում է վերոնշյալ օրենքով և համապատասխան այլ իրավական ակտերով:

2.5.3 Փողերի լվացումը կանխարգելող միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման (ՓԼ) դեմ պայքարի միջոցառումներն ընդգրկել են հետևյալ բնագավառները՝

- ՓԼ դեմ պայքարի օրենսդրության մշակումը և ընդունումը,
- ՓԼ դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումը և միջգերատեսչական համագործակցությունը,
- ՓԼ դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցությունը,
- ՓԼ դեմ պայքարի ոլորտում ուսուցումը և վերապատրաստումը:

2.5.3.1 ՓԼ դեմ պայքարի օրենսդրության մշակումը և ընդունումը

ՓԼ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությունը սկսել է գործել դեռևս 2002 թվականից, երբ Կենտրոնական բանկի կողմից ընդունվել է «Բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռքբերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5-ը: Այդ կանոնակարգը, սակայն, տարածվում էր միայն ֆինանսական հաստատությունների նկատմամբ և չէր կարգավորում ՓԼ դեմ պայքարի միջազգային ստանդարտներով սահմանված բոլոր հարցերը:

2004 թվականին ընդունվել և ներկայումս գործում է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա փոփոխություններ են կատարվել նաև այլ օրենքներում: Նշված օրենքը ՓԼ դեմ պայքարի ոլորտում հստակ սահմանում է ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների, ֆինանսական հետախուզության մարմնի, իրավապահ ու վերահսկող մարմինների գործառույթներն ու համագործակցության կարգը:

Փողերի լվացման օրենսդրությունը նաև ներառում է՝

- ՀՀ քրեական օրենսգիրքը, որը քրեականացնում է ՓԼ-ն (190-րդ հոդված),

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որը պարտադիր կալանքի մեխանիզմներ է սահմանում ՓԼ համար օգտագործված և ստացված եկամուտների համար (233-րդ հոդված):

ՀՀ ԿԲ խորհրդ կողմից ընդունվել են որոշումներ, որոնք կարգավորում են հաշվետուների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանցով ներառվող տեղեկությունները: Նախատեսվում է ընդունել նաև «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի դրույթների պատշաճ կիրարկումն ապահովող կանոնակարգ:

2.5.3.2 ՓԼ դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումը և միջգերատեսչական համագործակցությունը

ՓԼ դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգն ընդգրկում է՝

- *Ֆինանսական դիտարկումների կենտրոնը՝ որպես ֆինանսական հետախուզության ազգային մարմին.* այն ստեղծվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ ՀՀ կենտրոնական բանկի կազմում: Ֆինանսական դիտարկումների կենտրոնի իրավասությունները ներառում են ֆինանսական տեղեկատվության (այդ թվում՝ կասկածելի գործարքների մասին) ստացումը, վերլուծությունը և իրավապահ մարմիններին ու օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին տրամադրումը:
- *ՓԼ դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինները (ստորաբաժանումները).* ՀՀ դատախազության, ոստիկանության և այլ իրավապահ մարմիններում առանձին ստորաբաժանումների վրա դրվել է փողերի լվացման գործերի քրեական հետապնդման գործառույթը:
- *ՓԼ դեմ պայքարի ոլորտում վերահսկող մարմինները.* ՀՀ-ում միասնական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինը՝ ՀՀ կենտրոնական բանկը (Ֆինանսական վերահսկողության վարչությունը) իրականացնում է ֆինանսական հաստատությունների նկատմամբ վերահսկողություն նաև փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում: Ոչ ֆինանսական հաստատություններին վերահսկող մարմինների առջև նույնպես խնդիր է դրված իրականացնելու վերահսկվող հաստատությունների փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում միջոցառումների ստուգում:

Նշված մարմինները միմյանց հետ համագործակցում են կնքված փոխըմբռնման համաձայնագրերի շրջանակներում: Միջգերատեսչական համագործակցությունն իրականացվում է նաև 2002 թվականին ՀՀ Նախագահի կարգադրությամբ ստեղծված «ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» հանձնաժողովի շրջանակներում:

2.5.3.3 ՓԼ դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցությունը

ՓԼ դեմ պայքարի ոլորտում ՀՀ միջազգային համագործակցության առավել կարևոր ուղղություններն են.

- Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի անդամ: Այդ կապակցությամբ, ՀՀ պատվիրակությունը մասնակցում է ՄԱՆԻՎԱԼ-ի բոլոր լիագումար նիստերին և այլ աշխատանքներին: ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից 2004 թվականին իրականացվել է Հայաստանի Հանրապետության ՓԼ դեմ պայքարի 1-ին փուլի գնահատումը: Հաջորդ գնահատումը նախատեսվում է իրականացնել 2008 թվականին:

- Հայաստանի Հանրապետությունը 2006 թվականին ձեռք է բերել Հանցավոր եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման Եվրասիական խմբի դիտորդի կարգավիճակ: ՀՀ ներկայացուցիչները մասնակցում են նաև Եվրասիական խմբի աշխատանքներին:

- 2007 թվականին Ֆինանսական դիտարկումների կենտրոնը դարձել է Էգմոնտ խմբի անդամ, որը հնարավորություն է տվել անվտանգ ցանցի միջոցով տեղեկատվություն փոխանակել օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ:

- Հայաստանի Հանրապետությունը ՓԼ դեմ պայքարի ոլորտում համագործակցում է նաև ՄԱԿ-ի ստորաբաժանումների, Արժույթի միջազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու այլ միջազգային կառույցների հետ:

2.5.3.4 ՓԼ դեմ պայքարի ոլորտում ուսուցում և վերապատրաստումը

2006 թվականին «ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» հանձնաժողովը հաստատել է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ուսուցման ազգային ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում ուսուցման կարիքների վերլուծության հիման վրա ուսումնական ու վերապատրաստման բնույթի միջոցառումներ են կազմակերպվում ինչպես ֆինանսական հաստատությունների, այնպես էլ ֆինանսական դիտարկումների կենտրոնի, իրավապահ ու վերահսկող մարմինների ներկայացուցիչների համար: Այդ միջոցառումները նպատակաուղղված են բարձրացնել իրավասու գերատեսչությունների իրազեկությունը ՓԼ/ԱՖ հնարավոր հետևանքների վերաբերյալ, մշակել ու զարգացնել դրանց կանխարգելման գործնական կարողություններ:

2.6 Այլ մասնավոր և հասարակական ոլորտի մասնակիցների դերը

2.6.1 Հայաստանի բանկերի միություն

Հայաստանի բանկերի միությունը ՀՀ տարածքում գործող բանկերի միություն է, որը ստեղծվել է 1995թ. սեպտեմբերին: Այն ոչ առևտրային կազմակերպություն է, չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ, իսկ ստացված շահույթը չի բաշխում մասնակիցների միջև: Այն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր հաշիվները բանկերում: Բանկերի միությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ:

Բանկերի միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների միացյալ շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող,
- մասնակցել ՀՀ բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և հասարակական փորձաքննությանը,
- անդամներին ապահովել ՀՀ և արտասահմանյան բանկային գործունեության մասին տեղեկատվական նյութերով, տեղեկություններով անվստահելի վարկառուների մասին, կազմակերպել հրատարակչական աշխատանքներ,
- օժանդակել բանկային կապի առաջավոր ձևերի արմատավորմանը համակարգում՝ հաշվարկների արագացման և սպասարկման բարելավման նպատակով,

- օժանդակել բանկային ծառայությունների գործառնությունները համաշխարհային չափանիշներին հասցնելու, հաշվարկների ժամանակակից ձևերն արմատավորելու աշխատանքներին, ինչպես նաև նպաստել Հանրապետության բանկային համակարգի ինտեգրմանը միջազգային բանկային համակարգի հետ,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ անդամ բանկերի վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ, կազմակերպել նրանց վերապատրաստումն արտասահմանյան համապատասխան հաստատություններում,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ, գիտաժողովներ,
- իրականացնել այլ խնդիրներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և Միության կանոնադրությանը:

2.6.2 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկային նախարարություն

Հայաստանի Հանրապետության պետական և տեղական բյուջեների արդյունավետ կառավարման նպատակով 1996թ. վերջում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Գանձապետարանը: «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով (27.07.2001թ.) սահմանվում է ՀՀ գանձապետական համակարգի կառուցվածքը, կարգավորվում են գանձապետարանի հետ կապված հարաբերությունները:

Գանձապետարանը կազմված է Կենտրոնական գանձապետարանից և 44 բաժանմունքներից, որոնք ապահովում են գանձապետարանի գործառույթների կատարումը Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներում:

«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ ԿԲ-ը վարում է Գանձապետարանի միասնական հաշիվը և Հայաստանի Հանրապետության և համայնքների կողմից բոլոր վճարումները իրականացվում են Գանձապետարանի միասնական հաշվի միջոցով: Գանձապետական բաժանմունքները վարում և կառավարում են այն կազմակերպությունների հաշիվները, որոնց ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի կողմից:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՎՃԱՐԱՄԻՋՈՑՆԵՐ

3.1 Կանխիկ վճարումներ

Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է, իսկ նրա հարյուրերորդական բաժանումը՝ լուման, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին: ՀՀ դրամը ISO ստանդարտներում ստացել է AMD տառային և 051 թվային կոդը: Հայկական դրամը թողարկվում է (շրջանառության մեջ է դրվում) թղթադրամի և մետաղադրամի, իսկ լուման՝ մետաղադրամի ձևով: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ են գտնվում դրամի հետևյալ անվանատեսակները՝

- 6 տեսակի թղթադրամ՝ 500դրամ, 1000դրամ, 5000դրամ, 10000դրամ, 20 000դրամ, 50 000դրամ,
- 13 տեսակի մետաղադրամ[6]՝ 10լումա, 20լումա, 50լումա, և 1դրամ, 3դրամ, 5դրամ, 10դրամ, 20դրամ, 50դրամ, 100դրամ, 200դրամ, 500դրամ, 25000դրամ:

ՀՀ ԿԲ-ից դուրս շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի մոտ 96.5%-ը կազմում են թղթադրամները, իսկ 3.5%-ը՝ մետաղադրամները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ քաղաքացիների մասնակցությամբ հաշվարկները, որոնք կապված չեն նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, կարող են կատարվել կանխիկ դրամով առանց գումարի սահմանափակման:

Համաձայն «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի (26.12.2002թ.) իրավաբանական անձանց, պետական և այլ հիմնարկների, օտարերկրյա կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների կողմից կանխիկ դրամով վճարումները կարող են կատարվել հետևյալ սահմանափակումներով՝

ա) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 2003թ հուլիսի 1-ից սկսած չպետք է գերազանցի 500000, իսկ 2004 թվականից սկսած չպետք է գերազանցի 300000 ՀՀ դրամը,

բ) մեկ ամսվա ընթացքում ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 2003թ հուլիսի 1-ից սկսած չպետք է գերազանցի 5մլն., իսկ 2004 թվականից սկսած չպետք է գերազանցի 3մլն. ՀՀ դրամը:

Թեև կանխիկ դրամով կատարված վճարումների ծավալը և քանակը հնարավոր չէ ճշգրիտ որոշել, այնուամենայնիվ ՀՀ տարածքում կանխիկ դրամը դեռևս մնում է առավել լայն տարածում ստացած վճարային գործիքը, ինչը հաճախակի է օգտագործվում հատկապես փոքր վճարումներ կատարելիս, մասնավորապես՝ մանրածախ առևտրի վճարումների, աշխատավարձերի, թոշակների և նպաստների վճարումների դեպքում, ինչպես նաև մեծածախ հաշվարկների որոշ ոլորտներում:

2007թ. հունվարի 1-ի դրությամբ շրջանառության մեջ կանխիկ դրամի ծավալը կազմել է 211469մլն. ՀՀ դրամ, իսկ կանխիկ դրամի ծավալը դրամական զանգվածի M1 ագրեգատում կազմել է 62%:

[6] Հիմնականում շրջանառվում են 5 դրամից բարձր մետաղադրամներ, լումաներ պրակտիկապես չեն կիրառվում, իսկ 25000 դրամ արժողությամբ մետաղադրամը՝ «Անահիտ» ոսկեդրամն է:

3.2 Անկանխիկ վճարային գործիքներ

Հայաստանի Հանրապետությունում անկանխիկ հաշվարկները կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևերով, այն է՝ վճարման հանձնարարականներով, չեկերով, վճարային քարտերով, ակրեդիտիվով, ինկասո հաշվարկներով, ինչպես նաև օրենքով նախատեսված ու դրան համապատասխան բանկային կանոններով և բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով սահմանված այլ ձևերով: Անկանխիկ հաշվարկները կատարվում են բանկերի միջոցով, որոնցում բացված են համապատասխան հաշիվներ:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 929-րդ հոդվածի՝ իրավաբանական անձանց միջև հաշվարկները, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությամբ հաշվարկները՝ կապված նրանց ձեռնարկատիրական գործունեության հետ, կատարվում են անկանխիկ ձևով: Այդ անձանց միջև հաշվարկները կարող են կատարվել նաև կանխիկ դրամով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Գործարքի կողմերը կարող են պայմանագրով ընտրել անկանխիկ հաշվարկների ցանկացած ձև:

3.2.1 Կրեդիտային վճարային գործիքներ

Կրեդիտային վճարումներն այն վճարումներն են, որոնք նախաձեռնվում են վճարող հանդիսացող անձի կողմից: ՀՀ տարածքում 2006թ. վերջի դրությամբ անկանխիկ վճարումները հիմնականում իրականացվել են կրեդիտային վճարային գործիքներով (ծավալի 99.6%-ը և քանակի 91.38%-ը):

3.2.1.1 Վճարման հանձնարարականներ

Վճարման հանձնարարականը ամենատարածված անկանխիկ վճարային գործիքն է Հայաստանի Հանրապետությունում, ինչը պայմանավորված է նրանով, որ վերջինս հանդիսանում է ավանդորեն կիրառվող վճարային գործիք և մյուս վճարային գործիքների համեմատ ունի գրեթե ամբողջությամբ կանոնակարգված իրավական դաշտ:

Վճարման հանձնարարականներով փոխանցումների նախաձեռնումը բանկերի հաճախորդների կողմից մեծ մասամբ իրականացվում է թղթային եղանակով: Հաշվից քաղվածքներն ու դրանց կից վճարային փաստաթղթերը, հաշվից տեղեկանքները բանկերի կողմից հաճախորդներին նույնպես տրամադրվում են թղթային եղանակով, որոշ դեպքերում նաև էլեկտրոնային եղանակով՝ մագնիսական կրիչների միջոցով:

Ներկայումս մի շարք բանկեր իրենց հաճախորդներին առաջարկում են նոր ծառայություններ՝ բանկ-հաճախորդ հեռահաղորդակցման համակարգերի (home banking) միջոցով: Ըստ 2006թ. տվյալների վճարման հանձնարարականների 3% հաճախորդների կողմից բանկ են ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ այդ համակարգերի միջոցով:

Միջբանկային հատվածում կրեդիտային փոխանցումները հիմնականում նախաձեռնվում են էլեկտրոնային եղանակով, մասնավորապես 2006թ. ընթացքում միջբանկային վճարումների ծավալի 89.03%-ը և քանակի 96.28%-ը կազմել են էլեկտրոնային հանձնարարականները, որոնց կիրառումն ունի արագ աճի միտում:

3.2.1.2 Պարբերաբար վճարումների հանձնարարականներ

Պարբերաբար վճարումների հանձնարարականները բանկերի հաճախորդների կողմից կիրառվում են մեծամասամբ ՀՀ պետբյուջե և Կենսաթոշակային հիմնադրամ ֆիքսված գումարի վճարումներ կատարելու դեպքերում: Ներբանկային գործառնությունների

իրականացման ժամանակ պարբերաբար վճարումների հանճնարարականը կիրառվում է ավանդային տոկոսագումարի, վարկերի մարման, հաշվի սպասարկման միջնորդավճարների վճարման համար:

Պարբերաբար վճարումների հանճնարարականներով փոխանցումների նախաձեռնումը բանկերի հաճախորդների կողմից մեծամասամբ իրականացվում է թղթային եղանակով:

3.2.1.3 Դրամական միջոցի փոխանցման հանճնարարականներով վճարումներ

ՀՀ տարածքում փոխանցումները նախաձեռնվում են նաև դրամական միջոցի փոխանցման հանճնարարականների միջոցով՝ կանխիկ գումարի վճարմամբ: Վերջիններս կիրառվում են այն պարագայում, երբ գումարը փոխանցողը չունի բանկային ընթացիկ հաշիվ: Նման եղանակով իրականացվում են ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում պետական/տեղական բյուջեներ զանազան տիպի վճարումների, էլեկտրոէներգիայի և կոմունալ-կենցաղային այլ վճարների նախաձեռնումը ինչպես բանկային, այնպես էլ փոստային ցանցի միջոցով: Տվյալ գործիքը լայնորեն կիրառվում է նաև դրամական (փողային) փոխանցումների համակարգերում:

3.2.2 Դեբետային վճարային գործիքներ

Դեբետային վճարումներն այն վճարումներն են, որոնք նախաձեռնվում են շահառու հանդիսացող անձի կողմից: ՀՀ տարածքում 2006թ. վերջի դրությամբ անկանխիկ վճարումներում դեբետային գործիքներով կատարված վճարումների ծավալը կազմել է ընդհանուր վճարումների 0.22%, իսկ քանակը կազմել է 0.54%:

3.2.2.1 Ուղղակի դեբետագրման գործիքով

Ուղղակի դեբետագրման գործիքը օգտագործվում է հիմնականում մատուցվող ծառայությունների դիմաց պարբերաբար կատարվող վճարումների համար, մասնավորապես՝ ապահովագրական գումարների, տարեկան բաժանորդագրությունների դիմաց վճարման, վարկային գործառնությունների, հաշվի սպասարկման միջնորդավճարների գանձման ժամանակ, ինչպես նաև կոմունալ ծառայությունների մատուցման բնագավառում:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից ուղղակի դեբետագրման եղանակով վճարումները իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում միջոցների փոխանցումը ուղղակի դեբետագրման եղանակով իրականացման մասին» ՀՀ ԿԲ կարգով սահմանված կանոնների համաձայն:

ՀՀ-ում ուղղակի դեբետագրման հանճնարարականների միջոցով իրականացվող վճարումների տեսակարար կշիռը վճարումների ընդհանուր ծավալում շատ փոքր է, քանի որ այն բանկերի կողմից առաջարկվող համեմատաբար նոր գործիք է:

3.2.2.2 Վճարման պահանջագրեր

ՀՀ-ում պահանջագրերը տնտեսվարող սուբյեկտների շրջանում լայն տարածում չեն գտել:

Միայն 1997թ. ընթացքում տեղի է ունեցել վճարային պահանջագրերով իրականացված վճարումների աճ, որը պայմանավորված է եղել ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից Գանձապետարանի կանխիկացման չեկերը սպասարկելու դիմաց վերջինիս ներկայացված վճարային պահանջագրերի աճով: Սակայն հետագայում վերջինիս կիրառումը կտրուկ նվազել է, և ներկայումս այն բավականին փոքր կիրառում ունի անկանխիկ հաշվարկներում:

3.2.2.3 Չեկեր

Մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ընդունումը ՀՀ տարածքում տնտեսվարող սուբյեկտների կողմից մեծածախ առևտրային գործարքների ժամանակ որոշ չափով կիրառվել են լիմիտային չեկեր: Լիմիտային չեկերով վճարումները երաշխավորված են եղել վճարող բանկի կողմից, և դրանք դուրս են գրվել չեկի վրա նշված գումարի սահմաններում: Լիմիտային չեկերը փոխանցագրերով (endorsement) չէին կարող փոխանցվել այլ անձանց: Լիմիտային չեկերը ֆիզիկապես պահվում էին չեկատիրոջ բանկում, որը սպասարկման ընդունած լիմիտային չեկերի ռեկվիզիտների հիման վրա կազմում էր չեկերի ռեեստր և այն ներկայացնում հաշվարկային բանկ վճարման: Հաշվարկային բանկը (ՀՀ ԿԲ-ը), ստանալով չեկերի ռեեստրը, անմիջապես իրականացնում էր դրա դիմաց վճարը՝ դեպոնացնող և վճարող բանկերի՝ ՀՀ ԿԲ-ում վարվող թղթակցային հաշիվների միջոցով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ընդունումից հետո լիմիտային (երաշխավորված) չեկերի շրջանառությունը դադարեց, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 949 հոդվածի համաձայն արգելվեց վճարողի բանկի կողմից իր վրա դուրս գրված չեկերի երաշխավորումը:

Ներկայումս հաճախորդների կողմից հիմնականում օգտագործվում են կանխիկացման չեկեր՝ հաշվից կանխիկ միջոցների դուրս գրման համար: Որոշ չափով չեկերը կիրառվում են նաև անկանխիկ վճարումներ կատարելու համար՝ հիմնականում միևնույն բանկի հաճախորդների միջև հաշվարկներում:

Հայաստանի Հանրապետությունում թողարկվող չեկերը մշակվում են ձեռքով՝ միկրոկոդավորում չի կիրառվում, ինչը պայմանավորված է չեկերով գործառնությունների փոքր քանակով և ծավալով:

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող հաշվարկներում չեկերը մեծ կիրառում չեն գտել, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ինչպիսիք են՝ չեկերի կիրառման սովորույթների բացակայությունը, մանրածախ առևտրում կանխիկի գերակայությունը, կիրառվող վճարային գործիքների շարքում չեկերի համեմատաբար բարձր ռիսկայնությունը, նոր, ավելի արդյունավետ և քիչ ռիսկային վճարային գործիքների (վճարային քարտերի) կիրառումը, ինչպես նաև՝ չեկային հարաբերությունները կարգավորող ամբողջական օրենսդրական դաշտի բացակայությամբ:

3.2.3 Փաստաթղթային ակրեդիտիվ և ինկասո

Հայաստանի Հանրապետությանում փաստաթղթային ակրեդիտիվը և ինկասոն հիմնականում կիրառվում են միջազգային գործարքներում: Չնայած տվյալ հաշվարկների ծևերը բավականին քիչ են կիրառվում, այնուամենայնիվ, վերջին տարիներին նկատվում է ակրեդիտիվային գործառնությունների որոշակի աճ:

Հայաստանի Հանրապետությունում փաստաթղթային ակրեդիտիվով և ինկասոյով հաշվարկների իրականացման ժամանակ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերը, որոնք, ըստ էության, համապատասխանում են "Փաստաթղթային ակրիդիտիվների միասնական կանոններ և կարգեր" և "Ինկասոյի ունիֆիկացված կանոններ» Փարիզի Միջազգային Առևտրային Պալատի կողմից ընդունված փաստաթղթերում սահմանված նորմերի հետ:

3.2.4 Քարտեր

Քարտային բիզնեսը ՀՀ տարածքում սկսել է զարգանալ 1996թ-ից, երբ առաջին անգամ ՀՀ տարածքում գործող բանկերը սկսեցին սպասարկել և տարածել միջազգային քարտային կազմակերպությունների քարտեր՝ VISA, EUROCARD/MASTERCARD, DINERS CLUB,

GLOBAL ACCESS (ներկայումս՝ HSBC դեբետային քարտ): ՀՀ բանկերի կողմից միջազգային քարտերի տարածումը և սպասարկումը հիմնականում իրականացվում էր ենթագործակալի կարգավիճակով՝ Ռուսաստանի Դաշնության բանկերի միջոցով: Նույն 1996թ-ին թողարկվել է ՀՀ առաջին տեղական բանկային քարտը՝ A-CARD-ը (վերջինիս թողարկումը դադարեցվել է 2000թ.):

2000թ.-ին ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID), ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի համատեղ ջանքերով հիմնադրվեց «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ը և ստեղծվեց ՀՀ տարածքում քարտերով վճարումների միասնական «ԱրՔա» վճարային համակարգը՝ Համակարգի անդամ բանկերին ընձեռելով «ԱրՔա» քարտերի թողարկման և սպասարկման հնարավորություն: Դա նպաստեց քարտային շուկայի ընդլայնմանը՝ վերջինիս հաղորդելով ածի բավականին մեծ դինամիկա:

«ԱրՔա» համակարգի ներքո բանկերը կարող են թողարկել հետևյալ տեսակի «ԱրՔա» քարտեր՝ «ԱրՔա դեբետային» քարտը, «ԱրՔա Կլասիկ» օվերդրաֆտի թույլտվությամբ դեբետային քարտը, «ԱրՔա Բիզնես» կորպորատիվ քարտը, «Արքա Պլատինիում» ցածր վարկային սահմանաչափով վարկային քարտը, «ԱրՔա Գոլդ» բարձր վարկային սահմանաչափով վարկային քարտը, ««ԱրՔա» Սպառողական» վարկային քարտը, որը նախատեսված է խանութների սահմանափակ ցանցից օգտվելու համար:

«ԱրՔա» դեբետային և վարկային քարտերով գործառնությունները կատարվում են on-line ռեժիմով և պահանջում են հեղինակայնացում, իսկ ԱԳՄ կամ ՊՈՍ տերմինալներով գործարքների կատարման ժամանակ՝ նաև PIN կոդի մուտքագրում:

«ԱրՔա» քարտեր թողարկող բանկերը կարող են սահմանել քարտային մեկ գործառնության սահմանաչափը կանխիկի դուրս գրման դեպքում, ինչպես նաև օրական գործառնությունների սահմանաչափերը:

Ներկայումս «ԱրՔա» քարտերն իրենցից ներկայացնում են մագնիսական կրիչով (շերտով) քարտեր, սակայն մոտ արդեն փուլային անցում է կատարվում չիպային քարտերի, որը կապահովի քարտերով վճարումների առավել մեծ անվտանգություն, թույլ կտա աշխատել off-line ռեժիմով և հնարավորություն կտա օգտվելու ծառայությունների առավել լայն շրջանակից:

2006թ. վերջի դրությամբ «ԱրՔա» քարտերի թողարկումը և սպասարկումը իրականացնում են 18 ՀՀ առևտրային բանկեր:

2003թ.-ից ՀՀ-ում որոշակի աճ է նկատվել միջազգային ճանաչում ունեցող վճարային քարտերի (MASTERCARD, VISA) թողարկման և սպասարկման բնագավառում: 2006թ. վերջի դրությամբ ՀՀ տարածքում MASTERCARD-ի թողարկման և սպասարկման իրավունք ունեին 11, իսկ VISA-ի՝ 7 ՀՀ առևտրային բանկ: Մեկական ՀՀ առևտրային բանկեր սպասարկում են DINERS CLUB / AMEX վճարային քարտ, և 1 առևտրային բանկ թողարկում և սպասարկում է HSBC դեբետային քարտեր:

Ներկայումս ՀՀ-ում քարտային գործառնությունների զարգացման աճ է նկատվում, ինչը պայմանավորված է հիմնականում հասարակության մեջ քարտային բիզնեսի կուլտուրայի աստիճանաբար զարգացման, մարդկանց մոտ քարտային գործառնությունների հարմարավետության գիտակցման, առևտրի և սպասարկման կետերի շահագրգռվածության բարձրացման, բանկերի կողմից մրցակցության ուժեղացման և ընդհանուր առմամբ միջազգային քարտային բիզնեսի զարգացման տենդենցների հետ:

2006թ. վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի քանակը կազմել է 209113, այդ թվում՝ 116830 միջազգային քարտեր և 92283 «ԱրՔա» քարտեր: 2006թ.

ընթացքում քարտային գործառնությունների ծավալը (այդ թվում՝ միջազգային քարտերով) կազմել է 138249մլն. ՀՀ դրամ, որից անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 8.2%:

Չնայած այն հանգամանքին, որ քարտային գործառնությունները Հայաստանի Հանրապետությունում ունեն աճի մեծ միտում, այնուամենայնիվ մեծ տեսակարար կշիռ են կազմում քարտերով կանխիկացման գործառնությունները, ինչը հիմնականում պայմանավորված է դեռևս սպասարկման լայնածավալ ցանցի բացակայությամբ:

ՀՀ-ում անկանխիկ վճարումների զարգացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակման փուլում է գտնվում «Կանխիկի սահմանափակման մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի նախատեսվում է օրենքով սահմանված որոշակի գումարը գերազանցող հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների ընդունումը, կենսաթոշակների, կրթաթոշակների, նպաստների, ապահովագրական հատուցումների, աշխատավարձերի վճարումներն իրականացնել անկանխիկ եղանակով[7]: Օրենքի այս դրույթն ապահովելու նպատակով նախատեսվում են աշխատանքներ տանել առևտրի/սպասարկման կետերում անկանխիկ վճարումների ընդունումն ապահովելու լայն ցանցի (մասնավորապես՝ վճարային քարտեր սպասարկող սարքավորումների) ստեղծման ուղղությամբ:

3.2.4.1 Դեբետային քարտեր

ՀՀ տարածքում թողարկվող դեբետային քարտերի մեծամասնությունը (ինչպես տեղական, այնպես էլ միջազգային) հիմնականում աշխատավարձային քարտեր են, որոնք կամ կցված են քարտատերերի ընթացիկ հաշիվներին կամ հատուկ քարտային հաշիվներին: ՀՀ տարածքում դեբետային քարտերով իրականացվող գործառնությունները քարտային հաշիվների վրա արտացոլվում են առավելագույնը հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: Դեբետային քարտերի համար բանկերի կողմից հաճախորդների համար կարող են սահմանվել վարկային գծի (օվերդրաֆտի) հնարավորություններ:

ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող դեբետային քարտերի քանակը 2006թ. վերջի դրությամբ կազմել է 186807, որն իրենից ներկայացնում է շրջանառվող քարտերի 89%-ը: Դեբետային քարտերի մեջ միջազգային քարտերի տեսակարար կշիռը կազմում է 56%, իսկ «ԱրՔա» քարտերինը՝ 44%-ը:

3.2.4.2 Վարկային քարտեր

Ներկայումս ՀՀ-ում վարկային քարտերը թողարկվում են միայն բանկերի կողմից[8]:

ՀՀ տարածքում շրջանառվում են ինչպե՛ս տեղական «ԱրՔա», այնպես էլ միջազգային (MASTERCARD և VISA CARD) վարկային քարտեր: Վարկային քարտերը կազմում են շրջանառության մեջ գտնվող քարտերի քանակի 11%-ը և դեռևս չունեն մեծ կիրառություն:

3.2.4.3 ԱԳՄ (ATM) և ՊՈՍ (POS) տերմինալների ցանցեր

«ԱրՔա» քարտային վճարային համակարգի մասնակիցները ստեղծել և զարգացնում են ԱԳՄ և ՊՈՍ տերմինալների միասնական ցանց, որը հնարավորություն է տալիս «ԱրՔա» քարտապաններին ստանալ կանխիկ դրամ, ինչպես նաև իրականացնել անկանխիկ վճարումներ:

«ԱրՔա» քարտային վճարային համակարգի մասնակից չհանդիսացող 2 առևտրային բանկեր, որոնք թողարկում և սպասարկում են միջազգային VISA վճարային քարտեր, նույնպես ստեղծել են իրենց մասնավոր ԱԳՄ-ի և ՊՈՍ տերմինալների ցանցերը:

[7] Օրենքով սահմանված դրույթները կգործեն 2009թ.-ից՝ Երևան քաղաքում, 2010թ.-ից՝ ՀՀ մարզերի վարչական կենտրոններում, 2011թ.-ից՝ այլ բնակավայրերում

[8] համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ունիվերսալ վարկային կազմակերպությունները նույնպես կարող են թողարկել վարկային քարտեր

«HSBC Հայաստան» բանկը ստեղծել է իր ԱԳՄ-ի ցանցը, որը ապահովում է HSBC դեբետային քարտերի, VISA, MASTER միջազգային քարտերի սպասարկումը: Այդ ցանցի միջոցով իրականացվում են ոչ միայն կանխիկացման գործառնություններ, այլև ընթացիկ/քարտային հաշվից փոխանցումներ, կանխիկով դեպոզիտի ընդունում, քարտային հաշվի շարժի մասին տեղեկացում:

Ընդհանուր առմամբ 2006թ. վերջի դրությամբ ՀՀ տարածքում վճարային քարտեր սպասարկող ցանցերը սարքավորված են 1326 ՊՈՍ տերմինալներով և 180 ԱԳՄ-ներով:

3.2.5 Փոստային դրամական փոխանցումներ

ՀՀ տարածքում փոստային փոխանցումները մատուցվում են «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից:

Դրամական փոխանցումները փոստային կապի ավանդական ծառայություններից են, որոնք իրականացվում են ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս: «Հայփոստ» ընկերությունը մատուցում է ինչպես ավանդական փոստային (թղթային) դրամական փոխադրությունների, այնպես էլ էլեկտրոնային դրամական փոխադրությունների ծառայություններ:

«Հայփոստ» ՓԲԸ իրականացնում է փոստային թղթային փոխադրությունների փոխանակում 23 երկրների հետ, ինչպես նաև փոստային թղթային փոխադրություններ Հայաստանի Հանրապետության տարածքում: Դրամական փոխադրությունների վճարումը կատարվում է ազգային դրամով և ԱՄՆ դոլարով:

«Հայփոստ» ՓԲԸ 2003թ-ից ՀՀ տարածքում ներդրել և զարգացնում է դրամական միջոցների փոխանցման նոր համակարգ՝ Ներհանրապետական էլեկտրոնային արագացված դրամական փոխադրություններ (ԷԴՓ): Էլեկտրոնային դրամական փոխադրությունների միջոցով դրամական միջոցների փոխադրում կարող է իրականացնել ցանկացած անհատ և իրավաբանական անձ, առանց բանկային հաշիվներ բացելու: Էլեկտրոնային դրամական փոխադրությունների համակարգը գործում է ՀՀ գրեթե ամբողջ տարածքում:

Էլեկտրոնային դրամական փոխադրությունների համակարգով փոխանցվող գումարը հասցեատիրոջը կարող է վճարվել 10-15 րոպեում, հաշված այն պահից, երբ ուղարկողին տրվել է դրամական փոխադրության ընդունման կողը:

Էլեկտրոնային դրամական փոխադրության առավելագույն գումարը կազմում է մեկ միլիոն դրամ: Էլեկտրոնային դրամական փոխադրությունների քանակը մեկ օրվա ընթացքում անսահմանափակ է:

ՀՀ տարածքում էլեկտրոնային դրամական փոխադրությունների ընդունումն ու վճարումն իրականացվում է ազգային արժույթով՝ ՀՀ դրամով:

Օգտագործելով իր փոստային ցանցը «Հայփոստ» ՓԲԸ-ն 2005թ-ից մատուցում է արագընթաց էլեկտրոնային դրամական փոխադրությունների ծառայությունը՝ STEFI համակարգը: Արտերկրների հետ դրամական փոխադրությունների փոխանակումը կատարվում է Համաշխարհային Փոստային Միության գլխավոր սեռվերի միջոցով (ք. Բեռն, Շվեյցարիա): Յուրաքանչյուր փոխադրությունը պաշտպանված է համաշխարհային կարգի անվտանգության համակարգով:

3.2.6 Նորամուծություններ

Ներկայումս որոշ առևտրային բանկեր իրենց հաճախորդներին մատուցում են բանկ-հաճախորդ հեռահաղորդակցման համակարգերի (home banking) ծառայություններ, որն իրենից ներկայացնում է հաշվի հեռակառավարման այնպիսի տարբերակ, որի ժամանակ

հաճախորդը հնարավորություն է ստանում իր բանկին կարգադրություններ տալ՝ առանց բանկ հաճախելու: Այնուամենայնիվ, այս համակարգերով իրականացվող գործառնությունները դեռ շատ փոքր ծավալ են կազմում:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանում աճում է Ինտերնետից օգտվողների քանակը՝ ՀՀ-ում սկսվել է նկատվել նման ծառայության նկատմամբ որոշակի պահանջարկ: Մրցակցային առավելություններ ձեռք բերելու և հաճախորդների պահանջները բավարարելու նպատակով ՀՀ որոշ բանկեր արդեն սկսել են մատուցել Internet banking-ի ծառայություններ, որոնք սակայն դեռ ավելի շատ պասիվ բնույթի ոչ ֆինանսական գործառնություններ են, օրինակ՝ Ինտերնետի միջոցով հաշվի դիտարկում:

Հայաստանի Հանրապետությունում աստիճանաբար սկսում է զարգանալ նաև բջջային հեռախոսակապի միջոցով բանկային ծառայությունների (դեռևս ոչ ֆինանսական բնույթի) մատուցումը (mobil banking):

Չնայած այն բանի, որ «ԱրՔա» վճարային համակարգը նորաստեղծ համակարգ է և ունի ընդամենը մի քանի տարվա պատմություն, սակայն այն արագորեն ներդնում է այն բոլոր նոր ծառայությունները, որոնք առաջարկվում են քարտային բիզնեսի բազմամյա պատմություն ունեցող երկրներում:

Այսպես, «ԱրՔա» վճարային համակարգի ԱԳՄ–ի միջոցով քարտապանները բացի կանխիկ գումարի ստացումից, կարող են նաև կատարել կոմունալ վճարումներ, դիտարկել քարտային հաշվի մնացորդը, իրականացնել բջջային հեռախոսների լիցքավորման վճարումներ:

«ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի կողմից 2003թ.-ից սկսվել են մատուցվել Ինտերնետի միջոցով կոմունալ վճարումների կատարման, իսկ 2004թ.-ից՝ նաև որոշ ինտերնետ-խանութներում վճարումների կատարման, հեռախոսային քարտերի դիմաց վճարումների կատարման ծառայություններ: 2005թ. սեպտեմբերին ներդրվել է Ինտերնետի միջոցով «ԱրՔա» քարտային հաշվից մեկ այլ քարտային հաշվի վրա փոխանցումների կատարման մեխանիզմը:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից աշխատանքներ են տարվում չիպային քարտերի թողարկման և սպասարկման ուղղությամբ: 2005թ. միջազգային վճարային քարտեր սպասարկող ՀՀ բանկերը ապահովել են VISA սմարթ քարտերի սպասարկումը իրենց ՊՈՍ տերմինալների ցանցում: 2006թ. ընթացքում ավարտել են վերը նշված աշխատանքները՝ ապահովելով VISA և MASTERCARD սմարթ քարտերի սպասարկումը ինչպես ՊՈՍ տերմինալների, այնպես էլ ԱԳՄ ցանցում:

Հայաստանի Հանրապետությունում սկսել է նկատվել նաև էլեկտրոնային փողերի (e-money) նկատմամբ որոշակի հետաքրքրվածություն՝ ինչպես բանկերի, այնպես նաև առևտրային կազմակերպությունների կողմից:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ակտիվ ուսումնասիրություններ են տարվում վճարահաշվարկային ծառայությունների այդ նոր ոլորտները կանոնակարգելու և վերահսկելու ուղղությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարվում են նաև աշխատանքներ վճարային քարտերի բնագավառի կանոնակարգման ուղղությամբ:

3.3 Պետական անկանխիկ վճարումներ

ՀՀ-ում պետական վճարումներն իրականացվում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ ՖԷՆ) կողմից ստեղծված Հայաստանի Հանրապետության Գանձապետարանի միջոցով:

Գանձապետարանը կազմված է Կենտրոնական գանձապետարանից և 44 բաժանմունքներից (ՏԳԲ- տարածքային գանձապետական բաժանմունք), որոնք ապահովում են գանձապետարանի գործառույթների կատարումը Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներում:

Գանձապետարանը հանդիսանում է ՀՀ ԿԲ «Էլեկտրոնային վճարումների համակարգի» ուղղակի մասնակից: «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ ԿԲ-ն վարում է Գանձապետարանի միասնական հաշիվը, և Հայաստանի Հանրապետության և համայքների կողմից վճարվող, ինչպես նաև ՀՀ բյուջե ուղղված բոլոր վճարումներն իրականացվում են Գանձապետարանի միասնական հաշվի միջոցով:

Գանձապետական միասնական հաշիվը ներառում է ՖԷՆ կողմից վարվող հետևյալ ենթահաշիվները՝

- ՖԷՆ կողմից վարվող ենթահաշիվներ (ՀՀ պետական բյուջեի միջոցների ենթահաշիվ, արտաքին վարկերի և դրամաշնորհների միջոցների ենթահաշիվ, պետական մարմինների դեպոզիտային հաշիվների ենթահաշիվ),
- ենթահաշիվներ, որոնք վարվում են ՖԷՆ կողմից, բայց միջոցները տնօրինում են կառավարության մարմինները (արտաբյուջետային միջոցների ենթահաշիվ, համայնքների միջոցների ենթահաշիվ, սոցապ հիմնադրամի միջոցների ենթահաշիվ, պետական մարմինների այլ դեպոզիտային հաշիվների ենթահաշիվ):

ՀՀ ԿԲ-ն Գանձապետարանի համար վարում է նաև.

- գանձապետական արտարժութային միասնական հաշիվը,
- Գանձապետարանի անվամբ բացված այլ հաշիվներ:

Գանձապետական հաշիվներից կանխիկ դրամով վճարումներ կարող են իրականացվել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման միայն հետևյալ հոդվածներով՝

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- նպաստներ,
- գործուղման և ծառայողական շրջագայությունների ծախսեր (բացառությամբ օդային տրանսպորտի),
- կրթաթոշակներ,
- կենսաթոշակներ,
- այլ անհատույց հատկացումներ ֆիզիկական անձանց՝ բացառությամբ իրավաբանական անձանց միջոցով նշված գումարների հատկացման դեպքերի:

Կանխիկ դրամի ձևով վճարումներն իրականացվում են առևտրային բանկերի միջոցով՝ ՖԷՆ հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Առևտրային բանկերի ցանցը կիրառվում է նաև անհատների և իրավաբանական անձանց կողմից հարկերի և հարկերին հավասարեցված վճարումների հավաքագրման համար:

2006թ. ընթացքում Գանձապետարանի կողմից նախաձեռնվել է 37 535 վճարում՝ 591մլրդ. ՀՀ դրամ ծավալով, որը հանդիսանում է ՀՀ ԿԲ վճարային համակարգերի միջոցով իրականացված ընդհանուր հաշվարկների 13%-ը:

Գանձապետական բաժանմունքները վարում և կառավարում են այն կազմակերպությունների հաշիվները, որոնց ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի կողմից: Բյուջետային ցանկացած հիմնարկության կողմից նախաձեռնված բոլոր վարչական վճարումները պետք է հավաստագրվեն համապատասխան ՏԳԲ-ի կողմից՝ բյուջետային վճարումների ընդհանուր ծրագրով սահմանված գումարների սահմաններում: ՏԳԲ-ի կողմից հավաստագրումից հետո վճարման հանձնարարագիրն ուղղվում է Կենտրոնական Գանձապետարան, որն էլ նախաձեռնում է վճարումը շահառուին

Էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Միջոցները ելքագրվում են Գանձապետարանի միասնական հաշիվից և ՀՀ առևտրային բանկերի միջոցով ուղղվում շահառուներին:

Նմանատիպ գործընթաց է սահմանված նաև պետական և համայնքային հիմնարկների աշխատողներին աշխատավարձի վճարման համար, որը վերջիններս ստանում են բացառապես բանկային հաշիվներով:

Կենսաթոշակները վճարվում են Հայփոստի միջոցով: Կենսաթոշակային հիմնադրամն ունի 40 մասնաճյուղ, որոնք պատասխանատու են երկրում թոշակառուների մասին տեղեկատվության հավաքագրման և թարմացման համար: Յուրաքանչյուր ամիս Կենսաթոշակային հիմնադրամի բոլոր մասնաճյուղերը թոշակառուների և վերջիններիս թոշակը բաժանող փոստային կոնկրետ մասնաճյուղի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում են Կենսաթոշակային հիմնադրամի գլխամասին, որը կազմում է միասնական ցանկ և ուղարկում այն Գանձապետարանին: Այս ցանկը պարունակում է թոշակառուների անունները, նրանց վճարվող գումարը և տվյալ թոշակառուին սպասարկող փոստային բաժանմունքի նույնականացման համարը: Գանձապետարանում տեղեկատվությունը խմբավորվում է ըստ Հայփոստի բաժանմունքները սպասարկող առևտրային բանկերի, որը Էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով ուղղվում է համապատասխան բանկերին: Վերջիններս կրեդիտագրում են Հայփոստի բաժանմունքի համապատասխան հաշիվը, որից հետո բաժանմունքի կողմից իրականացվում է կենսաթոշակների վճարումը հանրությանը: Կենսաթոշակառուները կենսաթոշակը կարող են ստանալ կանխիկով կամ վճարային քարտի միջոցով:

ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾՈՂ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում դրամական միջոցների փոխանցումները իրականացվում են հետևյալ վճարային համակարգերի միջոցով

1. ներբանկային վճարումների համակարգեր, որոնք ապահովում են միևնույն բանկի հաճախորդների միջև հաշվարկները,
2. միջբանկային վճարային համակարգեր, որոնցում վերջնահաշվարկն իրականացվում է առևտրային բանկերի փոխադարձ լորո/նոստրո հաշիվներով,
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարային համակարգեր, որոնցում վերջնահաշվարկն իրականացվում է համակարգի մասնակիցների՝ Կենտրոնական բանկում բացված հաշիվների միջոցով,
4. ««ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգը», որն իրականացնում է «ԱրՔա» քարտերով գործառնությունների պրոցեսինգն ու քլիրինգը և ապահովում վերջնահաշվարկը:

Ներբանկային փոխանցումները թե՛ ծավալով և թե՛ քանակով մեծ տեղ են զբաղեցնում ընդհանուր վճարումների կառուցվածքում: Մասնավորապես՝ 2006թ.-ին ներբանկային փոխանցումները կազմել են ամբողջ վճարումների ծավալի 27.40%-ը և քանակի 56.09%-ը: Ներբանկային միջմասնաճյուղային փոխանցումների հիմնական մասն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով, մոդեմային կապի կամ որոշ դեպքերում ինտերնետի միջոցով: Ներբանկային փոխանցումները իրականացվում են բանկի կողմից սահմանված ներքին կանոնների համաձայն՝ միաժամանակ պահպանելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված պահանջները:

Առևտրային բանկերի փոխադարձ լորո/նոստրո հաշիվներով փոխանցումները հիմնականում իրականացվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ SWIFT-ի, տելեքսի, ինչպես նաև մոդեմային կապի միջոցով: Փոխանցումների վերջնահաշվարկն իրականացվում է առևտրային բանկերի փոխադարձ լորո/նոստրո հաշիվներով, իսկ վերջիններիս իրականացումը կարգավորվում է փոխադարձ պայմանագրերով: Այս փոխանցումները մեծ տեղ չեն գրավում ընդհանուր վճարումներում. 2006թ.-ին կազմել են ամբողջ վճարումների ծավալի 0.25%-ը և քանակի 0.26%-ը:

ՀՀ Կենտրոնական բանկի վճարային համակարգերի միջոցով փոխանցումները 2006թ.-ին կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 72.35%-ը և քանակի 43.65%-ը:

«ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգը՝ ՀՀ-ում գործող միակ մանրածախ վճարումների համակարգն է, որն ապահովում է «ԱրՔա» վճարային քարտերով, իսկ 2003թ.-ից նաև միջազգային վճարային համակարգերի VISA և MASTERCARD վճարային քարտերով գործառնությունների պրոցեսինգը և քլիրինգը:

4.1 ՀՀ ԿԲ վճարային համակարգեր

ՀՀ տարածքում միջբանկային փոխանցումները գլխավորապես իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերի միջոցով՝

1. էլեկտրոնային վճարումների համակարգ,
2. թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգ,
3. հաշվարկների քլիրինգային (զուտ) համակարգ:

Այս համակարգերում վերջնահաշվարկներն իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի «Գործառնական օր» ծրագրային համակարգում, որը ապահովում է ՀՀ

կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման «Գլխավոր գրքի» (General ledger) վարումը, և որում հաշվառվում են նաև ՀՀ կենտրոնական բանկի հաճախորդների դրամական հաշիվները և հաշիվներով իրականացվող ֆինանսական տրանզակցիաները:

Վերոնշյալ համակարգերը չունեն փոխանցումների իրականացման գումարային սահմանափակումներ. համակարգով կարող են իրականացվել ինչպես մեծածավալ, այնպես էլ փոքրածավալ վճարումներ (օրինակ՝ բյուջեին ուղղված վճարումներ, տնտեսվարող սուբյեկտների՝ միմյանց ուղղված վճարումներ, քաղաքացիների մասնավոր տրանֆերտներ և այլն):

4.1.1 Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգ (ԷՎՀ)

Էլեկտրոնային վճարումների համակարգը հանդիսանում է միջբանկային վճարային կարևորագույն համակարգերից մեկը, որի ներդրումը ՀՀ տարածքում գործող բանկերում և նրանց մասնաճյուղերում սկսվել է 1997թ.-ից: 2006թ. ընթացքում Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումները կազմել են Կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների քանակի 95.84%-ը և ծավալի 80.62%-ը: ԷՎՀ-ի սեփականատեր և օպերատոր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը, որը միևնույն ժամանակ վերահսկում և կարգավորում է համակարգի գործունեությունը, մշակում է համակարգի զարգացման քաղաքականությունը և ապահովում է դրա իրականացումը: Էլեկտրոնային վճարումների համակարգն աշխատում է ռեալ ժամանակում համախառն հաշվարկների (RTGS) իրականացման ռեժիմով, ինչը նշանակում է, որ համակարգ մուտքագրված վճարային կարգադրությունների մշակումը և վերջնահաշվարկը կատարվում է առանձին՝ ըստ յուրաքանչյուր վճարային կարգադրության: Համակարգում վճարային հաղորդագրությունների հոսքերի կառուցվածքը V տիպի է:

ա) օրենադրական դաշտը և կարգավորումը

Էլեկտրոնային վճարումների համակարգի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենքներով, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից մշակված «Էլեկտրոնային վճարումների համակարգի աշխատանքային արարողակարգ», «Էլեկտրոնային վճարումների համակարգում կիրառվող հաղորդագրությունների ֆորմատները» կանոնակարգիչ ակտերով, ինչպես նաև ՀՀ ԿԲ և մասնակիցների միջև կնքված պայմանագրերով:

Էլեկտրոնային վճարումների համակարգում կիրառվող պաշտպանական մեխանիզմները, էլեկտրոնային ստորագրության կիրառումը, համակարգի մասնակիցներին ներկայացվող անվտանգության պահանջները և դրանց հետ կապված վեճերի լուծման կարգը սահմանված է բազմակողմանի միջբանկային համաձայնագրով:

Կենտրոնական բանկի՝ որպես CBANet միջբանկային համակարգչային ցանց և էլեկտրոնային վճարումների համակարգ ներդնողի ու սպասարկողի, և տվյալ մասնակցի՝ որպես վերոհիշյալ ցանցը և վճարումների համակարգը օգտագործողի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը սահմանված են ՀՀ Կենտրոնական բանկի և Էլեկտրոնային վճարումների համակարգի յուրաքանչյուր մասնակցի միջև կնքված երկկողմանի պայմանագրով:

Էլեկտրոնային վճարումների համակարգի ստեղծման հետ կապված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մշակվեց և 1996թ. հոկտեմբերի 1-ից ներդրվեց հաշվեհամարների կոդավորման նոր համակարգ, որը համապատասխանում է ISO ստանդարտներին, և որով սահմանվում են միասնական կոդավորման ստանդարտներ բոլոր այն հաշիվների համար, որոնցով կարող են կատարվել դրամական փոխանցումներ: Ըստ նոր

կողավորման համակարգի հաշիվները բաղկացած են 16 թվային նիշերից, որոնցից 12-ը պարտադիր նիշեր են: Դրանցից առաջին հինգը ցույց են տալիս բանկի/մասնաճյուղի կողը, հաջորդ վեցը՝ հաճախորդի հաշվեհամարը, տասներկուերորդը՝ ստուգիչ նիշն է, իսկ հաջորդ 4-ը ոչ պարտադիր նիշեր են:

բ) համակարգի մասնակիցները

Էլեկտրոնային վճարումների համակարգում մասնակցության նախապայման են հանդիսանում՝ ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով բանկային (թղթակցային) հաշվի առկայությունը և CBANet միջբանկային համակարգչային ցանցին անդամակցումը: Համակարգի մասնակիցները պետք է բավարարեն նաև ՀՀ ԿԲ կողմից սահմանված մի շարք տեխնիկական և անվտանգության պահանջներին: Էլեկտրոնային վճարումների համակարգի ուղղակի մասնակիցներ են հանդիսանում ՀՀ ԿԲ-ն, ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված բանկերը և Գանձապետարանը, իսկ անուղղակի մասնակիցներ՝ բանկերի մասնաճյուղերը և Գանձապետարանի բաժանմունքները: 2001թ. ընդունվեց որոշում՝ թույլատրելու Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող Միջպետական բանկին դառնալ Էլեկտրոնային վճարումների համակարգի հեռահար ուղղակի մասնակից: Տվյալ որոշումը թույլ տվեց բարձրացնել Միջպետական բանկի միջոցով ԱՊՀ երկրների միջև իրականացվող փոխանցումների արդյունավետությունը: 2001թ-ից Էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակից է հանդիսանում նաև «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ը: 2006թ. տարեվերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 217, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ իր 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ իրենց 145 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):

Ներկայումս քննարկվում է արժեթղթերի կամ արտարժույթի շուկայի ուղղակի մասնակիցներ հանդիսացող ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների մասնակցությունը ԷՎՀ-ում:

գ) համակարգում փոխանցվող հաղորդագրությունները

ԷՎՀ-ով իրականացվում են միայն կրեդիտային փոխանցումներ, այդ թվում՝ առևտրային բանկերի սեփական փոխանցումները տարբեր ֆինանսական պարտավորությունների գծով, բյուջեին ուղղված վճարումները, տնտեսվարող սուբյեկտների՝ միմյանց ուղղված վճարումները, քաղաքացիների մասնավոր տրանֆերտները և այլն: Ընդ որում մինչև 2005թ. վերջը համակարգով հնարավոր էր կատարել միայն ՀՀ դրամով փոխանցումներ, իսկ 2006թ. I-ին եռամսյակից հնարավոր է նաև իրականացնել արտարժութային փոխանցումներ, որոնց համար 2005թ. նոյեմբերին մշակվել է ՀՏ203 նոր ֆորմատը:

ԷՎՀ-ում նախատեսված չեն վճարային հաղորդագրությունների հետ կանչի կամ փոփոխման հնարավորություններ (irrevocable payment orders): Համակարգը չունի փոխանցումների իրականացման գումարային սահմանափակումներ. համակարգով կարող են իրականացվել ինչպես մեծածավալ, այնպես էլ մանրածախ վճարումներ: Համակարգում վճարային կարգադրությունները և այլ հաղորդագրությունները (հաշվի քաղվածք, վճարման մերժում և այլն) ներկայացվում են ՀՀ ԿԲ կողմից մշակված հատուկ ֆորմատներով: Համակարգով կարող են իրականացվել ինչպես հատային փոխանցումներ (ՀՏ 100, ՀՏ120, ՀՏ121 ֆորմատների հանձնարարականներով) , այնպես էլ փաթեթով փոխանցումներ:

2006թ. ընթացքում Էլեկտրոնային վճարումների համակարգում վճարումների ծավալի 74.5%-ը և քանակի 86.68%-ը իրականացվել են վճարման հատային հանձնարարականներով: Վճարումների մնացած մասը իրականացվել է փաթեթային վճարման հանձնարարականներով, որտեղ հիմնական մասնաբաժինը կազմում են միջբանկային վճարման հանձնարարականով և բյուջետային վճարման հավաքական հանձնարարականով կատարված փոխանցումները:

դ) համակարգի գործունեությունը

ԷՎՀ ներառում է՝

- Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման ապարատա-ծրագրային համակարգը (Bankmail), որը տեղադրված է ԷՎՀ մասնակիցների, այդ թվում՝ ՀՀ ԿԲ մոտ և ապահովում է վճարային հաղորդագրությունների ծածկագրումը, էլեկտրոնային ստորագրության ձևավորումը, վճարային հաղորդագրությունների առաքումը, դրանց վավերության, ինչպես նաև տրամաբանական և սիմանտիկ ստուգումը, և
- «Գործառնական օր» ծրագրային համակարգը, որը ապահովում է վերջնահաշվարկի կատարումը (տես նկար 1):

ԷՎՀ-ն գործում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

- հաշվարկները կատարվում են համախառն եղանակով՝ ըստ յուրաքանչյուր վճարային կարգադրության առանձին, հաշվարկների համար նախատեսված գործառնական ժամերի ընթացքում,
- ԷՎՀ մուտքագրված կարգադրությունները կատարվում են ըստ դրանց մուտքագրման հերթականության (կարգադրությունների կատարման «ՖԻՖՕ» սկզբունք),
- Էլեկտրոնային վճարումների համակարգով ներկայացվում են միայն այդ օրը կատարման ենթակա վճարումները. եթե վճարման կարգադրությունը ներկայացվել է վճարային հաղորդագրությունների ընդունման համար սահմանված գործառնական ժամերից դուրս, ապա այն ներկայացվում է վերջնահաշվարկի հաջորդ գործառնական օրը բացելուց հետո:
- վերջնահաշվարկները իրականացվում են Կենտրոնական բանկում վարվող մասնակիցների թղթակցային (հաշվարկային) հաշիվների միջոցով՝ հաշիվների մնացորդների սահմաններում: Համակարգի կողմից կատարված հաշվարկները վերջնական են և անվերադարձելի ՀՀ ԿԲ հաշիվներով կատարելու պահից:
- ԷՎՀ-ում նախատեսված չեն վճարային կարգադրությունների հերթերի վարման և կառավարման մեխանիզմներ. կարգադրությունը կատարելու համար համապատասխան հաշվում բավարար գումարի բացակայության դեպքում կարգադրությունը առանց կատարման մերժվում է, և մերժված կարգադրությունը կատարելու համար նախաձեռնողի կողմից այն նորից պետք է մուտքագրվի ԷՎՀ որպես նոր կարգադրություն,
- Վճարող-մասնակցի կողմից ՀՀ ԿԲ ուղարկված վճարային կարգադրությունը, համապատասխան ստուգումներից հետո, ավտոմատ կերպով փոխանցվում է «Գործառնական օր» համակարգ, որում, համապատասխան ստուգումներից հետո, կատարվում է վերջնահաշվարկը՝ դեբետագրելով վճարող մասնակցի և կրեդիտագրելով ստացող մասնակցի դրամական հաշիվը, որից հետո հաշվարկների կատարումը հավաստող հաղորդագրությունը փոխանցվում է


ստացող կողմին: Միջոցները ստացող մասնակցի հաշվին կրեդիտագրվելուց հետո հաշվարկը համարվում է վերջնական և անվերադարձելի, և այդ միջոցները կարող են օգտագործվել ստացող մասնակցի կողմից:

Էլեկտրոնային վճարումների համակարգի աշխատանքը բաղկացած է ստորև բերված փուլերից՝

1) 9.00 Համակարգի աշխատանքների սկիզբ:
2) 9.00 – 9.15 Տեխնոլոգիական փուլ- այս փուլում կատարվում է ծրագրերի բեռնում, ստուգում, համակարգային հաշվետվությունների ուղարկում/ստացում: Այս փուլում վճարումներ չեն իրականացվում:
3) 9.15 – 9.30 Մուտքի բացում- այս փուլում իրականացվում է էլեկտրոնային վճարումների համակարգի աշխատանքային կայանների բեռնումը և մուտքի բացումը:
4) 9.30–16.30 Վճարումների փուլ- բոլոր տիպի՝ վճարային և այլ հաղորդագրությունների փոխանցում մասնակիցների միջև: Ժամը 16.30-ից դադարեցվում է բանկերից կենտրոնական բանկ ուղղված վճարային հաղորդագրությունների ընդունումը:
5) 16.30 – 17.00 Կենտրոնական բանկի մուտքի փակման փուլ - այս փուլում կատարվում է մինչև ժամը 16.30-ը ստացված և չկատարված վճարային հաղորդագրությունների ընդունում և մշակում:
6) 17.00 – 17.45 Ավարտի փուլ- մինչև ժամը 17.00-ը գլխամասային բանկերը պարտավոր են ընդունել կենտրոնական բանկից ստացվող վճարային հաղորդագրությունները: 17.00-ից հետո կարող են փոխանցվել միայն ոչ վճարային բնույթի հաղորդագրություններ բոլոր հնարավոր ուղղություններով:
7) 18.00 Համակարգի աշխատանքների ավարտ:

Նկար 1

Հաշվարկների կատարումը Էլեկտրոնային վճարումների համակարգով



ե) տրանզակցիաների իրականացման (տեխնիկական) միջավայրը

Էլեկտրոնային վճարումների համակարգն աշխատում է CBANet միջբանկային համակարգչային ցանցի հիման վրա, որի ապարատա-ծրագրային համալիրը, բացառությամբ վարձակալվող կապուղիների, պատկանում է ՀՀ ԿԲ-ին: ՀՀ ԿԲ-ն իրականացնում է CBANet միջբանկային համակարգչային ցանցի տեխնիկական և ծրագրային միջոցների ընդհանուր կառավարումը (կոմունիկացիոն սարքերի, ինչպես նաև կենտրոնական սերվերի կառավարումը): CBANet միջբանկային համակարգչային ցանցը նախատեսված է ոչ միայն ԷՎՀ-ի աշխատանքը ապահովելու համար, այլ կիրառվում է նաև CBANet միջբանկային համակարգչային ցանցի օգտագործողների միջև էլեկտրոնային ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի տեղեկատվության փոխանակման համար: CBANet միջբանկային համակարգչային ցանցի օգտագործողներն են՝ ԷՎՀ մասնակիցները, վարկային կազմակերպությունները, Հարկային պետական ծառայությունը, Մաքսային պետական կոմիտեն և վերջինիս 3 մաքսատները, Հայաստանի բանկերի միությունը: CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով ՀՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան հաշվետվություններ, որոնց հիման վրա գործում են ՀՀ ԿԲ «ՖԻՆԱ» և «Վարկային ռեգիստր» տեղեկատվական համակարգերը:

ԷՎՀ առանձին մասնակցի մոտ կամ համակարգի մակարդակով տեխնիկական խնդիրների առաջացման դեպքում նախատեսված են մի շարք պահուստային ընթացակարգեր (procedures), որոնք ապահովում են ԷՎՀ-ում վերջնահաշվարկների ժամանակին և անխափան կատարումը: Մասնավորապես դա «տաք» ռեզերվի ապահովումն է տեխնիկական և ծրագրային մակարդակով, էլեկտրասնուցման խափանման դեպքում՝ գեներատորի միջոցով անկախ հոսանքի աղբյուրի ապահովումը, համակարգի գործարկման հնարավորությունը Երևան քաղաքից դուրս գտնվող «ռեզերվային բանկում»:

ԷՎՀ տևական ժամանակով չաշխատելու դեպքում որպես պահուստային տարբերակ կարող է կիրառվել ՀՀ ԿԲ Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգը, կամ Քլիրինգային հաշվարկների համակարգը (տես 4.1.2 և 4.1.3 կետերը):

ԷՎՀ մասնակցի կողմից էլեկտրոնային վճարային հաղորդագրությունների ուղարկման անհնարինության դեպքում վճարային հաղորդագրությունները կարող են ներկայացվել ՀՀ ԿԲ ինչպես թղթային եղանակով, այնպես էլ համաձայնեցված էլեկտրոնային այլ եղանակներով և կատարվել Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգով:

Այն դեպքում, երբ ստացող կողմը հնարավորություն չունի ստանալ կատարված վճարումների հաստատումները ԷՎՀ միջոցով, ապա վերջինիս ՀՀ ԿԲ կողմից տրամադրվում է վճարային հաղորդագրության տպված և հաստատված թղթային օրինակը:

Մինչև 2003թ. վերջը ԷՎՀ առավելագույն թողունակությունը կազմել է օրական 5 հազ. հատ հաղորդագրություն, մինչդեռ հաղորդագրությունների միջին օրեկան հոսքը կազմել է 4205:

2004 թվականի ընթացքում առևտրային բանկերի կողմից նոր փաթեթային վճարային հաղորդագրությունների ակտիվ կիրառումը նպաստել է ԷՎՀ հաղորդագրությունների միջին օրեկան հոսքի նվազեցմանը, որի արդյունքում այն կազմել է մոտ 2491: Միաժամանակ 2004 թվականից ԷՎՀ համակարգի տեխնիկական և ծրագրային կատարելագործման արդյունքում բարձրացվել է ԷՎՀ թողունակությունը՝ ապահովելով օրական մինչև 15հազ. հատ հաղորդագրության փոխանցման հնարավորություն: 2006թ. ընթացքում ԷՎՀ վճարային հաղորդագրությունների միջին օրեկան հոսքը կազմել է 3915 հաղորդագրություն, որոնց

ընդհանուր ծավալը կազմել է 9477մլն. ՀՀ դրամ: Նշված ծավալը 2005թ. համեմատ աճել է 10.97%-ով (937մլն. ՀՀ դրամով), իսկ քանակը աճել է 21.22%-ով (առանց բորսայական գործառնությունների իրականացման նպատակով կատարված փոխանցումների): Ծավալի նկատմամբ քանակի ոչ համաչափ աճը պայմանավորված է ԷՎՀ մասնակիցների կողմից խմբակային (փաթեթային) վճարային հաղորդագրությունների օգտագործման զգալի աճով:

է) ռիսկերի կառավարումը

ՀՀ ԿԲ Էլեկտրոնային վճարումների համակարգում կիրառվում են ռիսկերի կառավարման և զսպման տարբեր մեխանիզմներ:

Համակարգում մասնակիցների համար բացակայում է «հաշվարկային բանկի» ռիսկը, քանի որ վերջնահաշվարկները կատարվում են «կենտրոնական բանկի փողերով», իսկ կենտրոնական բանկը չի կարող վերջնահաշվարկի մասնակիցների համար իրացվելիության կամ վարկային ռիսկի առաջացման պատճառ դառնալ:

Համակարգը V տիպի վճարային համակարգ է, որի դեպքում ստացող բանկը կարող է ստանալ վճարման փաստաթուղթը միայն կենտրոնական բանկում վճարումը կատարվելուց հետո, այսինքն՝ գործարքի վերջնական դառնալուց հետո, ինչով բացառվում է ստացող բանկի վարկային ռիսկը:

Համակարգը չի նախատեսում ՀՀ ԿԲ կողմից վարկավորում, և միջոցների անբավարար լինելու դեպքում գործարքը մերժվում է, ինչը ՀՀ ԿԲ համար բացառում է վարկային ռիսկը:

Որպես իրացվելիության ռիսկի կառավարման մեխանիզմ համակարգում կիրառվում է մոնիտորինգի մեխանիզմը, որը հնարավորություն է տալիս մասնակիցներին վերահսկել իրենց հաշվում առկա դրամական միջոցների մնացորդը և իրացվելիության պակասի դեպքում համալրել հաշիվը:

Սխալի ռիսկերի նվազեցումը համակարգում ապահովված է SPT (straight-through processing) մեխանիզմի կիրառմամբ, որը ապահովում է տեղեկատվության մեկանգամյա (նախաձեռնողի կողմից) ձեռքի մուտք համակարգ, էլեկտրոնային ֆորմատի հաղորդագրության ձևավորում և այնուհետև դրա ավտոմատ ռեժիմում մշակում և փոխանցում ստացող մասնակցին առանց մարդկային միջամտության:

Խարդախության ռիսկերի նվազեցումը համակարգում ապահովված է իրավասությունների տարանջատման, համակարգում կատարված ցանկացած գործողությունների գրանցման, «սև արկղի» վարման, մասնակիցների նույնականացման, տեղեկատվության ծածկագրման, էլեկտրոնային ստորագրության կիրառման մեխանիզմներով:

Տեխնիկական ռիսկերի նվազեցման նպատակով համակարգում իրականացվում է ծրագրային ապահովման տեստավորում, կատարվում է տեխնիկական սարքավորումների և ծրագրային ապահովման պարբերաբար ստուգում և վերահսկում, տվյալների պահուստային պատճենում պահուստային սարքավորումների վրա, կիրառվում են ռեզերվային սերվերներ, ապահովված է հոսանքի անխափան սնուցման աղբյուրների առկայությունը, մշակված է արտակարգ իրավիճակներում գործողությունների պլան: ԷՎՀ-ում ապահովված է վճարային 0հաղորդագրությունների թողունակության այնպիսի մակարդակ (ռեզերվը), որը եռապատիկ անգամ գերազանցում է ներկայիս ամենածանրաբեռնված ժամերին համակարգով իրականացվող վճարային հաղորդագրությունների հոսքերը:

4.1.2 Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգ

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգը ՀՀ ԿԲ առաջին միջբանկային վճարային համակարգն է: Համակարգի սեփականատեր և օպերատոր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը, որը միևնույն ժամանակ վերահսկում և կարգավորում է համակարգի գործունեությունը, մշակում է համակարգի զարգացման քաղաքականությունը և ապահովում է դրա իրականացումը: Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգն իրենից ներկայացնում է հաշվարկների իրականացման համախառն համակարգ, որի միջոցով վճարումները նախաձեռնվում են թղթային եղանակով, իսկ հաշվարկը կատարվում է նույն օրը, այն վերջնական է և անվերադարձ: Համակարգում վճարային հաղորդագրությունների հոսքերի կառուցվածքը V տիպի է: 2006թ.-ին թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգով իրականացված վճարումները կազմել են Կենտրոնական բանկով կատարված վճարումների ծավալի 10.97%-ը և քանակի 3.72%-ը:

ա) օրենսդրական դաշտը և կարգավորումը

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված բանկային (թղթակցային) հաշվի պայմանագրերով, կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով:

բ) համակարգի մասնակիցները

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգի մասնակիցներ են հանդիսանում ՀՀ ԿԲ բոլոր հաճախորդները, որոնք բանկային, թղթակցային, կամ հատուկ քլիրինգային հաշիվ ունեն ՀՀ կենտրոնական բանկում:

գ) համակարգում փոխանցվող հաղորդագրությունները

Համակարգով իրականացվում են ինչպես կենտրոնական բանկի սեփական վճարումները, այնպես էլ ՀՀ ԿԲ հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի (վճարման հանձնարարականների, պահանջագրերի, չեկերի) հիման վրա կատարվող անկանխիկ վճարումները և կանխիկի մուտքագրումներն ու դուրսգրումները:

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգով իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական գործարքների (վարկերի և դեպոզիտների ընդունման և մարման, ռեպո, հակադարձ ռեպո գործարքների, արտարժույթի առք ու վաճառքի) հետ կապված դրամական փոխանցումները, առևտրային բանկերի միջև կնքված միջբանկային ֆինանսական գործարքների հետ կապված փոխանցումները, ինչպես նաև «ԱրՔա» միասնական վճարային համակարգով իրականացված գործառնությունների վերջնահաշվարկները, ինչն էլ մեծամասամբ պայմանավորում է այս համակարգով իրականացվող վճարումների խոշոր լինելը:

դ) համակարգի գործունեությունը

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգրի միջոցով վճարումներ կատարելու համար դրանց նախաձեռնողները ՀՀ ԿԲ գործառնական վարչություն են ներկայացնում թղթային վճարային կարգադրություններ (վճարման հանձնարարականներ, չեկեր և դրանց ռեեստրներ, վճարման պահանջագրեր, այլ փաստաթղթեր): Բացառություն է կազմում «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Հայաստանի ֆոնդային բորսան, որոնց կողմից վճարային կարգադրությունները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստով): Որպես վճարումներ նախաձեռնողներ հանդիսանում են ՀՀ ԿԲ

հաճախորդները, իսկ համապատասխան պայմանագրերով սահմանված դեպքերում՝ նաև ՀՀ ԿԲ ստորաբաժանումները (հաշվապահությունը, ֆինանսական շուկաներում գործառնություններ իրականացնող ստորաբաժանումը): Վճարային փաստաթղթերի տվյալները ձեռքով մուտքագրվում են «Գործառնական օր» ծրագրային համակարգ, որտեղ կատարվում է վերջնահաշվարկը: Վերջնահաշվարկը կատարվում է վճարողի հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում՝ դեբետագրելով վճարողի և կրեդիտագրելով ստացողի հաշիվները, ինչից հետո վճարը դառնում է վերջնական և անվերադարձելի: Եթե վճարողի հաշվի վրա բավարար միջոցներ չկան, ապա վճարման ներկայացված փաստաթուղթը մերժվում է և հետ է վերադարձվում այն ներկայացնողին:

Վճարային փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում հիմնականում նույն օրը կատարելու համար, սակայն կարող են ներկայացվել նաև ավելի ուշ կատարման օր պարունակող վճարային փաստաթղթեր: Վճարումների իրականացման նախապատվելիությունը կամ վճարումների իրականացման հերթականությունը որոշում է վճարը նախաձեռնողը, սակայն եթե վճարողը որևէ նախապատվելիություն չի սահմանել, ապա Կենտրոնական բանկում վճարը կատարվում է FIFO սկզբունքով: ՀՀ կենտրոնական բանկի համախառն հաշվարկների թղթային համակարգը գործում է ժամը 9.30-ից մինչև 17.00-ը: Ընդ որում վճարային փաստաթղթերը հաճախորդների կողմից ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվում ժամը 9.30-ից մինչև 16.00-ը, իսկ վճարային փաստաթղթերի մշակումը և հաշվարկների իրականացումը տևում է մինչև ժամը 17.00-ը:

ե) ռիսկերի կառավարումը

Թղթային եղանակով համախառն հաշվարկների համակարգում կիրառվում են վարկային և իրացվելիության կառավարման նույն մեխանիզմները, որոնք կիրառվում են ԷՎՀ-ում:

Սխալի ռիսկերի նվազեցման նպատակով կիրառում են տվյալների մուտքագրման երկակի վերահսկման և պարտականությունների տարանջատման մեխանիզմները:

Խարդախության ռիսկերի նվազեցումը համակարգում ապահովված է իրավասությունների տարանջատման, համակարգում կատարված ցանկացած գործողությունների գրանցման մեխանիզմներով:

4.1.3 Հաշվարկների քլիրինգային (զուտ) համակարգ

Հաշվարկների քլիրինգային համակարգը սկսել է գործել 1994թ.-ից, որի սեփականատերը հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը: Հաշվարկների քլիրինգային համակարգի ներդրման նպատակներն են եղել՝ առևտրային բանկերի՝ ՀՀ ԿԲ-ում առկա իրացվելի միջոցների արդյունավետ կառավարման հնարավորության ապահովումը և ՀՀ ԿԲ և առևտրային բանկերի կողմից թղթային վճարային փաստաթղթերի մշակման արդյունավետության բարձրացումը: Հաշվարկների քլիրինգային համակարգում բանկերը ստացել են հնարավորություն կատարել հաշվարկները մնացորդային սկզբունքով, այն է՝ ներկայացնել ավելի մեծ գումարի վճարման հանձնարարականներ, քան առկա է ՀՀ կենտրոնական բանկում իրենց թղթակցային հաշվում՝ հաշվի առնելով հանդիպակաց վճարումները այլ բանկերից: Համակարգը թղթային համակարգ է, քանի որ վճարահաշվարկային փաստաթղթերը ներկայացվում են թղթային եղանակով՝ քլիրինգային փաթեթներով: Համակարգում հաշվարկներն իրականացվում են մասնակիցների փոխադարձ պարտավորությունների բազմակողմանի զուտացման (multilateral) սկզբունքով և

վերջնահաշվարկը կատարվում է միայն զուտ դիրքերի չափով՝ քլիրինգային սեանսի վերջում, քլիրինգային փաստաթղթերի ներկայացման օրը:

Այդ համակարգը արդյունավետ գործում էր մինչև Էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրումը, որից հետո կտրուկ նվազեց թե՛ համակարգից օգտվող բանկերի քանակը, թե՛ վճարումների ընդհանուր ծավալը: Այսպես, 1996թ. և 2000թ. Հաշվարկների քլիրինգային համակարգով իրականացված վճարումները կազմել են այդ ժամանակահատվածներում Կենտրոնական բանկի համակարգերով կատարված վճարումների ծավալի համապատասխանաբար 26.58% և 4.96%-ը և քանակի համապատասխանաբար 73.88% և 20.01%-ը: Ներկայումս Հաշվարկների քլիրինգային համակարգով վճարումներ չեն իրականացվում և այն հանդիսանում է պահուստային համակարգ՝ ԷՎՀ –ի խափանման դեպքում:

ա) օրենսդրական դաշտը և կարգավորումը

Հաշվարկների քլիրինգային համակարգի գործունեության կանոնները, այդ թվում՝ մասնակիցները, վճարահաշվարկային փաստաթղթերի ներկայացման և հաշվարկների իրականացման կարգը, ժամկետները, և այլ պայմանները սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 30.06.2003թ. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի քլիրինգային համակարգի գործունեության մասին» որոշմամբ և «Քլիրինգային հաշվարկների մասին» հրահանգով:

բ) համակարգի մասնակիցները

Հաշվարկների քլիրինգային համակարգի մասնակիցներ են հանդիսանում ՀՀ ԿԲ-ն, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում թղթակցային հաշիվներ ունեցող և Երևան քաղաքում գտնվող բոլոր առևտրային բանկերը և Գանձապետարանը:

գ) համակարգում փոխանցվող հաղորդագրությունները

Համակարգով կարող են իրականացվել թղթային կրիչներով վճարման հանձնարարականներով կրեդիտային փոխանցումներ, ընդ որում փոխանցման գումարները սահմանափակված չեն առավելագույն կամ նվազագույն սահմաններով: Վիճակագրական տվյալների համաձայն քլիրինգային եղանակով իրականացվում էին հիմնականում մանր գումարների փոխանցումներ:

դ) համակարգի գործունեությունը

Քլիրինգային փոխհաշվարկները մասնակիցների միջև կատարվում են հաշվարկային սեանսների ժամանակ: Սեանսի ընթացքում վերջնահաշվարկները կատարվում են մասնակիցների՝ ՀՀ ԿԲ-ում վարվող հաշիվների կրեդիտային մնացորդների սահմաններում: Քլիրինգային հաշվարկների նպատակով մասնակիցների կողմից վճարային փաստաթղթերը ներկայացվում են միայն սեանսների համար սահմանված ժամերին: Հաշվարկների քլիրինգային համակարգի ներդրման սկզբնական շրջանում սահմանված էր եղել օրական միայն մեկ սեանս, որը հետագայում ավելացել էր ևս մեկ սեանսով՝ հնարավորություն տալով մասնակիցներին նախորդ սեանսի ժամանակ մերժված փաթեթը ներկայացնել վճարման երկրորդ սեանսին, երբ ավելի բարձր է մասնակիցների իրացվելիությունը: Հաշվարկների քլիրինգային համակարգով վճարումների կտրուկ անկումից հետո համակարգում սահմանվեց միայն մեկ սեանս, որի ժամերն են.

- 14.00 - 14.30 - փաստաթղթերի ընդունում

- ❖ 14.30 - 14.45- զուտ դիրքերի դուրս բերում և վերջնահաշվարկի իրականացում
- ❖ 14.45 - 15.00 - սեանսի արդյունքների (ելքային փաստաթղթերի) ստացում:

Քլիրինգի մասնակցի կողմից այլ մասնակիցներին ուղղված վճարումները տեսակավորվում են ըստ յուրաքանչյուր մասնակցի՝ այդ մասնակցին ուղղված վճարային փաստաթղթերը ամփոփելով առանձին ծրարում: Ծրարի վրա գրվում է տվյալ մասնակցին վճարվելիք գումարը, ինչպես նաև վճարային փաստաթղթերի քանակը: Ծրարների ներսում փաստաթղթերը ձևավորվում են սահմանված կարգով և կազմվում են գումարների ցանկեր ըստ մասնակիցների կառուցվածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի և գանձապետական բաժանմունքների): Յուրաքանչյուր մասնակցին թույլատրվում է այլ մասնակցին ուղղված վճարումները ներկայացնել երկու ծրարով (փաթեթով): Յուրաքանչյուր մասնակցի կողմից քլիրինգային սեանսին ծրարներին կից ներկայացվում է քլիրինգային վճարման հանձնարարական, որում նշվում են ըստ յուրաքանչյուր ծրարի կատարվող փոխանցման գումարը:

Քլիրինգային փաստաթղթերի ընդունման փուլը ավարտելուց հետո քլիրինգային վճարման հանձնարարականների տվյալները մուտքագրվում են Հաշվարկների քլիրինգային համակարգ, այնուհետև «Գործառնական օր» ծրագրային համակարգում քլիրինգի մասնակիցների հաշիվներով գործառնություններն դադարեցվում են, այդ հաշիվների մնացորդների վերաբերյալ տվյալները փոխանցվում են Հաշվարկների քլիրինգային համակարգ, որտեղ իրականացվում է քլիրինգի մասնակիցների բազմակողմանի զուտ դիրքերի հաշվարկում: Եթե մասնակիցն ունի զուտ դեբետային դիրք և նրա հաշվի մնացորդը բավարար չէ այդ դիրքը փակելու համար, ապա տվյալ մասնակցի չբավարարող մասով փաթեթները մերժվում են:

Զուտացման գործընթացը ավարտելուց հետո մասնակիցների զուտ դիրքերը փոխանցվում են «Գործառնական օր» համակարգ, որտեղ իրականացվում է զուտ դեբետային դիրք ունեցող քլիրինգի մասնակիցների հաշիվների դեբետագրում և քլիրինգի տեխնիկական հաշվի կրեդիտագրում, իսկ վերջինիս՝ զուտ կրեդիտների մարում ի օգուտ զուտ կրեդիտային դիրք ունեցող քլիրինգի մասնակցի:

Քլիրինգային համակարգի հաշվարկային սեանսի ավարտից հետո մասնակից կողմերից յուրաքանչյուրին տրվում են հետևյալ փաստաթղթերը՝

- մասնակցի «Քլիրինգային գործառնությունների քաղվածք»,
- ստացվող գումարների ծրարների կապոցը,
- մասնակցի կողմից հաշվարկային սեանսին վճարման ներկայացված, բայց թղթակցային հաշվի գումարի մնացորդի ամբավարարության պատճառով մերժված՝ չանցկացված ծրարները (առկայության դեպքում),
- տեղեկանք քլիրինգային էֆեկտի վերաբերյալ:

4.1.4 ՀՀ կենտրոնական բանկի գնային քաղաքականությունը ՀՀ ԿԲ վճարահաշվարկային համակարգերում

ՀՀ կետրոնական բանկը իր սակագնային քաղաքականությունը մշակելիս, հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- ➢ թղթային եղանակով գործող համակարգերում կիրառվում է ծախսերի փոխհատուցման սկզբունքը, որի համաձայն հաշվարկվում են տվյալ փոխանցումների հետ կապված ՀՀ ԿԲ կողմից իրականացվող ծախսերը և դրանց հիման վրա հաշվարկվում են համապատասխան սակագները, որոնք

կարող են միակողմանի փոփոխվել ՀՀ ԿԲ կողմից, ինչի մասին հաճախորդները 1 ամիս առաջ նախազգուշացվում են.

- էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերում կիրառվում է խրախուսման սկզբունքը, համաձայն որի ԷՎՀ և Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում իրականացված տրանզակցիաների համար ՀՀ ԿԲ-ը կոմիսիոն վճարներ չի գանձում.
- CBANet միջբանկային համակարգչային ցանցի շահագործման համար վերջինիս բաժանորդներից (աբոնենտներից) գանձվում է սպասարկման համար հաստատուն ամսական վճար՝ 60000 ՀՀ դրամի չափով: Գները ենթակա են փոփոխման տարվա ընթացքում և նույնն են բոլոր մասնակիցների համար:
- ՀՀ կառավարության վճարահաշվարկային սպասարկումը համաձայն օրենքի կատարվում է անվճար:

4.2 Փոքրածավալ վճարումների համակարգեր

Ինչպես արդեն նշվել է, մեծածավալ և փոքրածավալ վճարումների համակարգերի հստակ տարանջատում ՀՀ-ում չկա. ՀՀ ԿԲ վճարային համակարգերով իրականացվում են ինչպես մեծածավալ, այնպես նաև փոքրածավալ վճարումներ:

Փոքրածավալ վճարումների համակարգերի թվին է դասվում նաև «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգը (այսուհետ՝ «ԱրՔա» համակարգ):

4.2.1 «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգ

«ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգը ներդրվել է 2001թ. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում ձևավորել անկանխիկ վճարումների ազգային համակարգ, խթանել բանկային/վճարային քարտերով բիզնեսի զարգացումը, նվազեցնել կանխիկ դրամի շրջանառությունը, ինչպես նաև նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ՀՀ տարածքում բանկային ոլորտում նոր տիպի և լրացուցիչ ծառայություններ մատուցել Հայաստանի բնակչությանը և օտարերկրյա քաղաքացիներին: Համակարգի սեփականատեր և օպերատոր հանդիսանում է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն, որը միևնույն ժամանակ վերահսկում և կարգավորում է համակարգի գործունեությունը, մշակում է համակարգի զարգացման քաղաքականությունը և ապահովում է դրա իրականացումը:

Համակարգում հաշվարկներն իրականացվում են բազմակողմանի զուտացման սկզբունքով, իսկ վերջնահաշվարկը կատարվում է մասնակից բանկերի՝ ՀՀ կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշիվներով: Համակարգում վճարային հաղորդագրությունների հոսքերի կառուցվածքը Y տիպի է:

2006թ. ընթացքում «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգում «ԱրՔա» քարտերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 45471 մլն. ՀՀ դրամ, քանակը՝ 1408879:

ա) օրենսդրական դաշտը և կարգավորումը

«ԱրՔա» համակարգի գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից մշակված կանոնակարգիչ ակտերով, համակարգի կանոններով, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի և Համակարգի մասնակից-բանկերի միջև կնքված ««ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի միջոցով

իրականացված գործառնությունների վերջնահաշվարկի կատարման» եռակողմ պայմանագրերով, «ԱրՔա» համակարգի օպերատորի և մասնակից-բանկերից յուրաքանչյուրի հետ կնքած երկկողմանի պայմանագրերով:

բ) համակարգի մասնակիցները

«ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի անդամներն են «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կանոնադրությամբ, «ԱրՔա» համակարգի կանոններով և համակարգի այլ նորմատիվային փաստաթղթերով սահմանված կարգով «ԱրՔա» համակարգին անդամակցած և Համակարգի անդամի համապատասխան կարգավիճակ ստացած անձինք, որոնք «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի և ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքել են համապատասխան պայմանագրեր:

Համակարգի անդամներ կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գործող ֆինանսավարկային կամ բանկային/ վճարային քարտերի բնագավառում մասնագիտացված այլ կազմակերպությունները: 2006թ. վերջի դրությամբ Համակարգին անդամակցում էին ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ տարածքում գործող 18 առևտրային բանկեր:

Համակարգում սահմանվում են անդամակցության հետևյալ կարգավիճակները՝

- Համակարգի Լիիրավ անդամ՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի բաժնետեր հանդիսացող և համակարգի Լիիրավ անդամի կարգավիճակ ստացած Համակարգի անդամներ, որոնք ունեն «ԱրՔա» քարտերի թողարկման և սպասարկման իրավունք, կարող են հովանավորվել «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից միջազգային քարտերի թողարկման և/կամ սպասարկման համար և իրավունք ունեն օգտվել «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ողջ ծավալից Համակարգի նորմատիվային փաստաթղթերով սահմանված կարգով: Սույն կարգավիճակը ստանալու համար «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին վճարվում է անդամավճար: Լիիրավ անդամների համար կարող է սահմանվել տարեկան վճար:
- Համակարգի Թողարկող անդամ՝ «ԱրՔա» քարտերի թողարկման և իր սպասարկման կետերում կանխիկի տրամադրման իրավունքով օժտված Համակարգի անդամներ: Սույն կարգավիճակը ստանալու համար «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին վճարում են անդամավճար, այնուհետև յուրաքանչյուր տարի՝ տարեկան վճար, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի խորհրդի կողմից սահմանված կարգով, չափով և ժամկետում:
- Համակարգի Սպասարկող անդամ՝ «ԱրՔա» քարտերի սպասարկման իրավունքով օժտված Համակարգի անդամներ: Սույն կարգավիճակը ստանալու համար «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին վճարում են անդամավճար և տարեկան վճար, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով, չափով և ժամկետում:

գ) համակարգի գործունեությունը

Համակարգում քարտային գործառնությունների հաշվարկային փուլ է համարվում տվյալ բանկային օրվա ժամը 9:00-ից մինչև հաջորդ բանկային օրվա ժամը 9:00-ը ընկած ժամանակահատվածը: Յուրաքանչյուր հաշվարկային փուլի համար համակարգի յուրաքանչյուր թողարկող անդամի համար սահմանված է հաշվարկային լիմիտ, որի սահմաններում կարող են կատարվել տվյալ թողարկող անդամի կողմից թողարկված քարտերով գործառնություններ: Հաշվարկային լիմիտի գումարը բաղկացած է հավաստագրման լիմիտից և չնվազող մնացորդից: Հաշվարկային լիմիտի հաշվարկման

կարգը սահմանվում է «ԱրՔա» համակարգի կանոններով և համակարգի անդամների կողմից տեղեկացվում է «ԱրՔա» համակարգի օպերատորին: Հաշվարկային փուլի ընթացքում կատարվող քարտային գործառնությունների հավաստագրումը օպերատորի կողմից իրականացվում է համակարգի անդամի հավաստագրման լիմիտի և քարտապանի վճարային լիմիտի սահմաններում:

Յուրաքանչյուր հաշվարկային փուլի համար «ԱրՔա» համակարգի օպերատորի կողմից CBANet ցանցով ՀՀ ԿԲ են ներկայացվում տվյալ հաշվարկային փուլի համար մասնակիցների կողմից սահմանված հաշվարկային լիմիտները: ՀՀ ԿԲ-ը այդ լիմիտների չափով դրամական միջոցներ է սառեցնում համակարգի անդամների ՀՀ ԿԲ-ում վարվող թղթակցային հաշիվներում: Հաշվարկային փուլի ավարտից հետո «ԱրՔա» համակարգի օպերատորը տվյալ հաշվարկային փուլի հավաստագրված քարտային գործարքների վերաբերյալ իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա հաշվարկում է յուրաքանչյուր անդամի հավաստագրված քարտային գործարքներից առաջացած իրավասությունների և պարտավորությունների զուտ դիրքերը, կազմում է համապատասխան վճարահաշվարկային կարգադրություններ և CBANet ցանցով ներկայացնում է դրանք ՀՀ ԿԲ-ին: Ստացված կարգադրությունների հիման վրա ՀՀ ԿԲ-ը իրականացնում է զուտ դեբետային դիրք ունեցող անդամների հաշիվների դեբետագրում և «ԱրՔա» համակարգի օպերատորի քլիրինգային տեխնիկական հաշվի կրեդիտագրում, իսկ վերջինիցս՝ զուտ կրեդիտների մարում ի օգուտ զուտ կրեդիտային դիրք ունեցող անդամների:

Համակարգի աշխատանքը բաղկացած է ստորև բերված փուլերից՝

1. 09.00- Բանկային օրվա և հաշվարկային փուլի սկիզբ:

2. 09.00-11.00 - Նախորդ հաշվարկային փուլի ընթացքում քարտային գործառնությունների գծով հաշվարկների մասնակիցների զուտ դիրքերի ներկայացում ՀՀ կենտրոնական բանկ:

3. 11.00 - ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերջնահաշվարկների կատարում:

4. 11.00-11.20 - ՀՀ կենտրոնական բանկի կողմից «ԱրՔա» համակարգի օպերատորին և անդամներին տեղեկացում վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ:

5. 11.00 - Հաշվարկային լիմիտի տրամադրման ժամ:

6. 11.00- 16.00 - Հաշվարկային լիմիտի փոփոխման ժամանակահատված:

7. 16.30- Բանկային օրվա ավարտ:

8. հաջորդ բանկային օրվա ժամը 09.00 - Հաշվարկային փուլի ավարտ, երբ իրականացվում է հաշվարկային փուլի ընթացքում վերջնական հաստատում ստացած քարտային գործառնությունների գծով զուտ դիրքերի հաշվարկ:

դ) ռիսկերի կառավարումը

«Արքա» համակարգի վերջնահաշվարկներն իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի միջոցով: Համակարգում վճարահաշվարկային ռիսկերի կառավարման համար մշակված են մի շարք միջոցառումներ:

Ֆինանսական ռիսկ

Ֆինանսական ռիսկերի նվազեցման համար համակարգում կիրառվում է վերջնահաշվարկի հետևյալ մեխանիզմը՝

- Քարտային վճարումների արդյունքում համակարգի անդամների միջև վերջնահաշվարկի կատարումն ապահովելու նպատակով համակարգի թողարկող անդամը համակարգի հաշվարկային բանկում (ՀՀ ԿԲ) «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի միջոցով սառեցնում է հաշվարկային լիմիտի գումարը, որը բաղկացած է

հավաստագրման լիմիտից և չնվազող մնացորդից: Հաշվարկային լիմիտի սառեցումը, քարտային գործառնությունների հավաստագրումը, դիրքերի դուրսբերումը և վերջնահաշվարկը կատարվում է համաձայն եռակողմ պայմանագրերի, կանոնների, համակարգում քլիրինգի և դիրքերի դուրս բերման կանոնների և աշխատակարգերի:

- Քարտային գործառնությունների հավաստագրումն իրականացվում է համակարգի անդամի հավաստագրման լիմիտի և քարտապանի վճարային լիմիտի սահմաններում: Հավաստագրման գումարը վերը նշված լիմիտների յուրաքանչյուրից գերազանցելու դեպքում հավաստագրում չի կատարվում:

գործառնական ռիսկ

- Համակարգի կողմից մշակվել են գործառնական ռիսկերի նվազեցման պարտադիր պահանջներ, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են համակարգի կանոններում անվտանգության միջոցառումներին, տարբեր տեսակի էլեկտրոնային բանալիների կիրառման սկզբունքներին, զեղծարարությունների բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված վերլուծություններին, արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում գործողությունների իրականացման պլանին, ծրագրային ապահովման տեստավորմանը, անխափան սնուցման աղբյուրների օգտագործմանը, տեխնիկական սարքավորումների և ծրագրային ապահովման պարբերաբար ստուգումներին և վերահսկմանը, պահուստային սարքավորումների վրա տվյալների պահուստային պատճենմանը, տեխնիկական խափանման դեպքերի գրանցմանը և դրանց վերլուծությանը, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումների իրականացմանը:

Կենտրոնական բանկը, մասնակցելով համակարգի կառավարմանը, հնարավորություն է ստանում համակարգի կանոններում և ընդհանուր գործունեության մեջ փոփոխությունների իրականացման անհրաժեշտության դեպքում միջոցառումներ ձեռնարկել՝ օգտագործելով իր հեղինակությունն ու դիրքը: Սակայն հատկանշական է այն, որ Կենտրոնական բանկի քաղաքականությունն ուղղված է համակարգում իր մասնակցության աստիճանաբար նվազմանը:

4.3 Համակարգեր միջազգային փոխանցումներ իրականացնելու համար

Միջազգային փոխանցումները Հայաստանի Հանրապետության բանկերի կողմից իրականացվում են արտասահմանյան բանկերում ունեցած թղթակցային հաշիվների միջոցով՝ հիմնականում S.W.I.F.T հեռահաղորդակցման համակարգով/ցանցով:

1996թ. ստեղծվել է Հայաստանում S.W.I.F.T.-ի անդամների և օգտագործողների խումբը, իսկ 1997թ ընթացքում միջբանկային վճարումների ժամկետները կրճատելու, բանկերի ծախսերը նվազացնելու և վճարումների կատարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով 12 բանկ (այդ թվում՝ Կենտրոնական բանկը) միացել են S.W.I.F.T. համակարգին: Հայաստանում S.W.I.F.T.-ի անդամների և օգտագործողների խումբը կոչված է միավորելու Հայաստանի Հանրապետությունում S.W.I.F.T.-ի անդամ և օգտագործող հանդիսացող բոլոր բանկերին, և գործում է նրանց անունից և նրանց շահերից: Խումբը ապահովում է S.W.I.F.T.-ի հայաստանյան անդամներին իրավական, կազմակերպչական տեղեկատվությամբ, կազմակերպում է ժողովներ, ուսուցողական սեմինարներ, ներկայացնում է S.W.I.F.T.-ի հայաստանյան օգտագործողներին S.W.I.F.T.-ի ամենամյա կոնֆերանսներում: 2006թ. վերջի դրությամբ S.W.I.F.T.-ի անդամ են հանդիսանում ՀՀ ԿԲ-ը և ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկեր:

Հայաստանի Հանրապետության այն բանկերը, որոնք չունեն թղթակցային հարաբերություններ արտասահմանյան բանկերի հետ, իրենց արտասահմանյան վճարումներն իրականացնում են վերոհիշյալ բանկերի միջոցով՝ օգտագործելով վերջիններիս արտարժութային հաշիվները արտասահմանյան բանկերում:

Տնտեսվարող սուբյեկտների միջազգային փոխանցումները հիմնականում կատարվում են ավանդական բանկային փոխանցումների միջոցով, մինչդեռ անհատների արտարժույթով փոխանցումների իրականացումը արտասահման և արտասահմանից ստացումները հիմնականում կատարվում են Հայաստանի Հանրապետությունում ներկայումս լայն տարածում գտած առանց հաշվի բացման դրամական (փողային) փոխանցումների մի շարք համակարգերի միջոցով, որոնց թվին են դասվում միջազգային ճանաչում ունեցող “WesternUnion”, “Money Gram” համակարգերը, որոնց հետ ակտիվորեն մրցակցում և աստիճանաբար ավելի մեծ կշիռ են ստանում ԱՊՀ երկրներում ստեղծված և արդեն իսկ լայն ճանաչում գտած այնպիսի համակարգեր, ինչպիսին են «Անելիք», “Contact”, “Unistream”, “Migom”, “Быстрая Почта", “InterExpress”, “VIP Money Transfer”, “Private Money Transfer”, "STB Express" և նմանատիպ այլ համակարգերը:

Բոլոր այս համակարգերն, ըստ էության, ունեն նույն կառուցվածքը և նախատեսված են հիմնականում ֆիզիկական անձանց առանց հաշվի բացման ոչ առևտրային բնույթի դրամական (փողային) փոխանցումների իրականացման համար և հիմնականում աշխատում են մասնակիցների միջև փոխադարձ թղթակցային հարաբերությունների և համակարգի կանոնների հիման վրա: Այս համակարգերի հիմնական տարբերությունները պայմանավորված են սպասարկման կետերի աշխարհագրությամբ, սահմանված սակագների և միջնորդավճարների մեծությամբ և այլ կազմակերպչական և տեխնիկական ու ծրագրային առանձնահատկություններով:

Առանց բանկային հաշվի բացման դրամական (փողային) փոխանցումների համակարգերի առավելությունը ավանդական բանկային փոխանցումներից կայանում է նրանում, որ միջոցների փոխանցումն իրականացվում է ավելի կարճ ժամանակահատվածում, բացակայում է հաշվի բացման հետ կապված ժամանակի կորուստը և անհրաժեշտ չէ, որպեսզի շահառուն ունենա բանկային հաշիվ որևէ կոնկրետ բանկում. շահառուն կարող է իր գումարը ստանալ բոլոր այն կետերում, որտեղ իրականացվում է այդ համակարգի սպասարկում: Գործարքը ձևակերպվում է տեղում և հաշված րոպեների կամ ժամերի ընթացքում միջոցներն հասանելի են դառնում շահառուին:

Չնայած առանց հաշվի բացման դրամական փոխանցումների համակարգերը միջազգային պրակտիկայում մեծ կշիռ չունեն, սակայն քանի որ Հայաստանի Հանրապետությունը մեծ կախվածություն ունի տրանսֆերտներից, ՀՀ-ում նման համակարգերի մի մասը կարող է դասվել հանրային նշանակություն ունեցող համակարգերի[9] թվին՝ կախված համակարգով իրականացվող վճարումների ծավալից: Հետևաբար ՀՀ ԿԲ-ն պետք է միշտ իր ուշադրության կենտրոնում պահի նմանատիպ բոլոր համակարգերը: «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի մշակման նպատակներից մեկը նման համակարգերի գործունեության թույլտվության, ինչպես նաև դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման մեխանիզմի ներդրումն էր: Համաձայն այս օրենքի

[9] *Հանրային (էական) նշանակություն ունեցող համակարգերի (payment systems of prominent importance) թվին են դասվում այն համակարգերը, որոնցում տեղի ունեցող խափանումները կարող են էական տնտեսական հետևանքներ ունենալ և խարխլել վճարահաշվարկային համակարգերի և ընդհանուր առմամբ ազգային արժույթի նկատմամբ հանրության վստահությունը:*

Կենտրոնական բանկին է վերապահված հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվության տրամադրումը, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել որոշակի նախնական ուսումնասիրություն՝ կապված ՀՀ-ում գործող վճարահաշվարկային համակարգերի գործունեության, համակարգի ներքո հաշվարկների իրականացման կանոնների, կիրառվող անվտանգության միջոցառումների և համակարգի օպերատորի կամ համակարգին անդամակցող մասնակցի իրավասությունների, պարտավորությունների և ռիսկերի հետ: Այս լծակի միջոցով Կենտրոնական բանկը որոշակի առումով հսկում է այս համակարգերում ռիսկերի առաջացման հնարավորությունը՝ ժամանակին դրանց կառավարմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու համար: ՀՀ-ում դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը հնարավորություն է տալիս նվազեցնել անօրինական գործունեություն իրականացնող սուբյեկտների և վերջիններիս գործունեության հետ կապված խարդախությունների և վարկային ռիսկի առաջացման հավանականությունը: Սահմանված է որոշակի ընթացակարգ, որի միջոցով ՀՀ ԿԲ-ն վերահսկում է նման կազմակերպությունների գործունեությունը:

2006թ. ընթացքում S.W.I.F.T-ի և տելեքսի միջոցով կատարված միջազգային բանկային փոխանցումների ծավալը ՀՀ-ից արտերկիր և հակառակ ուղղությամբ կազմել է համապատասխանաբար՝ 2219մլրդ. ՀՀ դրամ և 1873մլրդ ՀՀ դրամ: Վերը նշված դրամական (փողային) փոխանցումների համակարգերով դեպի արտերկիր փոխանցվել է 38.5մլրդ. ՀՀ դրամ, իսկ Հայաստան ուղարկված գումարները կազմել են 315.4մլրդ. ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են սպասարկվել նաև այնպիսի միջազգային վճարային գործիքներ, ինչպիսիք են միջազգային վճարային քարտերը և ճանապարհային չեկերը: Ներկայումս միջազգային կազմակերպությունների դեբետային և վարկային քարտերը կարող են կանխիկացվել բանկերում, ինչպես նաև դրանցով կարող են կատարվել անկանխիկ վճարումներ այդ քարտերը ընդունող մանրածախ առևտրի և սպասարկման կետերում: Սակայն ճանապարհային չեկերը ՀՀ-ում չեն ընդունվում որպես վճարամիջոց, այլ կարող են կանխիկացվել բանկերում: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից արտասահմանում արտարժույթով վճարումների իրականացմանը, ապա դրանք հիմնականում կատարվում են կանխիկ ձևով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բանկերից ձեռք բերված ճանապարհային չեկերով և միջազգային վճարային քարտերով:

4.4 Արտարժույթի առուվաճառքի վճարահաշվարկային համակարգեր

ՀՀ-ում արտարժույթի բորսայական առուվաճառքն իրականացվում է «Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող գործարքների վերջնահաշվարկների իրականացման համակարգով», որը ներդրվել է 2005թ. հոկտեմբերին:

Հայաստանի ֆոնդային բորսայում (այսուհետ՝ ՀՖԲ) արտարժույթի առևտրին կարող են մասնակցել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ առևտրային բանկերը, վարկային կազմակերպությունները և արժութային դիլերները, որոնք բորսայի հետ կնքել են արտարժույթի բորսայական առևտրին մասնակցության համաձայնագիրը:

ՀՖԲ-ում արտարժույթի առևտրի իրականացումը և կնքված գործարքների քլիրինգը և վերջնահաշվարկը կարգավորվում են «Հայաստանի ֆոնդային բորսայի արտարժույթի առևտրի կանոններ»-ով, «Հայաստանի ֆոնդային բորսայի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններ»-ով և ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆոնդային բորսայի և բորսայական առևտրի

մասնակիցների միջև կնքված «Հայաստանի ֆոնդային բորսայում կնքված արտարժույթի առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարման» պայմանագրով:

ՀՖԲ-ում կնքված արտարժույթի առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկները կատարվում են ՀՀ ԿԲ կողմից՝ բորսայական առևտրի մասնակիցների ՀՀ ԿԲ-ում վարվող դրամային և արտարժութային հաշիվներով: Վերջնահաշվարկները կատարվում են գործարքների կնքման օրը (T+0)՝ ՀՀ դրամի և արտարժույթի նախնական դեպոնացման հիման վրա:

Մինչև առևտրի սկիզբը բորսայական առևտրի մասնակիցները ՀՀ ԿԲ-ում Հայաստանի ֆոնդային բորսայի հատուկ քլիրինգային դրամային և արտարժութային հաշիվների վրա են դեպոնացնում անհրաժեշտ ծավալի դրամական միջոցներ, որի մասին տվյալները CBANet ցանցով տրամադրվում են Հայաստանի ֆոնդային բորսային: ՀՖԲ-ում արտարժույթի առուվաճառքի գործարքները կարող են կնքվել առևտրի մասնակիցների դեպոնացված միջոցների (ՀՀ դրամ և արտարժույթ) սահմաններում: Հայաստանի ֆոնդային բորսան, առևտրային նստաշրջանի ավարտից հետո, կնքված գործարքների վերաբերյալ տվյալների հիման վրա հաշվարկում է մասնակիցների՝ կնքված գործարքներից առաջացած իրավասությունների և պարտավորությունների զուտ դիրքերը (ՀՀ դրամի և յուրաքանչյուր արտարժույթի գծով), կազմում է համապատասխան վճարման հանձնարարականներ և CBANet ցանցով ներկայացնում է դրանք ՀՀ ԿԲ-ին: Միաժամանակ բորսայական առևտրի մասնակիցները ՀՀ ԿԲ են ներկայացնում տեղեկանք ըստ առանձին արժույթների ձևավորված դիրքերի վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ը, ֆոնդային բորսայի և առևտրի մասնակիցների կողմից ներկայացված տվյալների համապատասխանության դեպքում, իրականացնում է դրամային և արտարժութային վերջնահաշվարկները: Ներկայացված տվյալների անհամապատասխանության դեպքում համակարգում սահմանված են ճշգրտման ընթացակարգեր:

Հայաստանի ֆոնդային բորսայում արտարժույթի առևտուրը և կնքված գործարքների վերջնահաշվարկները կատարվում են ստորև բերված ընթացակարգերի և ժամկետների համաձայն՝

Հ/Հ	**Գործառույթը**	**Սահմանային ժամը**
1	Բորսայական առևտրի մասնակիցների կողմից վճարման հանձնարարականների ներկայացում ՀՀ ԿԲ	9.45
2	Բորսայական առևտրի մասնակիցների կողմից դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ հաշվետվության ներկայացում բորսա	10.00
3	ՀՀ ԿԲ-ի կողմից հանձնարարականների ստուգում, ամփոփում, Հայաստանի ֆոնդային բորսայի դրամական հաշիվներին միջոցների փոխանցում և փոխանցված միջոցների վերաբերյալ համապատասխան տեղեկանքի տրամադրում բորսային	10.15
4	Բորսայի կողմից ՀՀ ԿԲ-ին և առևտրի մասնակիցներին անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկացում	10.30
5	Սխալներ հայտնաբերելու դեպքում, ՀՀ ԿԲ-ի կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի դրամական հաշիվներին փոխանցված միջոցների վերաբերյալ ուղղված տեղեկանքի տրամադրում բորսային	10.50
6	Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից տվյալների ստուգում, ամփոփում և տվյալ առևտրային նստաշրջանում բորսայական առևտրի մասնակիցների ելակետային դիրքերի վերաբերյալ տվյալների մուտքագրում առևտրային համակարգ	11.00
7	Առևտրային նստաշրջան Ֆոնդային բորսայում	11.00-15.00
8	Ֆոնդային բորսայում առևտրի մասնակիցների վերջնական դիրքերի	15.30

	ամփոփում, ստուգում, դրանց հիման վրա վճարման հանձնարարականների կազմում և ներկայացում ՀՀ ԿԲ-ին	
9	Առևտրի մասնակիցների կողմից իրենց փոխանցվելիք գումարների վերաբերյալ տեղեկանքի կազմում և ներկայացում ՀՀ ԿԲ	16.00
10	ՀՀ ԿԲ-ի կողմից հանձնարարականների ստուգում, տվյալների համեմատում, անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում՝ տեղեկացում բորսային և առևտրի մասնակիցներին	16.45
11	անհամապատասխանությունների չհայտնաբերման դեպքում ՀՀ ԿԲ-ի կողմից առևտրի մասնակիցների հաշիվներին միջոցների հաշվեգրում	17.00
12	անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում ֆոնդային բորսայի կողմից ճշգրտված վճարային փաստաթղթերի ներկայացում ՀՀ ԿԲ և ՀՀ ԿԲ-ի կողմից վերջնահաշվարկների իրականացում	17.15-մինչև ՀՀ ԿԲ գործառնական օրվա փակումը

4.5 Հիմնական նոր նախագծեր

ՀՀ կենտրոնական բանկը շարունակական աշխատանքներ է տանում իր վճարահաշվարկային համակարգերը զարգացնելու ուղղությամբ՝ իր համակարգերի մասնակիցներին բազմազան ծառայություններ մատուցելու, համակարգերի արդյունավետությունը և անվտանգությունը բարձրացնելու համար:

Էլեկտրոնային վճարումների համակարգում մասնակիցների իրացվելիության արդյունավետ կառավարման մեխանիզմներ ներդնելու, համակարգում մասնակիցների կողմից իրենց վճարումների կատարման հերթականության կառավարման մեխանիզմներ ներդնելու նպատակով ՀՀ ԿԲ-ը 2005թ. մշակել է Էլեկտրոնային վճարումների համակարգի զարգացման հայեցակարգ: Ըստ հայեցակարգի նախատեսվում է, որ համակարգի հետագա զարգացման ուղղությունները հիմնված են լինելու հիբրիդ համակարգերի կառուցման գաղափարախոսության վրա:

2005թ. մշակվել և ներդրվել են ԷՎՀ–ի նոր ֆորմատներ, որոնք հնարավորություն կընձեռեն համակարգով կատարել նաև արտարժութային փոխանցումներ:

Նախատեսվում է նաև ծավալել աշխատանքներ Հայաստանի ֆոնդային բորսայում կնքված արտարժույթի առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկների իրականացման համակարգի հետագա զարգացման ուղղությամբ, որը կապահովի համակարգում իրականացվող վերջնահաշվարկների ավտոմատացումը և համակարգի գործունեության կատարելագործումը:

ԳԼՈՒԽ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐԸ, ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Գործիքները

5.1 Արժեթղթերի ձևերը

Հայաստանում արժեթղթերը կարող են թողարկվել փաստաթղթային և ոչ փաստաթղթային ձևով: Ընդ որում, հրապարակային վաճառվող արժեթղթերը չեն կարող թողարկվել փաստաթղթային ձևով:

5.2 Արժեթղթերի տիպերը

Ըստ արժեթղթերի սեփականատերերի իրավունքների իրականացման ձևի Հայաստանում արժեթղթերը դասակարգվում են 3 խմբի՝

1. անվանական,
2. ըստ ներկայացնողի,
3. օրդերային:

Հայաստանում կարող են թողարկվել և շրջանառվել բաժնետոմսեր, պարտատոմսեր, բանկային հավաստագրեր, չեկեր, մուրհակներ և այլ արժեթղթեր, որոնք այդպիսին են համարվում համաձայն ՀՀ օրենսդրության: Մասնավորապես՝

- Բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը: Բաժնետոմսերը համարվում են բաժնային արժեթղթեր, որոնք թողարկվում են բաժնետիրական ընկերությունների կողմից, և ՀՀ օրենսդրության համաձայն կարող են լինել միայն անվանական:
- Պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:
- Չեկ է համարվում այն արժեթուղթը, որը պարունակում է չեկ տվողի որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկ տրապետողին վճարել դրանում նշված գումարը: Չեկը իրենից ներկայացնում է վճարային-հաշվարկային փաստաթուղթ և իր էությամբ հանդիսանում է փոխանցելի մուրհակ, որի վճարողը բանկն է:
- Բանկային հավաստագիր (վկայագիր) է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է ավանդի գումարը և ավանդատուի իրավունքը՝ սահմանված ժամկետի ավարտից հետո հավաստագիր տված բանկում կամ այդ բանկի ցանկացած մասնաճյուղում ստանալ ավանդի գումարը և դրանից տոկոսներ: Բանկային հավաստագիրը կարող է լինել ըստ ներկայացնողի կամ անվանական:

- Մուրհակ է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է մուրհակ տվողի (հասարակ մուրհակ) կամ մուրհակում նշված այլ վճարողի (փոխանցելի մուրհակ) որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը՝ մուրհակում նախատեսված որոշակի գումար վճարել մուրհակը տիրապետողին (մուրհակի տիրոջը):

5.3 Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը

ՀՀ-ում կիրառվում է պետական, կորպորատիվ և ՀՀ ԿԲ արժեթղթերի տարբերակիչ ծածկագրման (ISIN) սեփական համակարգ, որը սակայն իր կառուցվածքով և երկարությամբ լիովին համապատասխանում է ISIN կոդերի սկզբունքներին (ISO 6166): Ծածկագիրը կազմված է 12 նիշից. առաջին 2 նիշը երկրի կոդն է, հաջորդ 9 նիշը տառաթվային է և հանդիսանում է հիմնական համարը, իսկ վերջին՝ 12-րդ, նիշը ստուգիչ նիշն է, որը հաշվարկվում է վերոնշյալ ստանդարտով սահմանված սկզբունքի համաձայն:

Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերը շնորհվում են հրապարակային վաճառվող արժեթղթերին, երբ դրանք գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկում կամ ֆոնդային բորսայում: Այդ ծածկագրերը շնորհվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Պետական արժեթղթերի ծածկագրերը տրվում են Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

5.4 Սեփականության իրավունքի փոխանցումը

Արժեթղթի նկատմամբ սեփականության իրավունքը ֆիքսվում է անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում: Ռեեստրը վարվում է.

- Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ հաշվետու թողարկողների համար
- թողարկողի կամ պահառուների կողմից՝ ոչ հաշվետու թողարկող բաժնետիրական ընկերությունների համար:

ՀՀ օրենսդրության համաձայն հրապարակային վաճառվող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է փոխանցված այն պահից, երբ Կենտրոնական դեպոզիտարիայում կամ պահառուի մոտ այն գրանցվում է գնորդի (կամ նրա անվանատիրոջ) անունով:

5.5 Արժեթղթերի գրավադրումը որպես ապահովության միջոց (երաշխիք)

Արժեթղթերը կարող են գրավադրվել որպես ապահովության միջոց համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի:

5.6 Կորած, գողացված կամ վերացված արժեթղթերի մշակումը

Հաշվի առնելով այն, որ հրապարակային վաճառվող արժեթղթերը կարող են թողարկվել բացառապես ոչ փաստաթղթային ձևով, ապա դրանց կորելու հավանականությունը բավականին ցածր է: Կենտրոնական դեպոզիտարան, որտեղ վարվում են հաշվետու թողարկողների ռեեստրը, ունի տեղեկատվության անվտանգությունն ապահովող տեխնիկական հագեցվածություն, և ըստ այդմ, արժեթղթերի կորած լինելու հավանականությունը հասցված է նվազագույնի: Բացի այդ, Կենտրոնական դեպոզիտարայում պահվում են փոխանցումների համար հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերը, և արժեթղթերը գողացված լինելու դեպքում տուժող կողմը ՀՀ

օրենսդրությամբ նախատեսված կարգով կարող է վերականգնել դրանց նկատմամբ իր իրավունքը:

5.7 Պահառուների նորմատիվ իրավական դաշտը

Պահառուների գործունեությունը կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 06.02.2007թ. թիվ 33Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեություն» կանոնակարգ 33-ով: Սույն կանոնոկարգը սահմանում է արժեթղթերի պահառության գործունեության իրականացման կարգը, արժեթղթերի հաշվառման ընդհանուր սկզբունքները և պահառուի տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող պահանջները:

Շուկայական կառուցվածքը և համակարգերը

5.8 ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկա

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես ՀՀ կառավարության ֆինանսական գործակալ և իրականացնում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկումը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից թողարկող ՀՀ պետական պարտատոմսերն, ըստ շրջանառության ժամկետի, լինում են՝

- կարճաժամկետ՝ շրջանառության ժամկետը 7 օրից մինչև 1 տարի,
- միջնաժամկետ՝ շրջանառության ժամկետը 15 ամսից մինչև 5 տարի,
- երկարաժամկետ՝ շրջանառության ժամկետը 6-30 տարի:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից թողարկված պարտատոմսերը առաջնային շուկայից կարող են ձեռք բերել Գործակալները, Դիլերները և Գանձապետական պահառուն: Գործակալները հանդիսանում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գործընկերները ներքին պետական պարտքի կառավարման գործում, որոնք որոշակի արտոնությունների դիմաց կրում են հստակ սահմանված պարտավորություններ: Դիլերները առաջնային տեղաբաշխմանը մասնակցում են սահմանափակ իրավունքներով: Գանձապետական պահառու համակարգի միջոցով ներդրողները կարող են ձեռք բերել միայն ՀՀ պետական կարճաժամկետ պարտատոմսեր:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իրավասու է հետ գնել իր կողմից թողարկված պարտատոմսերը նախօրոք հայտարարված եկամտաբերությամբ, ինչպես նաև կարող է իրականացնել չտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխում: 2006թ հոկտեմբեր ամսից սկսած ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից թողարկվում են ՀՀ պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք վաճառվում են միայն ֆիզիկական անձանց: Խնայողական պարտատոմսերը թողարկվում են 3 ամսից մինչև 25 տարի մարման ժամկետով: Սկսած 2006թ.-ից ՀՀ կենտրոնական բանկի կողմից ռեպո գործարքներ իրականացնելիս ռեպո գործարքի առարկա հանդիսանում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոսերը, որոնք գրանցված են ՀՀ կենտրոնական բանկում: ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումը

իրականացվում է արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման էլեկտրոնային համակարգի միջոցով:

Ելնելով առավել արդյունավետ դրամավարկային քաղաքականություն իրականացնելու խնդիրներից ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվում են ՀՀ պետական կարճաժամկետ զեղչատոկոսային պարտատոմսեր՝ 3 և 6 ամիս մարման ժամկետով:

2004թ., 2005թ., 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված և շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի վերաբերյալ

Ներքին պետական պարտքը (մլն. դրամ)	2004		2005		2006	
	տեղաբաշխված պարտատոմսեր	Ներքին պետական պարտքը	տեղաբաշխված պարտատոմսեր	Ներքին պետական պարտքը	տեղաբաշխված պարտատոմսեր	Ներքին պետական պարտքը
պետական կարճաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	13 200.00	9 200.00	21 977.50	6 500.00	9 336.62	7 699.64
պետական միջին ժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	28 000.00	34 506.00	17 434.00	36 487.49	16 577.00	38 087.77
պետական երկարաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	2 700.00	2 700.00	5 660.00	8 360	6 340.00	12 175.36
Ընդամենը	43 900.00	46 406.1	45 071.5	51 347.5	32 253.62	57 962.77

5.9 ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկա

ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնություններ իրականացվում են առք ու վաճառքի պայմանագրերի կնքման միջոցով ՀՀ օրենսդրությամբ թույլատրված ձևերով: Պարտատոմսերի երկրորդային շուկայի մասնակիցներն են՝ ներդրողները, առևտրային բանկերը, գործակալները, դիլերները, ինչպես նաև ՀՀ օրենքով սահմանված բրոքերային, դիլերային հավատարմագրային կառավարման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված անձինք:

ՀՀ կենտրոնական բանկը պարտավոր է ՀՀ Պարտատոմսերի առք ու վաճառքի գործառնություններն իրականացնել Գործակալների հետ, բացառությամբ ռեպո/հակադարձ ռեպո գործառնությունների, որոնք կարող են իրականացվել նաև ՀՀ այլ բանկերի հետ:

ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում կատարված գործառնություններ

	2004	2005	2006
Գործարքների ընդհանուր ծավալը (մլն. դրամ)	45 716.10	77 200.90	66 723.7
Գործարքների միջին օրական ծավալը (մլն. դրամ)	180.7	303.9	263.7
Գործարքների միջին կշռված եկամտաբերությունը	6.6388%	5.4325%	6.2478%
Գործարքների քանակը	734	981	727

5.10 Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվող գործարքներ

Ներկայումս Հայաստանի ֆոնդային բորսայում ՀՀ պետական պարտատոմսերի առուվաճառքի բորսայական առևտրի միջոցով գործառնություններ չեն իրականացվում:

5.11 ՀՀ պետական պարտատոմսերի շուկային զարգացման միտումները

ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից իրականացվում են համապատասխան աշխատանքներ ՀՀ պետական պարտատոմսերի առուվաճառքի բորսայական առևտրի կազմակերպման ուղղությամբ, որը կգործի 2007թ.-ի դեկտեմբեր ամսից: Հայաստանի ֆոնդային բորսայում ՀՀ պետական պարտատոմսերի առուվաճառքի բորսայական առևտրի մասնակիցներն են՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք:

Նախատեսվում է վերակազմավորել առաջնային շուկան՝ թողարկելով նոր տեսակի ուղենշային պարտատոմսեր 3, 5, 10 և 20 տարի մարման ժամկետներով: Առաջնային շուկայից պարտատոմսեր կարող են ձեռք բերել Գործակալները, որոնց գործունեությունը կնպաստի պարտատոմսերի երկրորդային շուկայի աշխուժացմանը, որը և կապահովի պետական պարտատոմսերի առավել իրացվելի շուկա:

ԳԼՈՒԽ 6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

6.1 Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ (ՊԱՀՀՀ)

ՀՀ օրենսդրության համաձայն Կենտրոնական բանկը հանդիսանում է Կառավարության լիազոր մարմնի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման ֆինանսական գործակալ: Պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաների գործարքները սպասարկելու նպատակով Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Կենտրոնական Պահառու, իրականացնում է համապատասխան գործառնությունների հաշվառումը, գործարքներից բխող իրավունքների գրանցումը, վերջնահաշվարկը: Կենտրոնական բանկը կազմակերպում և իրականացնում է պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդները, տոկոսային եկամտի վճարումները, ինչպես նաև Պարտատոմսերի մարումները և հետգնումը:

Վերը նշված գործառույթների հուսալի, անվտանգ և արագ կատարումը ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով պետական պարտատոմսերի շուկայի զարգացման միտումները՝ 1998-1999թթ. Կենտրոնական բանկում նախագծվեց և 2000թ ներդրվեց Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման ավտոմատացված համակարգը, որը ապահովում էր՝

- առաջնային տեղաբաշխման հայտերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը և ավտոմատ մշակումը,
- առաջնային տեղաբաշխման աճուրդի ավտոմատ եղանակով իրականացումը, դեպո և դրամական հաշվարկների ավտոմատ եղանակով ապահովումը,
- արժեթղթերի մարման գործընթացի ավտոմատացված եղանակով իրականացումը,
- երկրորդային շուկայի գործարքների և գրավադրման գործառնությունների հետ կապված վերջնահաշվարկների իրականացումը առանց «առաքում-վճարման դիմաց» (DVP) սկզբունքի ապահովման՝ ՊԱՀՀՀ մասնակիցների կողմից ներկայացված թղթային դեպո հանձնարարականների հիման վրա:

2004թ. ՊԱՀՀՀ-ում ներդրվեց երկրորդային շուկայի մոդուլը, որն ապահովեց երկրորդային շուկայի գործարքների և գրավադրման գործառնությունների հետ կապված վերջնահաշվարկների իրականացումը «առաքում-վճարման դիմաց» (DVP) սկզբունքով՝ ՊԱՀՀՀ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային դեպո հանձնարարականների հիման վրա (տես՝ նկար 2):

ՀՀ ԿԲ-ն հանդիսանում է ՊԱՀՀՀ-ի սեփականատեր և օպերատոր:

2006թ. ընթացքում ՊԱՀՀՀ-ի միջոցով Պետական (Գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբախշման դիմաց բանկերի կողմից կատարվել է 32475 մլն. ՀՀ դրամի փոխանցում, ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբախշման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 68454 մլն. ՀՀ դրամի փոխանցում:, Նշված պարտատոմսերի մարման ժամանակ իրականացվել է համապատասխանաբար՝ 28951 մլն. ՀՀ դրամի և 52395 մլն. ՀՀ դրամի փոխանցում:


2006թ. ընթացքում Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից համակարգի միջոցով երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված գործառնությունները կազմել են 374970 մլն. ՀՀ դրամ՝ անվանական արժեքով, (այդ թվում՝ առք ու վաճառք- 244033 մլն. ՀՀ դրամ ծավալով, ազատ առաքում- 130937 մլն. ՀՀ դրամ ծավալով): Ընդ որում գրավադրման հետ կապված գործառնությունների ծավալը կազմել է՝ 22102 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով: DVP-սկզբունքով կատարված առք ու վաճառքի 2022 գործառնությունների դիմաց վճարվել է 222990 մլն. ՀՀ դրամ:

6.1.1 Օրենսդրական դաշտը և կարգավորումը

ՊԱՀՀՀ-ի գործունեությունը կարգավորվում է պետական պարտատոմսերի տեղաբաշխումը, շրջանառությունը և մարումը կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կանոններով» և «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կողավորման» կարգով, ինչպես նաև «Պետական արժեթղթերով գործառնությունների հետ կապված հաղորդագրությունների էլեկտրոնային ֆորմատները» սահմանող որոշմամբ:

Նկար 2

Դեպո և դրամական հաշվարկների կատարումը Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով (ՊԱՀՀՀ)



(1) – դեպո հանձնարարական
(2) - առաքման անդորրագիր
(3) - առաքողի և ստացողի դեպո հանձնարարականներ
(4’) –կատարման մերժում
(5’) - կատարման մերժում
(4’’) - վճարման հաղորդագրություն
(5’’) - վճարման հաղորդագրություն (վճարման կատարման հաստատում)
(6’’) - կատարման հաստատում
(7’’) - կատարման հաստատում

6.1.2 Համակարգի մասնակիցները

ՊԱՀՀՀ-ում մասնակցության նախապայման են հանդիսանում՝ ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով բանկային (թղթակցային) հաշվի և դեպո հաշվի առկայությունը, CBANet միջբանկային համակարգչային ցանցին անդամակցումը:

Կենտրոնական բանկի Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցներ են հանդիսանում պետական պարտատոմսերի Դիլեր կամ Գործակալ հանդիսացող բանկ և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունները, Գանձապետական Պահառուն, Գանձապետական պարտատոմսերի թողարկումն իրականացնող ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ ԿԲ-ը, ինչպես նաև Գործակալ/Դիլեր չհանդիսացող առևտրային բանկերը:

Գանձապետական պարտատոմսերի Գործակալ/Դիլեր կարող են լինել ՀՀ առևտրային բանկերը, վարկային կազմակերպությունները և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունները (արժեթղթերի շուկայի բրոքերային կամ դիլերային ընկերությունները), որոնք ՀՀ ԿԲ-ի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ կնքել են համապատասխան պայմանագիր, համաձայն որի նրանք կարող են սահմանված պայմաններով մասնակցել Գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին և հանդիսանալ Գանձապետական պարտատոմսերի ենթապահառուներ: ՀՀ ԿԲ-ի պարտատոմսերի Դիլեր կարող են լինել ՀՀ առևտրային բանկերը, որոնք ՀՀ ԿԲ-ի հետ կնքել են համապատասխան պայմանագիր, համաձայն որի նրանք կարող են սահմանված պայմաններով մասնակցել ՀՀ ԿԲ-ի պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին և հանդիսանալ ՀՀ ԿԲ-ի պարտատոմսերի ենթապահառուներ:

«Գանձապետական Պահառուն» ներդրողներին Գանձապետական պարտատոմսերի անմիջապես (առանց միջնորդների) վաճառքի, վերջիններիս պատկանող պարտատոմսերի հաշվառման և սպասարկման համակարգ է, որի գործառույթները իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հատուկ կառուցվածքային ստորաբաժանումը: Գանձապետական պահառու համակարգի միջոցով առաջնային աճուրդների ժամանակ կարող են ձեռք բերվել Գանձապետական պարտատոմսեր միայն ոչ մրցակցային հայտերով: Այդ համակարգում հաշվառվող Գանձապետական պարտատոմսերով երկրորդային շուկայում գործարքներ չեն կարող կնքվել, դրանք պահվում են Գանձապետական պահառու համակարգում ներդրողների դեպո հաշիվներում մինչև մարումը:

2006թ. տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգն ունեցել է 26 մասնակից, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը (Կենտրոնական պահառու և որպես թողարկող՝ ԿԲ արժեթղթերի համար), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկող՝ պետական արժեթղթերի համար), Գանձապետական պահառուն,, ՀՀ տարածքում գործող 21 բանկեր (7 գործակալ և 14 դիլեր բանկեր) Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը 7 մեկ ոչ բանկ դիլեր:

6.1.3 Համակարգի գործունեությունը

Համակարգն ապահովում է հետևյալ գործառույթների կատարումը՝

- պարտատոմսերի թողարկման գլոբալ հավաստագրերի հաշվառումը,

- Համակարգի մասնակիցների դեպո հաշիվների վարումը՝ ապահովելով մասնակիցների կողմից պարտատոմսերով իրականացված գործարքներից բխող իրավունքների գրանցումը, փոխանցումը, սահմանափակումը,
- պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների իրականացումը,
- պարտատոմսերով առուվաճառքի, ինչպես նաև ռեպո, հակադարձ ռեպո գործարքների դեպո և դրամական հաշվարկների իրականացումը «առաքում վճարման դիմաց» սկզբունքով,
- պարտատոմսերի գրավադրմամբ վարկերի տրամադրման/վերադարձի գործարքների հետ կապված դեպո և դրամական հաշվարկների իրականացումը՝ «գրավադրում-վարկի դիմաց» և «գրավից ազատում վարկի վերադարձի դիմաց» սկզբունքով,
- պարտատոմսերի մարումը (մասնակի մարումը), արժեկտրոնային եկամտի հաշվարկումը և վճարումը Համակարգի մասնակիցներին:

Համակարգը գործում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

- ինչպես դեպո հաշվարկները, այնպես էլ փողային հաշվարկները կատարվում են համախառն եղանակով՝ ըստ յուրաքանչյուր կարգադրության առանձին, հաշվարկների համար նախատեսված գործառնական ժամերի ընթացքում,
- համակարգ մուտքագրված կարգադրությունները կատարվում են ըստ դրանց՝ համակարգ մուտքագրման հերթականության (կարգադրությունների կատարման «ՖԻՖՕ» սկզբունք),
- եթե համակարգի կողմից ստացված կարգադրությունը, պարտատոմսերի փոխանցումից բացի, նախատեսում է նաև փողային փոխանցում, ապա փողային և դեպո հաշվարկները կատարվում են միաժամանակ «առաքում վճարման դիմաց» սկզբունքով,
- Համակարգի միջոցով վերջնահաշվարկները իրականացվում են Համակարգում վարվող մասնակիցների դեպո հաշիվների միջոցով (պարտատոմսերով հաշվարկների համար), Կենտրոնական բանկում վարվող մասնակիցների՝ ՀՀ դրամով հաշիվների միջոցով (փողային հաշվարկների համար) հաշիվների մնացորդների սահմաններում: Առևտրային բանկ հանդիսացող մասնակիցների փողային հաշվարկները կատարվում են վերջիններիս՝ Կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշիվներով, այլ մասնակիցների փողային հաշվարկները կատարվում են հատուկ դրամային հաշիվներով, որոնք բացվում են Կենտրոնական բանկում մասնակիցների անունով համաձայն համապատասխան պայմանագրերի և նախատեսված են բացառապես պարտատոմսերով գործառնությունների հաշվարկների համար:
- Համակարգում պարտատոմսերով գործառնությունների կատարման օր է համարվում համապատասխան կարգադրությունների ներկայացման օրը, ընդ որում, եթե կարգադրությունը ներկայացվել է Համակարգի կարգադրությունների ընդունման համար սահմանված գործառնական ժամերից դուրս, ապա այն համարվում է ներկայացված հաջորդ աշխատանքային օրը,
- Համակարգում նախատեսված չեն կարգադրությունների հերթերի վարման և կառավարման մեխանիզմներ՝ կարգադրությունը կատարելու համար համապատասխան դեպո հաշվում պարտատոմսերի բավարար ծավալի բացակայության և/կամ դրամային հաշվում բավարար գումարի բացակայության դեպքում (կարգադրությունը դրամական միջոցների փոխանցում

նախատեսած լինելու դեպքում) կարգադրությունը առանց կատարման մերժվում է, և մերժված կարգադրությունը կատարելու համար նախաձեռնողի կողմից այն նորից պետք է մուտքագրվի Համակարգ որպես նոր կարգադրություն,

- Համակարգի կողմից կատարված հաշվարկները վերջնական են և անվերադարձելի Համակարգում վարվող դեպո հաշիվներով կատարելու պահից:

ՊԱՀՀՀ-ում «առաքում-վճարման դիմաց» սկզբունքով վերջնահաշվարկներն իրականացվում են ստորև նշված ընթացակարգերի համաձայն:

Պարտատոմսերի վաճառող և գնորդ հանդիսացող ՊԱՀՀՀ-ի մասնակիցները ՀՀ ԿԲ-ի Էլեկտրոնային առաքման համակարգի միջոցով ՀՀ ԿԲ են ներկայացնում համապատասխան ֆորմատներով դեպո հանձնարարականներ, որոնք ավտոմատ եղանակով մուտքագրվում են ՊԱՀՀՀ: Յուրաքանչյուր դեպո հանձնարարականի մուտքագրումից հետո համակարգում իրականացվում է դրա զույգ հանդիսացող դեպո հանձնարարականի փնտրումը (matching): Զույգը գտնելուց հետո վաճառող մասնակցի դեպո հաշվում սառեցվում է համապատասխան արժեթղթերի ծավալը, որից հետո ՊԱՀՀՀ-ում ձևավորվում է համապատասխան վճարման հանձնարարական, որը ավտոմատ եղանակով առաքվում է ՀՀ ԿԲ-ի «Գործառնական օր» համակարգ, որում դեբետագրվում է գնորդ մասնակցի դրամային հաշիվը և կրեդիտագրվում է վաճառող մասնակցի դրամային հաշիվը: Դրամական հաշվարկները կատարվելուց հետո «Գործառնական օր» համակարգից ՊԱՀՀՀ է ուղարկվում դրամական հաշվարկի կատարման հաստատումը, որի հիման վրա ՊԱՀՀՀ-ում դեբետագրվում է վաճառող և կրեդիտագրվում է գնորդ մասնակիցների դեպո հաշիվները գնվող պարտատոմսերի ծավալով: Դեպո հաշվարկները ավարտելուց հետո ՊԱՀՀՀ-ի կողմից գնորդ և վաճառող մասնակիցներին ուղարկվում է վերջնահաշվարկի կատարման հաստատում: Վերջնահաշվարկի տարբեր պատճառներով չկատարման դեպքում (վաճառող մասնակցի դեպո հաշվում բավարար ծավալի պարտատոմսերի բացակայություն, գնորդ մասնակցի դրամային հաշվում բավարար դրամական միջոցների բացակայություն, և այլն) մասնակիցները ստանում են մերժման հաղորդագրություն: Զույգ չգտած դեպո հանձնարարականը ՊԱՀՀՀ-ի գործառնական օրը փակելուց առաջ մերժվում է:

Դեպո հանձնարարականների, առաջնային տեղաբաշխման աճուրդների հայտերի, քաղվածքների, գործարքների հաստատումների և այլ ֆինանսական և տեղեկատվական փաստաթղթերը ներկայացվում են համապատասխան ֆորմատներով էլեկտրոնային եղանակով, ՀՀ կենտրոնական բանկի CBANET միջբանկային համակարգչային ցանցի միջոցով՝ կիրառելով անհրաժեշտ պաշտպանական մեխանիզմները (տեղեկատվության ծածկագրում, էլեկտրոնային ստորագրության, պաշտպանական բանալիների կիրառում):

Համակարգի առանձին մասնակցի մոտ տեխնիկական խնդիրների առաջացման դեպքում, որի հետևանքով նա չի կարող ուղարկել և(կամ) ստանալ ֆինանսական և տեղեկատվական փաստաթղթեր էլեկտրոնային եղանակով, նախատեսված են պահուստային արարողակարգեր, համաձայն որոնց մասնակցի կողմից դեպո հանձնարարականները ներկայացվում են թղթային եղանակով և մուտքագրվում են ՊԱՀՀՀ՝ ՀՀ ԿԲ-ի լիազոր աշխատակցի կողմից. միևնույն ժամանակ համակարգի մասնակցին կարող է տրամադրվել վերջինիս ուղղված տեղեկատվության տպված և հաստատված թղթային օրինակը:

Համակարգը ապահովում է պետական պարտատոմսերով կնքված գործարքների կատարումը հաշված րոպեների ընթացքում՝ ապահովելով պարտատոմսերի և դրամական հաշվարկների միաժամանակ կատարումը, ինչը բացառում է կոնտրպարտնյորի պարտավորության չկատարման հետ կապված ռիսկերը:

ՊԱՀՀՀ-ի աշխատանքը բաղկացած է հետևյալ փուլերից՝

1. 9.00 –9.30 համակարգի գործառնական օրվա բացում
2. 9.30 – 16.30 բոլոր տեսակի գործառնությունների իրականացում
3. պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդի անցկացման օրերին մինչև 10.30 – հայտերի ընդունում

10.30-ին հայտերի ընդունման դադարում

4. պարտատոմսերի մարման/մասնակի մարման օրերին մինչև 12.30 – մարում
5. 16.30– մուտքի փակում (դադարեցվում է էլեկտրոնային հաղորդագրությունների ընդունումը Էլեկտրոնային առաքման համակարգից և թղթային փաստաթղթերի ընդունումը)
6. 17.00 - թղթային փաստաթղթերի մուտքագրման ավարտ
7. 16.30 – 17.30 տեղեկանքների, թղթային ծանուցող անդորրագրերի (հաստատումների) գործառնությունը հավաստող կարգադրությունների օրինակների տպում
8. 17.30 – 18.00 համակարգի գործառնական օրվա փակում և դեպո հաշիվների քաղվածքների ձևավորում և ուղարկում
9. 18.00 - 19.00- արխիվների ձևավորում, ծրագրային և տվյալների շտեմարանների սպասարկման այլ աշխատանքներ:

6.2 Կորպորատիվ արժեթղթերի հաշվարկա-քլիրինգային համակարգեր

6.2.1 Կազմակերպումը և ինստիտուտները

ՀԿԴ-ում ներդրված հաշվարկաքլիրինգային համակարգի միջոցով բորսայական գործարքների քլիրինգը և վերջնահաշվարկը իրականացվում է կենտրոնացված (ըստ պարտավորությունների որոշման, հաշվանցման և իրականացման հատկանիշի) և ամբողջական ապահովվածության (ըստ արժեթղթերի և դրամական միջոցների հաշվեգրման հատկանիշի) եղանակով՝ զուտացման կիրառմամբ, իսկ հաշվարկային բանկի գործառույթները վերապահվել է ՀՀ կենտրոնական բանկին: ՀԿԴ-ի կողմից հաշվարկաքլիրինգային գործողություններն իրականացվում են բորսայական գործարքների կնքման նույն օրը: Օրենքի համաձայն բորսայական գործարքների քլիրինգը կարող է իրականացվել նաև ֆոնդային բորսայի կողմից: Ընդ որում, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան պայմանագրային հիմունքներով իրավասու է իրականացնել նաև ֆոնդային բորսայում արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշում և հաշվանցում (զուտացում): Ներկայումս քլիրինգն իրականացվում է բորսայի կողմից, իսկ արժեթղթերի վերջնահաշվարկը՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

6.2.2 Արժեթղթերի գրանցումը և պահառության գործընթացներ

Արժեթղթերով գործարքների ժամանակ սեփականության իրավունքը համարվում է փոխանցված այն պահից, երբ Կենտրոնական դեպոզիտարիայում կամ պահառուի մոտ այն գրանցվում է գնորդի (կամ նրա անվանատիրոջ) անունով: Հայաստանում պահառության համակարգը երկմակարդակ է. առաջին մակարդակը Կենտրոնական դեպոզիտարիան է, իսկ երկրորդ մակարդակը Կենտրոնական դեպոզիտարիայի ենթապահառու հանդիսացող պահառուները: Կենտրոնական դեպոզիտարիայում նորկայումս կարող են վարվել ինչպես վերջնական ներդրողների, այնպես էլ ենթապահառուների սեփական արժեթղթերի և հաճախորդների արժեթղթերի հաշիվները: Ընդ որում, վերջինս հանդիսանում է անվանատիրոջ հաշիվ: Օրենքի համաձայն յուրաքանչյուր պահառու հանդիսանում է

Կենտրոնական դեպոզիտարիայի ենթապահառու: Պահառուները պետք է տեխնիկապես ի վիճակի լինեն տեղեկատվություն փոխանակել Կենտրոնական դեպոզիտարիայի հետ՝ ունենալով “link agreement”:

6.2.3 Արժեթղթերի քլիրինգի և վերջնահաշվարկի գործընթացներ

Հայաստանում կորպորատիվ արժեթղթերի միակ կազմակերպված շուկան ֆոնդային բորսան է, որտեղ իրականացվում է անանուն երկկողմանի հանդիպակաց հայտերի բավարարմամբ բորսայական առևտուր: Առևտրի մասնակիցները (մասնագիտացված անձինք, բանկերը) առևտրային համակարգ են մուտքագրում արժեթղթերի գնման/վաճառքի հայտեր, և եթե հայտում ներառվող պայմանները բավարավում են, տեղի է ունենում գործարքի կնքում: Ընդ որում, յուրաքանչյուր առևտրի մասնակից տեղյակ չէ, թե բացի իրենից էլ որ առևտրի մասնակիցներն են հայտեր մուտքագրել առևտրային համակարգ:

Բորսայում իրականացվում է միայն արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ առևտուր, որի հիմքում ընկած է ամբողջական ապահովվածությամբ վերջնահաշվարկի իրականացումը: Սրա էությունն այն է, որ առևտրի մասնակիցները իրավունք ունեն ֆոնդային բորսայում գործարքներ կնքել միայն արժեթղթերի և դրամական միջոցների այնպիսի քանակության սահմաններում, որոնք նրանց կողմից նախապես (մինչև ֆոնդային բորսայի տվյալ առևտրային նստաշրջանի սկիզբը) հաշվեգրվել են համապատասխանաբար Կենտրոնական բանկում Դեպոզիտարիայի համար բացված առևտրային հաշիվներին կամ արգելադրված են Դեպոզիտարիայում բացված անձնական հաշիվներում:

Արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ բորսայական առևտուրը իրականացվում է հետևյալ մեխանիզմով՝

- արժեթղթերի շուկայի այն մասնակիցը (բանկը, մասնագիտացված անձը), որը ցանկանում է արժեթղթեր գնել /վաճառել ֆոնդային բորսայում իր կամ իր հաճախորդի անունից և հաշվին պետք է նախապես դրամական միջոցներ/ արժեթղթեր դեպոնացնի (արգելադրի) համապատասխանաբար Կենտրոնական բանկում բացված դեպոզիտարիայի դրամի առևտրային հաշվին և դեպոզիտարիայի անունով դեպոզիտարիայում բացված տեխնիկական հաշվին:
- առևտրի մասնակիցը և Կենտրոնական բանկը բորսայում առևտրային նստարջանի սկսվելուց առաջ Կենտրոնական դեպոզիտարիային հաշվետվություն են ներկայացնում առևտրի մասնակցի կողմից Կենտրոնական բանկում դեպոզիտարիայի դրամային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ:
- Կենտրոնական դեպոզիտարիան համեմատում է ստացված հաշվետվությունները
- առևտրային նստաշրջանից առաջ Դեպոզիտարիան հաշվետվություն է տրամադրում ֆոնդային բորսային առևտրի մասնակիցների կողմից դեպոզիտարիայի դրամի առևտրային հաշվին փոխանցված միջոցների և արգելադրված արժեթղթերի վերաբերյալ, որի հիման վրա բորսան ճնավորում է առևտրի մասնակիցների արժեթղթերի և դրամական միջոցների սկզբնական մնացորդները (այսինքն՝ յուրաքանչյուր ատևտրի մասնակցի արժեթղթերի և դրամական միջոցների քանակը, որի սահմաններում առևտրի մասնակիցը կարող է գործարքներ իրականացնել)

- առևտրային նստաշրջանի ավարտից հետո բորսան հաշվետվություն է ուղարկում դեպոզիտարիային տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների արդյունքների վերաբերյալ
- բորսայի կողմից դեպոզիտարիային ուղարկված հաշվետվությունը հիմք է հանդիսանում դեպոզիտարիայի կողմից քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար որից հետո Դեպոզիտարիան քաղվածքներ է տրամադրում առևտրի մասնակիցներին:

6.2.4 Երաշխիքային սխեմաներ

Ներկայումս արժեթղթերով բորսայական առևտուրն իրականացվում է արժեթղթերի և դրամական միջոցների 100 % նախնական դեպոնացմամբ, և ըստ այդմ որևէ այլ երաշխիքային սխեմային անհրաժեշտություն ներկայումս չկա:

6.2.5 Արժեթղթերով փոխառություններ

Քլիրինգի և վերջնահաշվարկի նպատակով ներկայումս արժեթղթերով փոխառություններ չեն տրվում:

6.2.6 Ածանցյալների քլիրինգ և վերջնահաշվարկ

Բորսայական ածանցյալներով գործարքներ ներկայումս չեն կնքվում:

6.2.7 Մշակման և ներդրման փուլում գտնվող հիմնական նախագծերը՝ կապված պահառուների, քլիրինգի և վերջնահաշվարկի հետ

Ներկայումս նախատեսվում է հիմքեր ստեղծել անցնելու առանց արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ, երաշխիքային հիմնադրամների օգտագործմամբ T+3 վերջնահաշվարկի ցիկլով արժեթղթերով առևտրի: